

# ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

## ՀԱՅԱԳԻՏԱԱԿՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Թի 7—9

ՅՈՒԼԻՍ—ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԿԴ. ՏԱՐԻ 1950

### ԵԼԻՇԷ ՎԵՐԴԵՊԵՏ

#### ԵՒ ԻՒՐ ՊՈՏՄՈՒԹԻՒՆ ՀՈՅՈՑ ՊՈՏԵՐԱԶՄԻՆ ՔՆՆԵԿԵՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Պարագաներու բերամաք ահա 12 տարի ետքը կու գամ շարունակելու Ուսումնասիրութիւնս, գոր սկսած էի 1931ին: Վերջին անգամ նկատի առած էի 571—578 տարիներու պատերազմական դէպքերը (§ 54—55, Հանդ. Ամս. 1937, էջ 533—558), ազգային եւ օտար աղբիւրներու համաձայն: Առաջիկայ 56—69 գլուխներու մէջ ցոյց պիտի տամ այդ շրջանի (յատկապէս 572—577 տարիներու) անցներու հետքերը Եղիշէի Պատմութեան մէջ: Ապա միայն քննութեան պիտի առնեմ Եղիշէի անձն, ժամանակն եւ մատենագրութիւնը: Կը մնայ ինձ այնուհետեւ անդրադառնալ Ուսումնասիրութեան շուրջ եղած քննադատութիւններու, ինչպէս նաեւ ինքնաքննադատութեան:

57. ԹՈՂՈՒԹԵԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Հայաստանի ապստամբութիւնը 571 Վեար. 3 եւ Սուրէն մարգարանի սպանութիւնը, ինչպէս նաեւ պարսիկ բանակին բնաջնջումը տեղեկացնելու համար սասանեան գործող արքային, Սոսրով Ա. Անուշըրուանին, բարեւոյց համարած էին հայ նախարարները պատգամաւորութիւն մ'ուղարկելու: Ասոր նպատակն էր ապստամբութեան զրոյսպատճառ մարգարանին անխոհեմ ընթացքը ցոյց տալ եւ յայտնել Հայոց հպատակութիւնը թագաւորին. կը յուսային այստակութիւնը թագաւորին. կը յուսային այստակութիւնը թագաւորին: Հասաւ քիչ յետոյ նաեւ պարսիկ հրեշտակը, զեկուցանելու արքային Հայաստանի անցուղարձերը:

Իրաց պատկերը ճշգիւ դժելու համար հարկէ մէջ պիտի գտնուի յառաջ բերելու տեղիք մը, զոր կանխաւ տուած էի § 53ի վերջաւորութեան:

Թագաւորը կը գտնուէր տակաւին իր ձմերոցի մէջ (յԱպարաշխարհ):

«Արդ երթեալ այրն ի տեղի ձմերոցին՝ պատմեաց զայս ամենայն յականջս թագաւորին (Եւ) շարժեալ զողացոյց (զնա). որ եւ յամենայն գորութենէն պակասեալ գտաւ. մանաւանդ զի յԱրեւելից պատերազմէն կորակոր եւ ոչ բարձրագլուխ էր դարձեալ» (62—63): Այս կը պատահի 571 Վեար.— մարտ:

«Իրրեւ ստուգեալ հաստատեաց (թագաւորն) ի վերջին հրեշտակէն, որ եհասաւ առ նա, զամենայն փնասս իւրոյ զործոյն զխորհրդակցօքն արկանէր. եւ անդէն շիջանէր ի բազմաբոց բորբոքմանէն: Քանզի խցաւ բերան շար խրատուացն, որ անգաղար յորդորէին զնա ի գործ գառնութեանն: Սոնարհեցաւ ի բարձր հպարտութենէն... լոցոյց զմուկնաբար գոչումն: Եւ որ մեծարբարաւ ձայնիւ որոտայր եւ եւս ահագին հրամանօքն զհեռաւորս եւ զմերձաւորս առ հասարակ զողացուցանէր, սկսաւ քաղցր եւ աղերս բանիւք խօսել ընդ ամենեսեան եւ ասել. Զի՞նչ փնասս զործեալ էր (իմ) եւ զո՞ր յանցանս յանցուցեալ էր կամ առ ազգս կամ առ լեզուս կամ առ անձն իւրաքանչիւր... (տես § 22): Տեսանէք զի ետուք ինձ զործել զոր ինչ ոչ կամէի եւ եղեն ինձ մեծամեծ փնասք ի սահմանս ի մէջ երկուց անհաշտ թշնամեացն. եւ մեք դեռ ի հեռաւոր ճանապարհի (եմք) եւ ոչ մի ինչ գործ պատերազմիս ի գլուխ երթեալ՝ յարուցէք ի վերայ իմ պատերազմ, որոյ չարագոյնս եւս լինելոց է կատարած իւր քան զարտաքին թշնամեացն: Զայս ամենայն եւ առաւել քան զսոյնս խօսէր ընդ ամենայն աւագանին եւ զփնասս յանցանացն արկանէր զմոգօքն»:

«Եւ վզուրկքն եւ պատուական նախարարքն, որ նստէին յատենին եւ ունկն դնէին յեղջեղուկ լեզուի նորա, ամաչեցեալ կորանային եւ ընդ երկիր պշտուին եւ զգլուխս ի վեր ոչ կարէին համբառնալ: Բայց սակաւք

(Զ. սակաւուք. խմացիր՝ սակաւ ոմանք)
ի նոցանէ գմբխան հաճելով ասէին. Այո՛,
քաջ եւ մեծ արքայ, որ այդպէս է զոր ասա-
ցերդ... երկայնամիտ լեր եւ համբերու-
թեամբ անդրէն թողացո զբրխտոնէութիւն
մարդկանդ. եւ զոքօք զստամբակն անցես ի
հաւանութիւն» (64), ճշդագոյնս «ի բունն»:

Այս խորհուրդը կը հաճոյանայ թագաւո-
րին: «Անդէն վաղվաղակի կոչէր զառաջեալ
յամենայն ազգացն որ ի զօրու նորա էին եւ
ունէին զբրխտոնէութիւնն եւ... հրամայէր
անդրէն համարձակութեամբ ըստ՝ առաջին
կարգին հաստատուն կալ յօրէնս քրիստոն-
էութեան... եւ զհատեալ ոտճիկան կարգէր
անդրէն իւրաքանչիւր... եւ զամենայն որ
զկարդ ինչ եւ կարգք էին յառաջագոյն՝ ան-
դրէն յօրինէր. խոնարհէր եւ խօսէր ընդ
նոսա սիրով ըստ առաջին սովորութեանն:

«Եւ իբրեւ զայս ամենայն արար եւ կար-
դեաց յանդիման նոցա՝ թողութեան հրո-
վարտակս առաքէր ընդ ամենայն երկիր եւ-
խանութեան տէրութեան իւրոց վասն քրիս-
տոնէից:

ա. Եթէ ի կապանս ոք կայցէ՝ յարժունի
հրամանէ արձակեալ լիցի:

բ. Եւ եթէ ինչք ուրուք յափշտակեալ
իցեն՝ դարձցին անդրէն:

գ. Սոյնպէս երկիրք, եթէ՛ հայրենիք,
եթէ՛ պարգեալկանք եւ եթէ՛ քաղաքիցն
(Զ. սակաւագինք) եւ հանեալ ուրուք իցէ,
շնորհեցաք զի դարձցին:

Եւ իբրեւ այս ամենայնի գնոսա տեղեակս
առնէր, ինդրէր եւ ի նոցանէ վկայութիւն
հաստատութեան յերկիրն Հայոց:

դ. Եւ երգմամբ յուխտ մտանէր առաջի
նոցա՝ հաստատութեամբ ամենայն մեծամե-
ծաց իւրոց, եթէ ոչ յիշեցից ամենեւին գէն
Վրիժուցն խնդրելոյ:

ե. որպէս ունէիք յառաջ ճշմարտու-
թեամբ գօրէնս ձեր, առաւել այսուհետեւ կա-
լարուք, բայց միայն ի ծառայութեան մերմէ
մի՛ ելանէք:

Զայս ամենայն դրէր եւ ցուցանէր յեր-
կիրն Հայոց եւ ի բազում յայլ աշխարհս (այս
ինքն ի Վիրս եւ յԱղուանս), որ ունէին զօ-
րէնս քրիստոնէութեանն» (65—66):

Այս թողութեան հրովարտակը բոլորո-
վին ուրիշ է Փարպեցոյ յիշատակած «սուտ»
հրովարտակէն, որուն համաձայն երբ Վար-
դան իր գունդով կը մեկնէր Աղուանիք,

խարհ (450ին), Միջնաշխարհին մէջ «նեն-
գաւոր իշխանն Սիւնեաց Վասակ ոչ երբեք
զազարէր զրել նամականի առ իշխանս եւ
չինականս եւ քահանայս աշխարհս Հայոց.
ցուցանէր իմն բերեալս ի դրանէ ուխտս
սուտս եւ վկայութիւնս ընդունայնս, թէ «Ար-
քայից արքայ զբրխտոնէութիւնս շնորհեաց
աշխարհի, եւ զմիաս կոտորածի մոգուցն
չինդրէ. եւ զապստամբութենէն ասէ, թէ
Բնաւ եւ յիշեմ իսկ ոչ, միայն թէ ի բաց
զառնայք ի խրատուէ եւ ի բանից Վարդա-
նայ, եւ մի կորնչիք ընդ դմա: Եւ զինքենէ
դրէ ուխտանենդն Վասակ, թէ Ես լինիմ միջ-
նորդ այսմ ամենայնի. եւ անմիաս պահեմ
զաշխարհս Հայոց:

«Եւ տուեալ ի ձեռս սուտ քահանայից
զգրեալսն [նենգաւորին Վասակայ], որոց ա-
նուանքն են չքահանայիցն այս. Զանգակ
մի ոմն, Սահակ Զայնող, եւ միւս ոմն Պետ-
րոս Երկաթի: Եւ էին Սահակն եւ Պետրոսն
ի դաւառէն Սիւնեաց. [յորոց ձեռս տայր]
զազոտ յերանելի սպարապետն Վարդանայ՝
[նենգաւորն Վասակ զգրեալսն] շրջեցուցա-
նել ընդ աշխարհս Հայոց: Զոր լուեալ թու-
լացելոցն ի հաւատս եւ անյուսիցն, հաւա-
տացեալ բանից նենգաւորին՝ կորնչէին»
(Փարպ. 67—68):

Եղիշէի խմբագրին անձանթ չէր այս
տեղիքը, որ յառաջ բերելով «սուտ երիցանց»
յիշեալ երեք անունները, կը գրէ թէ (451ին)
«զորս յղէր (Վասակ) առ անմեղ մարդիկ,
խարէր եւ պատէր. (որք) սուրբ աւետա-
րանան երգնուին եւ ասէին, եթէ ի թագա-
ւորէն շնորհեցի ամենեցունց քրիստոնէու-
թիւնդ: Եւ այսպէս խորամանկ խարէու-
թեամբ հանէին զբազումս ի սուրբ միաբա-
նութենէն, անէին եւ խառնէին ի գունդս
ուրացողացն» (71): Խմբագիրը Ղ. Փար-
պեցոյ ազգեցութեան տակ վայրկեան մը
մոտցած է, որ այդ թողութեան հրամանը ոչ
թէ «ի թագաւորէն շնորհեցի», այլ արդէն
շնորհուած է, ինչպէս պատմուած էր էջ 65—
66: Խմբագիրը նոյնը կը կրկնէ անգամ մ'ալ
էջ 82. «Դարձեալ միւսանգամ ուրացեալն
Վասակ անդրէն ի հնարս հայթայթանաց
մտանէր ըստ առաջին կեղծաւորութեան
խրոյ. շրջեցաւ (!) ի ձեռն սուտ երիցանցն,
զոր յառաջագոյն ասացաք, նոքօք հրամա-
նաւ արքունի ի պատգամաւորութիւն խօ-
սեցաք, եւ երգմամբ հաստատէր զբրխտոնէու-



թիւնն անդրէն ունել: Եւ զայս արարեալ ի
բազում աւուրս՝ ոչ կարաց գմխարանութիւնն
քակտել մանաւանդ զսուրբ ուխտ եկեղեց-
ւոյն, որ ոչ էր հեռացեալ ի զօրականէն»
(82): Այդ «սուտ երէցներուն» պիտի հան-
դիպինք մենք նաեւ յետոյ:

Խորով Ա. կը գտնուէր իր յառաջացած
տարիքին մէջ. չէր ուզեր նոր պատերազմ իր
անհաշտ թշնամոյն՝ Բիւզանդիոնի հետ:
Միւս կողմէ դեռ չէր աւարտած Թուրքերու
դէմ պատերազմը (§ 25): Այս պատճառով
ալ ըմբռնելի է իր վրդովումը ի լուր Հայաս-
տանի սպստամբութեան: Իր ատենարանու-
թիւնը նախարարներու ներկայութեան ա-
մէնէն աւելի իր ծանրակէտն ունի տողերուս
մէջ. «Տեսէք, զի ետուք գործել ինձ զոր ոչ
կամէի. եւ եղեմ վնաս մեծամեծք ի սահ-
մանս ի մէջ երկուց անհաշտ թշնամեաց
(Պարսից եւ Յունաց): Եւ մեք դեռ ի հեռա-
ւոր ճանապարհի եւ ոչ մի ինչ գործ ի պա-
տերազմիս (ընդդէմ Թուրքաց) ի գլուխ եր-
թեալ. եւ դուք աստէն յիմում տանս (յաշ-
խարհին Հայոց) յարուցէի ի վերայ պատե-
րազմ, որոյ չարագոյն ես լինելոց է կատա-
րածն իւր քան զարտաքին թշնամեացն»:

Քաղաքագէտ թագաւորը քաջ գիտէր
կայսեր տփզոհութիւնը 562ի Յունաց համար
աննպաստ դաշնադրութեան նկատմամբ: Տե-
ղեկացած էր կայսեր թուրքերուն ուղարկած
դաղտնի դեսպանութեան մասին, որուն նպա-
տակն էր զրգուել Թուրքերն Պարսից դէմ,
նոյն իսկ դաշնակցիլ անոնց հետ արքայից
արքայի դէմ (§ 26): Ի վերջոյ կրնար կու-
հել, թէ Հայերը պիտի չհամարձակէին
գլուխ բարձրացնել իր դէմ, եթէ քաջալե-
րուած չըլլային Բիւզանդիոնէն: Այս կէտը
ամէնէն աւելի կը մտահոգէր զինքը:

Թողութեան հրովարտակը Հայաստան
բերաւ անշուշտ Պարսից նախարարներէն
մէկը: Իրեն յանձնուած էր համոզել Հայերը,
որ վար դնեն զենքերը, վերջ տան սպստամ-
բական շարժման եւ միան հաւատարիմ հպա-
տակներ թագաւորին. որուն միակ փափազն
է այս. «բայց միայն ի ծառայութենէս մերմէ
մի ելանէք»: Եղիշէ այդ պատգամաբերին
անունը չէ յիշած: Անոր անձնաւորութեան
մասին համառօտ տեղեկութիւն մը հաղոր-
դած է Սերուխտ, թագաւորին դեսպանը
Յուստինոս կայսեր. «Լսած է ինքը իր թա-
գաւորէն, թէ Հայաստան թեթեւ խոռովու-

թիւն մը ծագած ըլլայ. բայց թագաւորը իր
աշխարհին պատուաւորներէն մէկը զրկած է
հոն, որպէս զի վերահաստատէ անդորրու-
թիւնն եւ խաղաղէ խոռովութիւնը» (Մե-
նանդր):

Թագաւորին հրովարտակը արձագանդ
չգտաւ խոռվայոյդ սրտերու մէջ: Եղիշէ կը
գրէ.

«Իսկ Հայք թէպէտ եւ ընկալան զգլորն
խարբայ ողորանաց թագաւորին, որ ի վե-
րոյ ունէր զաւետիս կենաց եւ ի ներքոյ զհառ-
նութիւն մահու, զարմացեալ ընդ թերի խոր-
հուրդան՝ ասէին ցմիմեանս. Քանի՛ լիբր է
խորամանկ չարութիւն նորա. զի երկիցս եւ
երկոցս զիտրձ առեալ կշտամբեցաւ, եւ ոչ ա-
մաչէ նա: Եւ տեղեակ եղեալ մերոյ անքակ
միաբանութեանս, տակաւին լրբի եւ լինի,
զհետ մտեալ կամի զմեզ լքուցանել: Մեք
մի հաւատասցուք անհաստատ հրամանի նո-
րա. զո՞ր բարեգործութիւն տեսաք առ ա-
մենայն եկեղեցիս, որ էին յաշխարհին Պար-
սից...: Այլ մեք ապրեալքս զօրութեամբն
Աստուծոյ եւ հաստատեալքս հաւատով ի
յոյսն Քրիստոս... ոչ պարտիմք իբրեւ
զտղայս... եւ աղաչեմք զԱստուած... զի
յորում սկսաքս, ի սմին եւ կատարեսցուք
քաջութեամբ եւ ոչ վատութեամբ:

«Քանզի արդ Արեւելք եւ Արեւմուտք գի-
տացին զձեր աստուածամարտդ լինել եւ զմեզ
զուր սպանանել ի վերայ ամենայն վաստա-
կոց մերոց: Վկայեն մեզ երկիրք երկնաւո-
րօք եւ երկիր երկրաւորօքս, եթէ չեմք ինչ
մեղուցեալ եւ ի միտս մեր անգամ. եւ ի վե-
րայ պարգեաց եւ բարիս աննելոյ մեզ՝
զձմարիտ կեանս կամիք ի մէնջ հանել.
որում չիք հնար եւ այլ մի լիցի:

«Իսկ արդ մի հաւատասցուք անարժան
բերանոյ նորա: Որ ստիպէր չարաչար յու-
րացութիւն, եւ այսօր առանց մի ինչ բարիս
գործելոյ լինիցի՞ նա քարոզիչ աւետեաց...: Ոչ
այդմ հաւատամք եւ ոչ զսուտ հրամանդ
յանձն առնուք» (66—67):

Երկընտրանքի մէջ էին Հայերը: Ունէին
կայսեր խոստումը օգնելու իրենց զօրքով.
այժմ թագաւորը թողութեան հրովարտակով
անյիշութեան կ'առնէ Հայոց ընդվզումը, կը
շնորհէ կրօնի ազատութիւն եւ այլն: Ան-
ցեալի դէպքերը հաւատք չեն ներշնչեր իրենց
թագաւորին անկեղծութեան, խոստումնե-
րուն հաւատարմութեան վրայ. կը կասկա-

ծին վրէժխնդրութենէ: Կ'որոշեն տեղի չտալ հրապոյրներուն, վար դնել զէնքերը: Եղիշէի տողերէն կը տեսնուի, թէ թագաւորական հրովարտակին իրենց ժխտական պատասխանը տուած են զբաւոր. զայս ենթադրել կու տան արտայայտութիւններս. «զձեր աստուածամարտդ լինել... զճշմարիտ կեանս կամիք ի մէջն հանել»:

58. ՎԱՀՐԱՄ ՎՇՆԱՍՊ ՀԱՋԱՐԱՊԵՏ

Պատգամաւորը վերադարձաւ թագաւորին տանելով իր հետ Հայոց ժխտական պատասխանը: Եղիշէ կը գրէ. «Իսկ նա (Սոսրով Ա.) իրբեւ ետես, եթէ ոչ կարաց քակել զհաստատութիւն միարաներոցն, յայնժամ քակեաց յինքնէն զԾերն լի դառնութեամբ, յորում հանգուցեալ էր սատանայ զօրութեամբ իւրով. եւ բազում գործեալ էր նորա նախճիրս. որոյ կերակուր կամաց իւրոց էր ի մանկութենէ անարատ մարմին սրբոց եւ ըմպելի անյագութեան նորին՝ աւրին անմեղաց» (67): «Սա էր իշխան եւ հրամանատար ամենայն տէրութեանն Պարսից, որում անուն էր Միհրնեքսեհ. եւ չէր ոք ամենեւին որ իշխէր ըստ ձեռն նորա ելանել. ոչ միայն մեծամեծք եւ փոքունք, այլ եւ ինքն թագաւորն հրամանի նորա անսոյր» (68): «Յաւելոյր եւս (թագաւորն) ի վերայ նորա չարութեանն եւ զիւր մահարեւ հրամանն: Գուճուս գունդս յամենայն աշխարհացն գումարէր ընդ նմա. եւ բազում երամակս փղաց յղէր ընդ նմա»: Որ եւ «հասեալ մերձ ի սահմանս Հայոց՝ մտանէր ի քաղաքն Փայտակարան. եւ զգորսն ամենայն սփռէր տարածանէր շուրջ զքաղաքան առ ի զգուշութիւն պատրաստութեան՝ իւրոց չարահար խորհրդոցն» (67):

Այդ Ծերին անունը «Միհրնեքսեհ» կը կոչէ, զոր յետոյ «մեծ հագարապետ» (72) եւ «հագարապետ» (73, 100) կը յորջորջէ: Անունս խմբագրին գրչէն է, փոխառութեամբ Ղ. Փարպեցիէն, որ խօսելով Կարմիր Վարդանի մասին, որ իր զօրքով ձմերձ էր յԱյրարատ, «բուն, կ'ըսէ, թէ Միհրնեքսեհ Արեւաց հագարապետ եկեալ է ի Փայտակարան քաղաք, զունդ կազմէ եւ ընդ Աղուանս արձակէ ի Հայս» (63):

Եղիշէի Պատմութեան ընթացքը կը պահանջէ հոս հագարապետին անունը Վախրամ Վշնասպ: Այս անունը պահած է մեզի Սե-

բոս. որ թուելով Սուրէնի սպանութենէն ետքը Հայաստան ուղարկուած զօրավարներու կամ մարզպաններու անունները, կը գրէ. «Եւ արդ այս են զօրավարք արքային Պարսից (Սոսրովու), որ եկին մի ըստ միով յերկիրս Հայոց յայտատարութենէ Վարդանայ... մինչեւ զայսօր ժամանակի...: Յորժամ սպանին զՍուրէն մարզպան, զի նմին ամի եկն Վահրամ (տայ. Վարդան) Վշնասպ ոմն. եւ զործ ինչ ոչ զործեաց. եկաց ամ մի եւ զնաց» (29):

Այս Վահրամ-Վշնասպ (Bahram-Guš-nasp) նոյն է անտարակոյս այն համանուն մարզպանի հետ, որուն հրամանով նահատակուեցաւ Յիզտիրուզիտ վկայն ի Դուին (9 դեկտ. 553), ինչպէս կը գրէ Յովհաննէս Դրասխանակերտցի կաթողիկոս. Յիզտիրուզիտ «բազում չարչարանս կրեալ ի մարզպանէ Վշնասպին Վահրամայ ի Դուին քաղաքի պահի» (էջ 64. ստիչ Վարդան Արեւելցի. «Կատարեցաւ ի մարզպանէն Վահրամայ», 57): Պատմագիր կաթողիկոսը այս տեղեկութիւնը քաղած է անշուշտ զբաւոր աղբիւրէ մը. մեզի հասած վկայարանութեան մէջ կը պակսի մարզպանին իսկական անունը. հոս կ'ըսուի. «ի ընու այլ եւս երից ամացն յաջորդէր զՆախապետն՝ Վահրամ Վշնասպ», որում Քնարիկն ասէին<sup>1</sup>:

Ինչպէս վերագոյն (§ 31, ծան. 37) տեսանք, «Քնարիկ» պատուանուն մէջ, յատկացուած Ապարաշխարհի մարզպանին, որ սահմանապահն էր ընդդէմ Հեփթաղներու: Այս պատուանունը կրած է նաեւ Նիխոր Վշնասպը, զոր կը յիշէ Ղ. Փարպեցին 484/85ին (էջ 159): Ինչպէս կը պատմէ Պրոկոպիոս, այս Վշնասպը Բանարանդ (պարսկ. Kanarak, հայ. Քնարիկ) Կաւատի հրամանով սպանուեցաւ (իր 506ին) եւ անոր պատուանունը թագաւորէն շնորհուեցաւ նոյն տոհմէ Աղուրգունդատ նախարարի: Երբ վախճանեցաւ Կաւատ (532), Պարսից աւագանին ուղեց Վահրամ ժառանգ անունն արքային սիրական որդին Չամը. բայց որովհետեւ սա միականի էր, եւ Պարսից Օրէնքի համաձայն չէր կարող գահ բարձրանալ, խորհեցան թագաւոր անունն Զամի մանկահասակ որդին

<sup>1</sup> Վարք եւ Վկայարանութիւնք Սրբոց, Բ., էջ 127: Յովհ. Դրասխանակերտցի կարող էր օգտուած ըլլալ Պետրոս Սինեցոյ զբաժն Վկայարանութիւնէն, որ գործարարը հատկապէս մը միայն ծանօթ է մեզի:

եւ անոր խնամակալ կարգել հայրը: Սոսրով երբ վերահասու եղաւ այս խորհուրդին անսպարեց սպաննել տալ Չամն եւ իր միւս եղբայրները, ինչպէս նաեւ անոնց արու գաւակները: Այս կոտորածէն զերծ կը մնայ Չամի մանկահասակ որդին Կաւատ, որ կը գտնուէր Նիւշապուհ, իր ստնտուին քով, որուն ամուսինն էր Աղուրգունդատ քնարիկ: Սոսրով զաղտնի հրաման կ'արձակէ Քնարիկին անհետացնել Կաւատը. բայց ստնտուն, որ արձարձած էր մանկան հանդէպ մայրական գորով, կ'ընդդիմանայ: Կը խորհին ծածկել Կաւատը. իսկ թագաւորին կը հաղորդեն թէ հրամանը կատարուած է: Երբ պատանեկութեան հասակը կ'առնէ Կաւատ, գաղտնորէն կ'ուղարկեն Կ. Պոլիս:

Այս գաղտնիքին ծանօթ էին միայն Քնարիկի որդին Վահրամ եւ սպասուոր մը:

Արքայից արքայն Սոսրով կ'արշաւէր դէպի Եգեբացոց աշխարհ (541°): Կարաւանին մէջ էր Վահրամ. որ անօրէնութիւնը կը գործէ իր հօր գաղտնիքը յայտնել թագաւորին. իր խօսքին վկայ կը կոչէ նաեւ սպասուորը, որ նոյնպէս կարաւանին մէջ էր: Թագաւորը հրաման կու տայ սպաննել Աղուրգունդատը, նկատի չառնելով անոր մեծ վաստակները, որ իր հօր Կաւատի օրով 12 ազգերու դէմ յաղթական պատերազմներ մղած էր: Իսկ անոր պատուաստիճանը՝ քնարիկ կը շնորհէ մատնիչին՝ Վահրամ Վշնասպի<sup>2</sup>:

Կ'երեւայ թէ այս անցքերուն անձանօթ չէր Եղիշէ. եւ առ այս կը հայէր իր ակնարկութիւնն թէ Սոսրով «որ եւ ըստ հեթանոսաց օրէնս անցանէր արիւնհեղութեամբ... նա եւ ոչ զերկրաւոր վաստակս ուրուք յիշէր. եւ որ մեծն քան զամենայն է ըստ մարմնաւոր կարգի. քանզի զոյին ոմանք ի նախարարացն Հայոց (իմացիր՝ Պարսից), որոց զեղբարս նորա սնուցեալ էր մայրենի կամբ իւրեանց, ստաւել եւս քան զամենեւեան զնոսա դատէր» (էջ 18. հմտ. § 36, 12, ը):

Վահրամ ըստ ամենայն հաւանականութեան Միհրան տոհմէ էր. իսկ այս տոհմի անդամները պատմութեան մէջ յաճախ տոհմանունով կը կոչուին, որ կը զփութարցնէ ան-

<sup>2</sup> Պրոկոպիոս, Պարսկ. Պատ., էջ 23, 115, 116, 118: Հմտ. Spiegel 3, էջ 418—430. A. Christensen, L'Iran sous les Sassanides, Copenhagen 1936, էջ 342—343, 346:

հատները զանազանել: Պարզապէս զուգարկալութիւն պէտք է համարել այն, որ ճիշդ 541ին, երբ Վահրամ Վշնասպ թագաւորի կարաւանին մէջ կը գտնուէր, հոն կը հանդիպի նաեւ Եգեբացոց աշխարհի պարսիկ զօրագունդին հրամանատարը Միհրան, որ Պիրան (Միհրան) Վշնասպ պարսիկ հեծելազօրի հրամանատարին հօրեղորորդին էր: Պիրան, որ հայ մատենագրութեան մէջ Գրիգոր Մանածիճը ռաթիկ ի Միհրան տոհմէ կը կոչուի, կ'ընդունի քրիստոնէութիւնն եւ կը նահատակուի մասնաւոր պնդումով իր հօրեղորորդուցն Միհրանի (§ 36) զոր կը համարիմ նոյն Վահրամ Վշնասպի հետ: Այս Վահրամ Վշնասպ հայրն էր Վահրամ Միհրեւանդակ Չորինի, որ հետամուտ եղաւ տիրանալ սասանեան գահին:

Եթէ Վահրամ Վշնասպ 541ին Քնարիկ պատուաստիճանին կ'արժանանայ, հարկ է ենթադրել, թէ ան կը գտնուէր կատարեալ հասակի մէջ. ուստի ըլլալու էր 571ին գոնէ 70ամեայ մը, նկատուելու համար «Ծեր»: Երկար տարիներ ծառայած պետական բանակին մէջ, վարած իրբեւ քնարիկ մարզպանութեան պաշտօնը Ապարաշխարհի, Վրաց կողմանց եւ Հայաստանի մէջ, ինքնաբերաբար պիտի ըլլար ազդեցիկ անձնաւորութիւն մը թէ յաջս արքային եւ թէ իր նախարարներու: Իր նկարագրին, յատկապէս դաժանութեան մասին խիստ դատաստանին համար աչքի առաջ ունէր անշուշտ Եղիշէ հայրասպանութիւնն եւ Գրիգոր ռաթիկի, Յիզտիրուզիտի եւ ուրիշներու վկայութիւնները:

Փայտակարանի քաղաք:

Եղիշէ երկիցս կը շեշտէ, թէ հագարապետը «հասեալ մերձ ի սահմանս Հայոց՝ մտանէր ի քաղաքն Փայտակարան. եւ զգորսն ամենայն սփռէր տարածանէր շուրջ զքաղաքան առ ի զգուշութիւն պատրաստութեան իւրոց չարահար խորհրդոցն» (67) եւ «զօղեալ թաքուցեալ էր ի քաղաք(ի)ն Փայտակարան» (73): Չմտաւ «ի սահմանս Հայոց»: Քաղաքս հիմնուած էր այն կէտին վրայ, ուր Երասխ եւ Կուր խանութեամբ իրարու կը թափուէին Կասպից ծով: Քաղաքս եւ իր շրջանակը, որ ապա Փայտակարան նահանգի վերածուեցաւ, Մարերէն խրած էին Արտաշէս եւ Չարիագրիս եւ Հայաստանի կցած. բայց 297ին, Մեծ Հայաստանի Դիոկղե-

տեան բաժանումին, անցաւ ան Պարսից (Հիւրբման, Տեղեոյ անուններ, էջ 101—105): Փայտակարան հաստատուած էր կարեւոր ուղղափարական ճանապարհի վրայ: Այս տեղէն արձակեց 450ին Միհրանբեկ սարսիկ զօրքը «ընդ Աղուանս ի Հայս» (Փարս. 63): որոնց հետ ընդհարուեցան Վարդանանք Աղուանից Խաղիսաղ զիւղի առջեւ: Յաջորդ տարին նոյն ճանապարհով Հեր եւ Զարեանոյ գաւառ կը հասնին Պարսիկները, որոնց կը պատահին Վարդանանք Արտազ գաւառին մէջ, «հուպ ի գեօղն որ կոչի Աւարայր» (Փարս. 69): 571/72ին իրեն զօրանիստ տեղի կ'ընտրէ Վահրամ Վշնասպ փայտակարան քաղաքը, ուսկից յաջորդ տարին զօրքը միջամուխ կ'ըլլայ Հայաստան: 574ին Խոսրով փայտակարան-Արտազ գծով կ'իջնայ Բագրեւանդ Կարին (Սեր. 27): Հերակղ 628ին Մծբինէն կ'անցնի «առ ամուր աշխարհաւն Մարաց» ի փայտակարան, յառաջանալու համար անկէ «ընդ Աղուանս ի Վիրս» (Սեր. 92), ապա «ճանապարհ կայեալ ի Հեր եւ Զարեանոյ գաւառ» երթալու դէպ ուղիղ Տիգրոն, բայց կը ստիպուի ճանապարհն շեղել եւ Զարասպ լեռան միւս կողմէն կը հասնի Նինուէ, ուսկից ապա կը վերադառնայ Տիգրոն (Սեր. 94—95):

Վահրամ չանցաւ սահմանէն անդին. որպէս զի չընդհարուի Հայոց հետ եւ այսպէս պատճառ տուած չըլլայ Հոռոմայեցոց Հայաստան միջամուխ ըլլալու քրիստոնեայ Հայերը պաշտպանելու համար: Փափուկ էր ժամանակը. Թագաւորին եւ Կայսեր մէջ բանակցութիւններ կը վարուէին: Թէպէտ Խոսրով վերահասու եղած էր Հայոց եւ Կայսեր մէջ կնքուած ուխտին, եւ համոզուած էր թէ անխուսափելի էր պատերազմը, բայց որովհետեւ ինքը տակաւին պատրաստուած չէր պատերազմի, կը ձգձգէր բանակցութիւնը ժամանակ վաստկելու համար: Վահրամ բանակով մը ուղարկուած էր սահմանապահելու նախ լրտեսելու համար Հայաստանը եւ անոր գինակից Վրաստանն եւ Աղուանքը, ապա բանակը զօրացնելու օգնական գունդերով, մասնաւորապէս ապահովելու Կովկասեան լեռնականներու գինակցութիւնը: Քաղաքը շուրջանակի պաշարած զօրքով, վերածուած էր անշուշտ զօրակայանի:

Կովկասեան ազգերը շահելու համար հարապետն ոչ գրամ խնայած է եւ ոչ սպառ-

նալիք: Այս մասին Եղիշէ կ'երեւայ թէ հարողած էր մանրամասնութիւններ. բայց սկզբնապէս այժմեան Խմբադրութեան մէջ խանգարուած է բազմօք, յատկապէս անով, որ խմբագիրը հազարապետին զօրածողովը վերագրած է «Վասակին»: Բայց եւ այնպէս դժուարին չէ այս խմբագրութեան տակ նշմարել սկզբնագրին տողերը, մանր սրբագրութեամբ փակագրիծներու մէջ: Զարմանալի է որ խմբագիրը իր նոր խմբագրութիւնը կազմելու ժամանակ չէ նկատած հակասութիւնները իր եւ Եղիշէի տողերու առնչութեամբ: Յառաջ կը բերեմ այս հատուածը ամբողջութեամբ:

«Եւ ըստ մեծի չարութեան նորա առաւել եւս ժամանակն երբ նմա յաջողութիւն իրաց: Զի ամենեւին արտաքուստ օգնական ոք ոչ դտաւ զնդին Հայոց, բայց յայնց Հոնացն, որոց բանս եղեալ էր (ընդ Հայս): [Սակայն եւ վասն նոցա կուտեաց զայրուծի բազում Արեաց. արգել եւ փակեաց զգրուանս իրն նոցա:]

«Քանզի [ոչ տայր (Վասակ) դադար ամենեւին թագաւորին Պարսից, այլ] յէր եւ կոչէր գունդս բազումս ի Պահակ(է)ն ճորայ եւ զՎրաց աշխարհն բովանդակ անդր գումարէր, զգորս Լինացն եւ զձորաց եւ զՎասն եւ զԳաւն եւ զԳրուարն եւ զԽրասն եւ զՀեծմատակն, զՓասինն եւ զՓոսինն եւ զՓիւրծոնան (Չ. զՓիւրծոնան) եւ զամենայն զօրսն Թաւասպարանն (վարը՝ Թաւասպարացն), զԼեռնայինն եւ զզաշտայինն եւ զամենայն ամբակողմ(անց)ն. էր զոր կարասեալ [մեծաւ պարգեւօք եւ առատաձեռն բաշխելով զգանձսն արքունի], էր զոր [հրամանաւ թագաւորին] սաստիւ տաղնապէր» (73):

Այս ազգերէն ոմանք անխուստ կերպով երկրորդ անգամ յիշուած են. «ԶՄուշկան Նիւսարաւուրտ հանդերձ ամենայն մնացեալ զօրուն գումարէր յաշխարհն Աղուանից (թերեւս Միջագետաց) եւ Լինաց եւ ձորաց եւ ի Հեծմատակաց եւ ի Թաւասպարաց եւ ի Խրոսովան եւ յամենայն ամբական(աց)ն» (100):

Թէ այս իմաստով պէտք է իմանալ երկրորդ հատուածը, կը վկայէ Սերիոս, որ յիշելով Գղոն Միհրանի բանակը, կը գրէ թէ «ունէր ընդ ինքեան սատարս բազումս ի ճամբարէ անթիւ ազգացն, [ընդ] որ բնակեալն են ընդ լեռնակողմամբ Կովկասու ազգը

Հոնաց» (Սեր. 29): Նոյնը գիտէ նաեւ Թէոփանէս Բիւզանդացի, թէ «Միհրանի նիզակակից էին ազգքն Սարիքը եւ Դադանք եւ Դերուք» (տես § 54): Վերագոյն ուշադիր ըրած էի, թէ Թէոփանէսի «Սարիքը» նոյն են Եղիշէի «Վրաց աշխարհի» ազգաց հետ (§ 54, ծան. 12): Այս ազգացուցակը կրնայ համեմատուիլ Փաւստոսի (Գ. 7) եւ Մ. Խորենացոյ ընծայուած Աշխարհացոյցի (էջ 27, հրտ. Սիւքրեանի) ազգացուցակներու հետ:

Հազարապետը կը հարցաքննէ նաեւ հայ բանակին որպիսութիւնը, որուն մասին Փիլիպպոս գոհացուցիչ տեղեկութիւններ կը հաղորդէ (տես վարը): «Եւ իրբեւ զայս ամենայն տեղեկացաւ ի նմանէ, կոչէր զամենայն զօրագրուխն, պատուէր հրամանի տայր ամենեցուն յանդիման նորա (Վասակ-Փիլիպպոսի), զի խրատու նորա լուիցեն ամենեքեան: Եւ զամենայն զօրսն զօրագրուօքն հանդերձ յանձն առնէր առն միում յաւազացն, որում անուն էր Մուշկան Նիւսարաւուրտ (իմացի՛ր՝ Գղոն Միհրան Միհրեւանդակ): Եւ ինքն (հազարապետն Վահրամ Վշնասպ) խաղայր անդրէն գնայր յերկիրն Արեւելից (Սորասան). եւ յանդիման եղեալ մեծի թագաւորին, պատմէր զամենայն անցս իրացն, զիւր հնարաւոր իմաստութիւնն...» (74—75):

Այսպէս տարի մը բովանդակ անցնելով փայտակարան կազմակերպեց զօրաւոր բանակը մը: Կը վերադառնայ Վահրամ Վշնասպ Տիգրոն, 572 աշնան հաւանօրէն, երբ կը հրատարակուի պատերազմը: Սերիոսի խօսքը, թէ Վահրամ «գործ ինչ ոչ գործեաց» իմանալու է չգործեց պատերազմ, բայց կազմակերպեց բանակ, երկպառակեց Հայաստան, խափանեց, որ Հայոց նիզակակից ժողովուրդները շարժին իրենց տեղէն: Եւ ունէր Եղիշէ լիուլի իրաւունք գանգատելու թէ. «Եւ ըստ մեծի չարութեան նորա առաւել եւս ժամանակն երբ նմա յաջողութիւն. զի ամենեւին արտաքուստ օգնական ոք ոչ դտաւ զնդին Հայոց, բայց միայն յայնց Հոնացն, որոց բանս եղեալ էր» (73):

Եղիշէի տեղիքն. «Յետ այսորիկ իրբեւ ետես զօրավարն Պարսից գեղիւն, եթէ հաստան պատգամաւորքն ի միջոյ՝ [խաբել զնոսա] եւ բարձաւ յոյս ակնկալութեան իւրոյ՝ ցրուել զնոսա յանքակ միարանութեանն, յայնժամ յառաջ կոչէր... զբազումս ի զօրա-

ղիւսացն, որ ընդ իւրով իշխանութեամբ» (89), ինձ կը թուի թէ սկզբնագրին մէջ կը հայէր Խոսրով թագաւորը. եւ կ'ակնարկէ իր Պարսից եւ Հոռոմայեցոց մէջ մշակուած բանակցութեանց մէկ կողմէ, եւ Հայոց եւ Պարսից մէջ Թողութեան հրովարտակի շուրջը եղած բանակցութեանց միւս կողմէ: Երբ «հաստան պատգամաւորքն ի միջոյ եւ բարձաւ յոյս ակնկալութեան իւրոյ» ի մասին խաղաղութեան վերահաստատութեան, եւ ի վերջոյ լսեց թէ Կայսրը հրատարակած է պատերազմ. որոշեց եւ ինքը շարժման մէջ դնել բանակը, առ այդ կանչեց իր զօրագրուիները հրաման տալու զօրախաղացի, որ Վրաստան-Հայաստան գծով պիտի յառաջէր դէպ ի Մծբին: Եղիշէի այս տեղիքը կ'ակնարկէ առանց տարակուսի Սերիոս երբ կը գրէ ի մասին Խոսրով Անուշըրուանի.

«Այս Խոսրով, որ կոչեցաւ Անուշըրուան, ի ժամանակս իւրոյ թագաւորութեանն՝ յառաջ քան զպատգամութիւնս զայս (զՀայոց) հաստատեաց գերկիր, քանզի էր խաղաղասէր եւ աշխարհաշէն: Եւ ի լինել պատգամութեանն(ն) այնորիկ, յայնժամէտէ ընդոստուցեալ զարթեալ ի բարկութիւն՝ գանձն անփաստ համարեալ, իրր թէ Հայր էի ամենայն երկրի եւ ոչ տէր. եւ սնուցեալ զամենեան իրբեւ որդի եւ սիրելի. եւ արդ, առէ, ի նոցանէ խնդրեցէ Աստուած զարիւնս զայս» (էջ 28):

Ի՛ր հրամանն էր ի մասին Հայոց՝ տրուած զօրագրուիներուն. «Զի անձեռտ արասցեն զարս ի յաշխարհէն Հայոց, խլել, բրել յատակել անխնայ յերկիր կործանել» (Սեր. 29): Զայս կ'ակնարկէ անշուշտ նաեւ Եղիշէ, երբ կը գրէ, թէ «յաւելոյր եւս ի վերայ նորա չարութեանն եւ զիւր մահաբեր հրաւանսն» (67):

59. ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԻՒՆ: «ՎԱՍԱԿ ՍԻՒՆԻ» = ՓԻԼԻՊՊՈՍ

Եղիշէ կը խոստանար պատմել Գ. Յեզանակի մէջ «զերկպառակութիւն ոմանց բաժանելոց ի նմին ուխտէ» (5): Այս խորագիրը խմբագիրը վերածած է՝ «վասն երկպառակութեան իշխանին Սիւնեաց եւ ընկերաց իւրոց» (69): «Ուխտ» ըսելով կ'իմանայ Եղիշէ 571ին Հայոց, Վրաց, Աղուանից, Հոնաց եւ Հոռոմայեցոց մէջ կնքուած նիզակակցութիւնը ընդդէմ Պարսից: 571, փետ-

բուար Յի ապստամբութենէ ետքը Խոսրով հրատարակելով թողութեան հրովարտակը՝ նպատակ ունէր քակտել այդ ուխտը: Բայց Հայք մերթեցին հաւատք ընծայել թագաւորին խոստումներուն:

Խոսրով փութաց իր հազարապետն զօրով Փայտակարան ուղարկել. այստեղ ի ծածուկ զօրաժողովի վայր ընտրուած էր. մինչ բանակցութիւնները Պարսից եւ Հռոմայեցւոց մէջ կը շարունակուէին:

Պարսկական բանակի ներկայութիւնը սահմանի վրայ կը կաշկանդէր Աղուաններու զօրաշարժը. նոյնպէս Վիրք ստիպուած էին յարձակման վտանգի առաջ գնն ի ձեռին սպասել սահմանի վրայ: Հայերը մնացած էին իրենց ոյժին ապաստան: Իրաց այս կացութիւնը պիտի ջլատէր վատասիրտները. որպիսիներ կային անշուշտ հայ բանակին մէջ: Անոնց թիւն աւելի աճեցնելու եւ իրեն շահելու համար պարսիկը չխնայեց որ եւ է միջոց. «էր որոց ահ արկանէր, եւ էր որոց պարզեւս բաշխէր»: Այդ պարսկամէտ նախարարներու անուաններէն մէկ քանին ծանօթ են մեզի (հմմտ. § 47, 13): Բայց չենք գիտեր, թէ անոնց ո՞վ գլուխ կանգնած էր, ուրիշ խօսքով՝ ծախած էր ինքզինքը հազարապետին: Խմբագիրը անոր անունը կուտայ. «Վասակ Սիւնի»: Եւ զարմանալի չէ. վասն զի ինքը, ինչպէս յաճախ շեշտած ենք, կ'ընթանայ Ղ. Փարսեցոյ հետքերով. Եղիշէի «Հայոց պատերազմի» պատմութիւնէն «Կարմիր Վարդանի» պատմութիւնը ձեւել կը ճգնի: Վերադոյն, սակայն, տեսած էինք, որ Վասակ 571, փետր. Յին սպանուած էր պատերազմի մէջ (§ 49):

Եթէ մի առ մի նկատի առնենք այն զործերը, որոնք վերագրուած են Վասակի, գծուարին պիտի չըլլայ անոնցմէ մասի մը հեղինակ հազարապետը ճանչնալ, իսկ անոր ձեռքի տակ գործիչ՝ Վասակ = Վահանի յաջորդ՝ Վասակ = Փիլիպպոս Սիւնի նկատել:

Հազարապետը, որուն համար կ'ըսուի թէ «յամուր որջն մտեալ էին վիշապն շարաթոյն եւ բազում կեղծաւորութեամբ գինքն թաքուցանելով յաներկիւղութեան՝ հեռաւորացն անհազին ճայնիւ սաստէր եւ ի մերձաւորան սողելով իրբեւ զօձ փշէր» (68), ամէնէն յառաջ պիտի աշխատէր երկպառակել հայ բանակը, եկեղեցականութիւնն եւ ժողովուրդը համոզել թողութեան հրովարտա-

կին ստուգութեան, եւ այսպէս շահելով զանոնք ի ծառայութիւն, ազդել անոնց ձեռքով բանակին եւ արտասահմանին վրայ, թէ Հայերը գտնելով իրենց կրօնի ազատութիւնը եւ ապստամբութեան համար թագաւորին ներողամտութիւնը, հաշտուած են թագաւորին հետ, եւ հպատակած անոր աշխարհովին. ուստի չեն կարօտիր կայսեր պաշտպանութեան. որով պատերազմի երկիւղը, ալ ինքնին փարատած կ'ըլլար: Այս էր ձեռունի արքային ալ փափագը: Կարեւոր էր այսպիսի համբաւներու հոչակումը, սուտ կամ իրաւ, ժամանակ մը, երբ կը շարունակուէին բանակցութիւնները թագաւորին եւ կայսեր մէջ Կ. Պոլիս:

Այս կէտի մէջ խմբագիրը անգուլ զործուէնութիւն կը վերագրէ «Վասակի», միշտ ջանք տանելով, որ Ղ. Փարսեցոյ հետքերէն ըստ կարի չչեղի:

Վասակ ըստ խմբագրին 571 փետր. Յի կուռէն ետքը գիշերախառն կը փախչի Սիւնեաց աշխարհը. (61): Միհրնբուհ ի Փայտակարան «բանգի յառաջագոյն ստուգեալ զիտէր զամբարշտութիւնն Վասակայ, եւ յայնմ ժամանակի եւս յղէր եւ կոչէր գնա առ ինքն... եկն եւ յանդիման եղեւ...» (70): Խմբագիրը այնպէս կը ներկայացնէ, թէ Միհրնբուհ այս երկրորդ անգամ ալ (451) եկած էր Փայտակարան. մինչ Ղ. Փարսեցի այս մասին որ եւ է ակնարկութիւն չունի. գիտէ միայն, որ Պարսից զօրապետներն են Մուշկան Նիւսարուուրա եւ Դողլճ (69): Միհրնբուհ «եղ առաջի նորա (Վասակայ = Փիլիպպոսի) զմեծամեծ պարզեւս երկրաւորս. եւ խոստացաւ նմա... հասանել մինչ ի թագաւորական վիճակն. բայց միայն իրացն հնարիւք ընդ իմաստունս. եւ յոյժ խորագրտութեամբ ընդ գիտունս. յայտնի ընդ անմեղս եւ ի ծածուկ ընդ խորհրդականս: ... Եհան գրադումս ի գնդէն Քրիստոսի եւ խանեաց ի գունդն զիւաց: Եւ ի բազում յայլ տեղիս գողարար սողեցաւ եւ եմուտ իրբեւ զօձ ի մէջ ամբայելոցն. եւ խրամատ հատեալ յափշտակեաց... գրազումս յազատաց եւ գլխովս ի շինականաց անտի եւ զայլս ոմանս յանուանեալ քահանայից» (71):

Այս տեղ յառաջ կը բերէ իշխանացանկ մը, որ ըստ մեծի մասին Փարսեցիէն փոխ առնուած է (տե՛ս § 47). «Եւ բովանդակ զիւր աշխարհն ապստամբեցոյց, ոչ միայն ըստ աշխարհական բազմութեանն, այլ եւ զբազումս յուխաէ եկեղեցւոյն». երեք երէցներու անունները փոխառութիւն են Փարսեցիէն (էջ 68, տե՛ս § 47, 13): «Եւ ժողովեաց զամենայն գայթակղութիւնս եւ արար գունդ զօրաց բազմաց... եւ բաժանեալս եւ երկցեցս երեւեցոյց զօրոսն Հայոց» (72): Հազարապետն «կոչէր առ ինքն զՎասակ եւ որք ընդ նմայն էին իշխանքն ամենեքեան, բազում պարզեւս յարքունուստ շնորհէր նոցա եւ զօրացն որ ի նոցա բանի էին: Տանէր (ո՞վ) զառաջեալ եւ զուրացեալ երիցունն (երկու Սիւնեցի երէցները)... եւ յայտ առնէր, եթէ սոքօք որսացայց գնոսա (զո՞րս) քակտել ի միարան(ութեան) ուխտէն (Չ. կ'աւելցնէ՝ քրիստոնէութեան): Իսկ հազարապետն իրբեւ զայն լսէր, յոյժ շնորհակալ լինէր երկոցունցն (երեցո՞նց) եւ յոյս առաջի զնէր նոցա. եթէ լիցի մեր յաղթութիւն, զայլոց քահանայից կեանս զոցա շնորհեցեց եւ զմեծ վաստակս զոցա ցուցից թագաւորին: Եւ այսպէս շարժեաց եւ շիտեաց (ո՞վ) զաշխարհն Հայոց մինչեւ բազում եղբարս հարազատս քակեաց ի միմեանց. ոչ եթող միարան գհայր եւ զորդի. եւ ի մէջ խաղաղութեան արկանէր խոռովութիւն»:

Այսպէս նաեւ շարունակութեան մէջ յառաջ կը բերուին գործեր, առանց անոնց հեղինակը յիշելու. միայն էջ 75 կ'ըսուի, թէ հազարապետը թագաւորին «պատմէր զամենայն անցս իրացն, զիւր հնարաւոր իմաստութիւնն եւ զՎասակայ խարբայ զպատանս հայթայթանացն, որպէս զառաջինն զիւր զամբարշտութիւնն կամեցաւ ծածկել այնու՝ զի քակեալ երկպառակեաց զգունդն Հայոց»:

Թէ իրապէս երկպառակութիւն տեղի ունեցած է, կը հաստատէր Եղիշէ Դ. Յեղանակին խորագրին մէջ: Նոյնը կը կրկնուի Չ. Յեղանակին մէջ. «Քանզի իրբեւ ետես մեծն Վարդան զերկպառակութիւն աշխարհին իւրոյ, ոչինչ թերահաւատութեամբ զանգիտեաց: Թէպէտ եւ ստուգեալ զիտաց զբազմաց այլոց եւս երկմտութիւն, որ գեո եւս ընդ նմա միարանեալք էին (աւաղք եւ սեպուհք)... փոխանակ յետս կացելոցն՝ որ


եկին զհետ իշխանին Սիւնեաց, զեղբարս կամ զորդիս կամ զեղբարց որդիս ի տեղի նոցա մատուցանէր, եւ զիւրաքանչիւր զօրս տան նոցա. զի գեո եւս ինքն ունէր զամենայն աշխարհն» (76/77):

Ո՞վ էր այդ «Իշխանն Սիւնեաց»: Խմբագիրը կ'իմանայ անշուշտ Վասակ Սիւնի: Բայց Եղիշէի Պատմութիւնը կ'ենթադրէ Վահան Սիւնեաց տեսն յաջորդը: Սերիոս 573ին Տէր Սիւնեաց կը ճանչնայ Փիլիպպոսը. ուստի իր մասին իմանալու է ինչպէս վերոյիշեալներն ըստ մասին, նոյնպէս գրուագս. «Եւ անդէն իսկ յիւրում աշխարհին երկու եղբորորդիք էին նորա ի սուրբ ուխտին առաքինութեան. գրեաց եւ հառ իշխանութիւն ի վերայ կենաց նոցա. մերժեաց եւ եհան գնոսա յաշխարհէն, զի մի՛ այլ դարձցին անդրէն: Հալածեաց եւ փոխոյց զամենայն միայնակեացս աշխարհին, ոյք հայհոյէին զանդարձ ամբարշտութիւն նորա: Արար եւ կատարեաց զամենայն շարիսն ընդգէմ ճշմարտութեանն. եւ զոր ինչ ոչ գիտէին անօրէն հեթանոսքն, իմացուցանէր վասն ուխտին քրիստոնէութեան, եթէ որպիսի՞ հնարիւք կարացէ բառնալ յաշխարհէն Հայոց» (73—74):

Ակնարկուած երկու եղբարք, որոնք Փիլիպպոսի եղբոր որդիք են, հաւանօրէն որդիքն են Վասակայ, եղբոր Վահանայ եւ Փիլիպպոսի, ինչպէս կ'երեւայ, նաեւ Սահալիպպոսի, ինչպէս կ'երեւայ, նաեւ Սահալիպպոսի կայ: Այդ երկու սիւնի եղբարք էին «ի սուրբ ուխտին առաքինութեան», այսինքն 571ի ապստամբական շարժման համամիտ եւ նիզակակից: Անշուշտ հակառակութեան պատճառը այդ երկու երիտասարդ պատանիներու հանդէպ միայն անոնց քաղաքական տեսակէտները չէին. կ'երեւայ թէ Սիւնեաց տառուտերութեան յաջորդութիւնը հօրմէ որդի կը փոխանցուէր, եւ ոչ եղբորմէ եղբարց: Չորս եղբայրներէն երկրորդը՝ Վասակ ունէր Չորս եղբայրներէն սպանութենէն ժառանգներ. ուստի Վահանի սպանութենէն ետքը յաջորդութեան իրաւունքը Վասակի որդւոց երեցագոյնին կ'իյնար: Փիլիպպոս զանոնք ուխտապահ ամբաստանելով, հեռացուց զանոնք անյետադանալի կերպով եւ ինքը տիրացաւ տանուտէրութեան: Բունի ուժի առաջ տեղի տուած էին այդ եղբարք: Տարիներ յետոյ, հաւանօրէն Փիլիպպոսի մահէն ետքը, անոնցմէ մին դարձեալ ճայն կը բարձրացնէ պահանջելու իր իրաւունքը:

Այս մասին կը հաղորդէ մեզի տեղեկութիւններ Սեբեոս. «Ստեփանոս Սիւնեոյ պայքար[եալ] վասն տանուտէրութեան լեալ ընդ հօրեղբորն իւրում Սահակայ: Իսկ Սահակ դէէր ի վերայ նորա գիր մահապարտութեան եւ կնքէր մատանեալ իւրով եւ տանն եպիսկոպոսի (Քրիստափորի), եւ մատանեօք այլ եւս իշխանաց Սիւնեաց, յիշեցուցանել թագաւորին (Սոսրովու Բ.) զփնաս նոցա ապստամբութեանն: Յայնժամ հրաման ետ արքայն կապել զՍտեփանոս եւ զնել ի բանա(ի). եւ զլխատեցին զնա ի բուն աղուհացն ի Չատկի շարաթուն» (Սեբ. 58): Հոս ամբաստանութիւնն «զփնաս նոցա (նորա՞) ապստամբութեանն» կ'ակնարկէ անշուշտ Ատրպատական համարակարին դանձին կողպուալը (Սեբ. 48). բայց կարելի է թերեւս նաեւ 571ի ապստամբութեան մասնակցութիւնը եւ այս պատճառով ժառանգութեանն զրկուած ըլլալը ակնարկուած ըլլալ: Թէ այս Ստեփանոս Սիւնի մին է Փիլիպպոսի յիշեալ եղբորորդիներէն, կարելի է ենթադրել:

Այս պարագաներու մէջ Սիւնեաց տոհմաձառին այս ճիւղը կարելի է գծել\* այսպէս.



Դժուար է ըսել հաւաստեալ, թէ էջ 106, «Վասակի» դատաստանի առթիւ յայտնուած ամբաստանութիւնը, թէ «Վասակ» զի ոչ ըստ կարգի ունէր նա գտէրութիւն աշխարհին Սիւնեաց, այլ նենգութեամբ եւ քուտթեամբ ետ սպանանել զհօրեղբայրն իւր զՎաղինակ եւ յինքն տարաւ գտէրութիւնն իբրեւ քրտիկար յարքունիս» Վահանի՞ մասին իմանալու է, թէ Փիլիպպոսի. եւ առ հասարակ Վաղինակ անունը հարազատօրէ՞ն պահուած է, թէ կեղծեօք (հմմտ. § 49): Վերը տեսանք, որ Փիլիպպոս իր եղբորորդիները արտաքսած էր եւ անոնց «զկեանս» իւրացուցած:

\* Հմմտ. նաեւ Հանգ. Ամս. 1935, էջ 360—361: Ինչ ինչ ուղղուած է այստեղ:

Ոչ միայն մարզպանական Հայաստանի սահմաններէն ներս, այլ եւ անկէ դուրս գործունէութիւն կը շնորհուի Վասակ = Փիլիպպոսի: Ինչպէս տեսանք, ան «ոչ տայր դարար ամենեւին թագաւորին Պարսից. այլ յղէր եւ կոչէր գունդս բազումս ի պահակն ձորայ...» (73), զայն ամբացնելու համար ընդդէմ Հոնաց: Կ'ըսուի դարձեալ «քակեաց եւ զմիարանութիւն աշխարհին Վրաց ի Հայոց եւ Աղուանից ոչ ետ յառաջ խաղալ. եւ զաշխարհն Աղձնեաց (Արձախա՞յ) ըստ նմին օրինակի յետս կալաւ: Գրեաց հրովարտակս եւ յաշխարհն Յունաց...: Սոյնպէս առնէր եւ ընդ ամենայն կողմանս ամբականաց աշխարհին՝ ի Տմորիս եւ ի Կորդիսն (Չ. Կորդիս), յԱրցախն եւ յԱղուանն եւ ի Վիրս եւ յաշխարհն Սաղտեաց, յղէր պնդէր, զի ասպնջականութեան ոք (զփախստակա՞նսն) արժանի մի արասցէ» (72): «Չայս ամենայն իբրեւ արար եւ կատարեաց ըստ հրամանի (Չ. կամաց) թագաւորին, օր ըստ օրէ դէէր եւ ցուցանէր մեծ հազարապետին Պարսից» ի Փայտակարան (73):

Այս գործունէութիւնը, որ յառաջ կը բերուի յանուն Վասակ = Փիլիպպոսի, մասամբ արտաքին քաղաքականութեան կը հայր, եւ դժուար է մտածել, թէ Փիլիպպոս ինքը կատարած ըլլայ «ըստ հրամանաց արքայի», երբ հազարապետը սահմանի վրայ կը գտնուէր: Յամենայն դէպս Աղուանից յառաջխաղացութիւնը կարգիւէր ոչ Փիլիպպոս, այլ հազարապետի բանակին ներկայութիւնն ի Փայտակարան. նոյն պարագային վերագրելու է Վրաց աշխարհին անհամարձակութիւնը Հայաստանի օգնութեան հասնելու ըստ դաշնագրութեան: Անիմանալի է «զաշխարհն Աղձնեաց ըստ նմին օրինակի յետս կալաւ»: Այս հարաւակողման նահանգը շատոնց բաժնուած էր Մեծ Հայաստանէն եւ կը կառավարուէր բզեչխէ մը ուղղակի Տիգրանի հրամանին տակ: Եղիշէ թէպէտ յիշած էր (էջ 39) Աղձնիքը ի թիւս այն աշխարհներու, ուր պիտի բնաջնջուէր քրիստոնէութիւնը, բայց թէ մասնակցա՞մ էին Աղձնեցիք ապստամբութեան, խօսք չէր ըրած: Այն պարագան, որ քիչ յետոյ Արձախ եւ Աղուանք առանձին առանձին կը յիշուին, թէպէտ առաջինը երկրորդին մէկ նահանգը կը նկատուէր, կարելի է «զաշխարհն Աղձնեաց» ուղղել եւ իմանալ «Արձախայ»:

Եթէ Աղձնիք որ եւ է կերպով միարանած ըլլար «ուխտի», 572 աշնան պիտի թոյլ չտային իրենց Հոռոմայեցիք ասպատակելու այդ «բարեկամ» աշխարհը:

Շատ անյարիր կը թուի տեղւոյն վերջին հատուածը, ուր կը պակսի բնութեան խնդիրը. «ասպնջականութեան ոք արժանի մի արասցէ». գո՞վ: Միտքն է անշուշտ նախատեսութիւն մը, թէ պատերազմէն ետքը պիտի գտնուին փախստականներ, որոնք պիտի ապաւինին այդ կողմերու անմատոյց բերելը. եթէ առ հասարակ ուրիշ տեղէ հոս բերուած գետեղուած չէ (հմմտ. § 26, 3): Տմորիք եւ Կորդիք Կորձէից գաւառներն են, արտաքոյ մարզպանական Հայաստանի, բայց Պարսից տակ: Իսկ Սաղտեաց աշխարհը Հոռոմայեցուց իշխանութեան տակ էր. ուր ապաւինեցան յետոյ հայ փախստականներ: Առանձին պիտի խօսիմ «Յունաց աշխարհի» հետ յարարութեանց մասին:

Աւելորդ չեմ համարիր հոս նկատողութեան առնել այն կրկնութիւններն ասութեանց, որոնք կը տեսնուին Գ. յեղանակին մէջ, ինչպէս կը թուի արդիւնք խմբագրին անհոգութեան:

«Որպէս եւ նորա իսկ յառաջագոյն գատեալ եւ որոշեալ էր ի միարանութենէն Հայոց» (70) = Եթէ նա իւրովք զիւր անձն գատեալ եւ որոշեալ էր ի սուրբ եկեղեցւոյն» (70): «Յգէր եւ կոչէր զնա առ իմքն (70) = կոչէր առ իմքն զՎասակ» (73):

«Էր գոր կարասեալ, մեծաւ պարգեւօք եւ ստատածուն բաշխելով... եւ էր գոր հրամանաւ թագաւորին սաստիւ տագնապէր (73) = էր որոց ահ արկանէր եւ էր որոց սիրով պարգեւս բաշխէր» (73):

«Գրեաց եւ եցոյց... մեծ հազարապետին (72) = գրէր եւ ցուցանէր մեծ հազարապետին» (73):

Հազարապետն «յամուր որջն մտեալ... զիմքն քափուցանելով (67) = որ յօղեալ եւ քափուցեալ էր ի քաղաքն Փայտակարան» (73):

60. «ՎԱՍԱԿ» ՍՊԱՐԱՊԵՏ ՍՏՈՐԻՆ ԼԱՅՈՅ

Եղիշէ կը պատմէ թէ Վասակ = Փիլիպպոս ի մէջ այլոց «Գրեաց եւ հրովարտակս յաշխարհն Յունաց — ցուցանելով նոցա այլ ընդ այլոց ստութեամբ — առ այր մի, որում

Վասակ անուն էր, յայնց Մամիկոնէից, որ կան ի ծառայութեան Յունաց: Եւ ի չուսուութեան ժամանակին այրն այն սպարապետ էր Ստորին Հայոց, եւ հաւատարիմ էր զօրացն Հոռոմոց ի սահմանին Պարսից. եւ արտաքոյ (Չ. արտաքին) էր օրինացն նոցա (տպ. Աստուծոյ) գործովք իւրովք: Եղիտ այս Վասակ զայն Վասակ իւր գործակից ի մեծամեծ չարխն, զոր միարանեցին երկօքանն: Գրէր եւ ցուցանէր հանապազօրոյ նա (Փիլիպպոս), իբրու թէ ամենայն Հայք զինի նորա միարանեցին. եւ զնոյն գիր մեծաւ զգուշութեամբ ներքին Վասակն տայր տանել ի թագաւորանիստ քաղաքն Կայսեր. մինչեւ գտուր կպիսկոպոսացն զմիտսն ուժացոյց ի նոցանէ. եւ զամենայն զօրսն Յունաց երկօքայս արար յուխտէն: Մանաւանդ զի ի ձեռն սուտ քահանայիցն պատրէր եւ խարէր իբրեւ ճշմարիտ մարդովք, աւետարան հանդերձ խաչիւ տայր տանել. եւ զամենայն զիւր սատանայական ստութիւն նոքօք ծածկէր: Դնէր զինքն յաստուածաշտութեան կարգի եւ քան զամենայն կողմն ուրացելոցն առաւել զինքն հաստատէր հաստատուն քան զզօրսն ամենայն Հայոց: Երզնոյր եւ հաստատէր եւս եւ զամենայն հրամանս թողութեան յարքունուս՝ ցուցանէր: Այն էին եւ կամք Յունաց աշխարհին լսել զայն ախորժութեամբ. այլ ի ձեռն նորա առաւել եւս ի նոյնյեղեալ տապալեցան» (72):

Շատ թանկագին տեղեկութիւններ կը հաղորդէ հոս Եղիշէ, որոնք արժանի են մասնաւոր վերլուծութեան:

ա. «Մամիկոնեանք, որ կան ի ծառայութեան Յունաց»: Ե. դարու հայ մատենագրութեան անձանօթ են Մամիկոնեանք «ի ծառայութեան Յունաց». անոնց մասին խօսք չունի նաեւ Վազար Փարպեցի: Առաջին անգամ Յեսու ասորոյ ընծայուած ժամանակագրութեան մէջ կը յիշուի թէ 504ին, Յունաց եւ Պարսից ընդհարման մը ժամանակ Մծբինի քով, երբ մարզպանի բանակը կը խորտակի, Մուշեղիկ հայը, հպատակ Պարսից, իր գորագնդով անձնատուր կ'ըլլայ եւ կ'ենթարկուի Հոռոմայեցուց» (Chronique de Josué le Stylite, հրատ. P. Martin, Leipzig 1876, էջ 49): Կը համարիմ թէ այս Մուշեղիկ (Mouceleq) Մամիկոնեան մ'ըլլալու է, Վահան Մամիկոնեանի օրով, որուն որդիք եւ թոռնիկներն կազմեցին Հոռոմական Հա-

յաստանի մէջ Մամիկոնեան ճիւղ մը: Մամիկոնեան Մուշեղ մը կը յիշէ Ղ. Փարպեցի Վասանի զօրագունդին մէջ (էջ 143—151):

Բ. «Ստորին» կամ Ներքին Հայք: Հայաստանի 385ի բաժանման՝ Հռոմէական Հայաստանի թագաւոր մնաց Արշակ Դ.: Իրմէ վերջը երկիրը կառավարեցին կոմսերը («կոմսէք»): 528ին, երբ Յուստինիանոս նոր բաժանումի ենթարկեց հայկական նահանգները (Ա.—Դ. Հայաստան), անոնց կցելով Պողեմոնական Պոնտոսը, փոխանակ կոմսներու նշանակեց ընդհանուր զինուորական հրամանատար մը մագիստրոս տիտղոսով, այն է Magister militum per Armeniam et Pontum Polemoniacum et Gentes (Մագիստրոս զօրացն Հայաստանի եւ Պողեմոնական Պանտոսի եւ Ազգաց): Ուստի այս Մագիստրոսին իբրեւ իշխանութեան վիճակ յանձնուեցան ոչ միայն յառաջագոյն Հայաստանի կոմսին ենթակայ գաւառները, այլ եւ Հռոմէական Մեծ Հայաստան եւ Ստորագութիւնները, այնպէս որ բոլոր այս երկիրներն այնուհետեւ մէկ գիւնուորական շրջանակ կազմեցին: Գլխաւոր կայանն էր լաւ ամրացուած Թէոդոսիոյիսը, այն է Կարինը<sup>3</sup>: Այս կարգադրութիւնը տեղի ունեցաւ 528 կամ 529, մասնաւորապէս 536 տարւոյն:

Magister ի յունական յորջորջումն էր «ստրատեգոս», որ ապա նաեւ «ստրատելատ» (սպարապետ) կոչուեցաւ: Ստրատեգոս կ'ընտրուէր հայ իշխաններէն մէկը:

Այս նոր կարգադրութեան համաձայն Առաջին Հայք անուանուած գաւառը կը համապատասխանէր քիչ յառաջ հաստատուած Մեծ կամ Ներքին Հայոց (Armenia Inferior), բայց այնպէս մը, որ անոր տարածութիւնը նախկին Առաջին Հայքէն եւ Պոնտոսէ առնուած քանի մը քաղաքներով (Սատաղ, Նիկոպոլիս, Կիրասոն, Տրապիզոն եւն) զգալաբար ընդարձակուեցաւ եւ ասով մինչեւ Սեւծով հասաւ: Մայրաքաղաք նկատուեցաւ յառաջուան Բասանը (Bazanis), որ այժմ Յուստինիանուպոլիս կոչուեցաւ (անդ, էջ 69): Այս inferior (յն. ἐνδότεα) կրնայ թարգմանուիլ ներքին, ներքնագոյն եւ ստորին. Փաւստոս Դ. 23 կը գանազանէ վերնագաւառի Հայոց, որ է միջնաշխարհի եւ կողմանք ստորին գաւառաց, որ է Անգեղ տուն»: Մակարայեցոց Ա. ԺԵ. 69, Բ. Դ. 4, Ը. 8,

<sup>3</sup> Գաւառերը, Հոսմ, Հայաստան, 63—64:

Ժ. 11 *χοίλη Συρία* (կղեսուր), կը թարգմանուի Ստորին Ասորիք, ուր *χοίλος*. կը նշանակէ գոգ(ածեւ), խորին, ներքին. եւ Սաղմ. *δὲ κατώτατος*, le plus bas կը թարգմանուի ստորին, մինչ Յեսու ԺԵ. 1 *ἄνο* եւ *χάτω* կը հայացուին վերին եւ ներքին, այսպէս նաեւ Եփես. Դ. 9 ի ստորին կողմն երկրի, ուր յոյնն ունի *κατώτερος*, inférieur, plus bas. Ստորին եւ ներքին բաւերու նոյնիմաստ նշանակութիւնը կը հաստատէ Եղիշէ անձամբ, երբ Ստորին Հայոց սպարապետը քիչ յետոյ «Ներքին Վասակ» կը կոչէ:

Գ. «Վասակ սպարապետ Ստորին Հայոց»: Ծանօթ է Ստորին Հայոց մէջ *Βασάχης* (Վասակ) մը, որ նիգալակից էր այն Յովհաննէս Արշակունւոց, զոր Բուզէս, Սիտտասի յաջորդ ստրատեգոսը, սպաննած էր: Այս դէպքի վրայ Վասակ կը փախչի Պարսկահայաստան, բայց ապա կը վերադառնայ (Պրոկոպ. 162, 249): Այս կը պատահի 542ին: Կարող էր սա 572ին ի կեանս ըլլալ սպարապետի աստիճանի մէջ: Յամենայն դէպս չէ վկայուած թէ այս Վասակ Մամիկոնեան տոհմէ էր: Ինձ կը թուի, թէ ինչպէս Վասակ Սիւնի կեղծանունն է, նոյնպէս Վասակ Մամիկոնեան կեղծ ըլլալու է: Գիտենք այլուստ, թէ այս 572 տարւոյն Թէոդոսիոսի (Կարնոյ) հռոմէական բանակին ստրատեգոսն էր Յովհաննէս *ὁ τῆς Ἀρμενίας στρατάρχης*. տես վերը § 54). Եղիշէի այս տեղիքը կրնայ մեզի ազդուր ծառայել Յովհաննէսը Մամիկոնեան համարելու: Անոր յաջորդն էր հաւանօրէն Սորմէն ստրատելատ, որ դարուս վերջին տասնակիրն կը յիշուի:

Եղիշէի այս հատուածին իբրամէ անկախ ուղադիր եղած են Ն. Աղոնց եւ Հ. Յ. Տաշեան: Յատաջ կը բերեմ անոնց տեսութիւնները:

Ն. Աղոնց կը գրէ.  
«Եղիշէի համաձայն Վասակ Մամիկոնեան, մարզպանի կուսակիցը, «սպարապետ էր Ստորին Հայոց եւ հաւատարիմ զօրացն Հոռովմոց ի սահմանին Պարսից»: Ինչպէս կ'երեւայ «Ստորին Հայք» ըսելով կ'իմացուի ստորագութիւնը. կը հետեւի թէ Վասակ ստորագութիւնն մէկն է: Եղիշէի հարցրած այս տեղեկութիւնը չի խօսիր ի նպաստ իւր ինչպէս Ե. դարու մասնագիր: Յայտնի է, որ կայսերը ոչ ստորագութիւններու եւ ոչ

ալ Ներքին Հայաստանի մէջ զօրք եւ սահմանապահներ, ինչպէս եւ կողմնապահներ չէին պահեր, որովհետեւ այն կողման պահպանութիւնը յանձնուած էր տեղական ոյժին, մինչեւ ճիւղ 529 տարին, երբ առաջին անգամ անուանեց Յուստինիանոս. «ստրատեգոս Հայաստանի», եւ անոր ենթակայ երեք դուքսեր: Ինչ կ'իմանայ պատմագիրը «սպարապետ... զօրացն Հոռովմոց» ի Հայս ըսելով. եթէ անով ստրատեգոսն կամ դուքսերէն մէկը հասկնանք, անոր պատմագիրքը չի կրնար 529 տարին յառաջ գրուած ըլլալ: Այս Վասակի մասին Ղազար ոչինչ գիտէ. Եղիշէի այս տեղեկութիւնները պատմուած են այն հատուածներու մէջ, որոնք կը պակսին Ղազարի բնագրին համապատասխան տեղերը: Արդեօք Եղիշէի յիշեալ Վասակի մէջ չէ՞ թագնուած այն պատմական անձին եւ ապստամբ հայերու առաջնորդին յիշատակութիւնը, որուն մասին խօսած է Պրոկոպիոս: Պրոկոպիոս Վասակի մայրաքաղաք դալը կը դնէ 544ի պարսկական արշաւանքին: Այս ժամանակ երեք դուքսերէն մէկուն աթոռը գրաւեցին Կամսարականք ի Կթառիճ: Կարելի է, որ այն ատեն այս դուքսերէն մէկը նշանակուած ըլլայ, որ տեղական պայմաններուն լաւ ծանօթ էր, ուղարկուած Մարտիրոսոյիս, ուր կը նստէր դուքսը — պարագայ մը, որ հետաքրքրական է Եղիշէի քննիչներու համար»<sup>4</sup>:

Իսկ Հ. Տաշեան կ'արտայայտուի.  
«Սպարապետ Ստորին Հայոց կրնայ թարգմանութիւն ըլլալ Armenia interior թէեւ աւելի ուղիղ պիտի ըլլար «Ներքին Հայոց» բացատրութիւնը: Ասով կը հասկըցուէր՝ Թէոդոսի բաժանումէն ետքը մինչեւ Յուստինիանոս՝ «Կարնոյ աշխարհ» ընդարձակ մտօք (Սոր. Բարձր Հայք): Չենք բաղձար աւելի ու ժամանակ մղել՝ թէեւ աւելի յարմար էր ուրիշ կողմանէ: Բաւական խնդիր մըն է թէ ինչ շրջան հասկընալու ենք Եղիշէի «Սպարապետ Ստորին Հայոց» բացատրութիւնը: Որովհետեւ այս միջոցին — եթէ Ե. դար ընդունինք — «Հոռովմոց» Հայք իրենց նախարարագունդ զօրք ենթարկեալ էին ընդհանրապէս «Արեւելից Սպարապետութեան» (magister militum per Orientem կամ. յն. Stratēgōs Anatolēs եւ Յուստինիանոս (536ին) ստեղծեց «Հայոց

Սպարապետութիւնը» (magister militum per Armeniam, յն. Stratēgōs Armenias). աւելի յետոյ՝ Stratēgōs բառի տեղ կը գործածուի նաեւ Stratēlatēs «ստրատելատ»: Նոյն իսկ «Ստորին Հայք» կարծես աւելի համապատասխան է նոյն իսկ Մաւրիկի (591ին) բաժանման՝ Armenia Profunda ի: Բայց ասի տարրեր շրջան էր, եւ քանի որ «Ստորին» կրնայ = «Ներքին Հայք» ըլլալ, պէտք չկայ թերեւս այսչափ անապան ժամանակի միայն թէ Ե. դարուն Հայոց «Սպարապետ» պէտք էր որ ըլլար Դուքսը (Dux Armeniae, «Կոմս»): Եթէ սակայն Եղիշէ աւելի ուշ ժամանակի գրութիւնն է, — խնդիր մը՝ որ հոս մեր ծրագրէն դուրս է եւ կամ բնագիրը անապան սրբագրութիւն կրած, աւելի յարմար է Յուստինիանու ստեղծած «Ներքին Հայք» (Arm. Interior, յն. Endodatē այսինքն՝ Բաճր-Հայք, հին Ա. Հայոց մասեր (Փոքր-Հայոց Սատաղ-Նիկոպոլիս-Կոլոնիա շրջանը) եւ հին Պողեմոնական Պոնտոսի ծովեզերի մասը՝ Տրապիզոն-Կերասոն» (Հ. Յ. Տաշեան, Հին Հայաստանի արեւմտեան սահմանը, Վիեննա 1948, էջ 15—16):

Փիլիպպոս Սիւնոյ այս ջանքերու նպատակն հասկնալու համար աչքի առաջ բերելու է, որ Սոսրովի դեսպանը Սերուխտ Կ. Պոլիս ուղարկուած էր Կայսեր միտքը լրտեսելու համար: Յուստինոս բացայայտ խոստովանած էր, որ ինքը պիտի պաշտպանէր քրիստոնէութեան համար ոտք ելած եւ թագաւորին դէմ ապստամբած Հայերը: Բանակցութիւնները դեռ կը շարունակուէին: Պատերազմը դեռ չէր հրատարակուած: Սոսրով տակաւին պատրաստուած չէր պատերազմի: Ստիանելու համար պատերազմը կամ գոյն յետաձգելու համար, պէտք էր Կ. Պոլսոյ մէջ մտքեր շփոթեցնել, այն համոզումն յառաջ բերել, թէ թագաւորը անյիշուութեան կամ թողութեան հրովարտակ հանած է, եւ անոր հետեւութեամբ քրիստոնէական կարգերը վերահաստատուած են, ժողովուրդը խաղաղած է, կառավարութեան հետ հաշտուած. նոյն իսկ Կայսեր հետ կնքուած դաշինքին հակառակ է. ուստի չկայ այլ եւս պատճառ տժգոհութեան եւ պատերազմի:

Այս համոզումը ներշնչելու համար Փիլիպպոս Սիւնի սահմանէն դէպի Հռոմէական հող քահանաներ կ'ուղարկէ խոչով եւ աւետարանով, թղթեր կը հասցնէ Կ. Պոլիս

<sup>4</sup> Աղոնց, Васахъ, 126, ճ. 1 (տե՛ս § 5, ճ. 7):

եպիսկոպոսներու ի ձեռն «Վասակ» Մամի- կոնեանի:

Հաճելի էին այս լուրերը սահմանէն աս- դին, վասն զի չկար հոս տրամադրութիւն պատերազմի. «այն էին եւ կամք Յունաց աշ- խարհին», չթափել արիւն հայ քրիստոնեա- ներու համար:

Ոչ միայն Հոռոմէական Հայաստանի մէջ կ'ուժացնէր մարդկան սրտերը, այլ եւ Մեծ Հայաստանի նախկին սահմաններու մէջ գտնուող Հայերու եւ այլ քրիստոնեաներու զայրացած սրտերը խաղաղելու եւ անոնց համակրութիւնը դէպի ուխտապահներ թու- լացնելու համար թուղթեր կը տեղացնէ փի- լիպոս Սիւնի Մարգարանական Հայաստանէն դուրս եղած նախկին հայկական գաւառները:

61. ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Մինչ Խոսրով նախարարներու խորհուր- դով թողութեան հրովարտակ կ'ընդարկէր Հայաստան եւ անոր դաշնակից երկիրներ, կը փութար միաժամանակ դեսպանութիւն մը զրկել Կայսեր, լրտեսելու համար թէ կա՞յ իրօք Հայաստանի ապստամբութեան մէջ Կայսեր մտը, կամ թէ ի՞նչ ընթացք պիտի բռնէ Կայսրը Հայոց հանդէպ: Չայս կ'ակ- նարկէ Եղիշէ հետեւեալ տողերու մէջ, զոր կցած է վերջիշեալ ընդարձակ հատուածին. կը գրէ. «Եւ ինքն (արքայից արքայ) զաղտ խորամանկեալ փութապէս դեսպանս առա- քէր առ Մարկիանոս (Յուստինոս) Կայսր: Իրբեւ ստուգեալ ճշմարտեաց, եթէ Հոռոմք ի բաց կացին ձեռնառու լինել քրիստոնէու- թեան ոչ զօրու օգնականութեամբ եւ ոչ այլ ինչ իրօք, դարձեալ անդրէն ի նոյն կարծիս մոլորութեան շրջեցաւ: Չի ի յաջողութիւն իրացն ի ձեռն իւրոց պաշտօնէիցն հրա- մայէր. եւ այնպէս անէր զմտաւ, եթէ ըստ առաջին կարծեացն կատարիցեն զամենայն» (66): Սկզբնապիւր բազմօք փոփոխուած է Մենանդրէն գիտենք որ դեսպանն Սերուխա «ստուգեալ ճշմարտեաց, եթէ Հոռոմք» որո- շած են «ձեռնառու լինել քրիստոնէութեան զօրու օգնականութեամբ եւ այլ ինչ իրօք», եւ այս պատճառաւ ալ Խոսրով «զարձեալ անդրէն ի նոյն կարծիս մոլորութեան շրջե- ցաւ», այս ինքն «ի յաջողութիւն իրացն» միայն «ի ձեռն իւրոց պաշտօնէիցն» կարող

էր հասնել, այսինքն յաղթ բանակով մը նուաճել ապստամբութիւնը:

Այս դեսպանագնացութիւնը քաջ ծանօթ է Մենանդրին (հմմտ. § 54), որուն հաղոր- դագրութիւններու կարեւոր մասերը տեսանք վերագոյն (§ 54): Դեսպանութեան գլուխն էր Սերուխա, որ Կ. Պոլիս հասաւ 572 զար- նան: Իր նպատակն էր, ինչպէս կը գրէ Մե- նանդր, համաձայն Եղիշէի, լրտեսել գաղտ- նօրէն Կայսեր տրամադրութիւնն նկատմամբ Հայաստանի ապստամբութեան. բայց այն- պէս երեւցուց թէ եկած է ինքը դանձելու այն տարեկան տուրքը ի նպաստ Կովկասեան Դուռներու պահպանութեան, որուն մասին միարանած էին 562ի դաշնագրութեան ժա- մանակ: Իսկ Պարսկահայաստան տեղի ու- նեցած անցքերու մասին ցոյց տուաւ որ ան- տեղեակ է ինքը: Բայց եւ այնպէս հարցուց իրեն Կայսրը, թէ «կը հաճի արդեօք Սե- րուխա խօսիլ այն դէպքերու մասին, որոնք գործուած են Պարսից իշխանութեան տակ գտնուած Հայաստանի մէջ: Առ այս պա- տասխանեց Սերուխա, թէ լսած է ինքը իւր թագաւորէն, թէ ծագած ըլլայ հոն թեթեւ խռովութիւն մը, բայց թագաւորը ուղար- կած է հոն իր աշխարհի պատուաւորներէն մին, որպէս զի վերահաստատէ խաղաղու- թիւնն եւ հանդարտեցնէ խռովութիւնը»: Այն ատեն Յուստինոս յայտնապէս ըսաւ, թէ Պարսկահայերը որոնք ապստամբած են, դի- մած են իրեն, եւ ինքը ստած է զանոնք իր պաշտպանութեան տակ. ուստի չի կրնար ինքը թոյլ տալ, որ անոնց որ եւ է փնաս հասնի. որովհետեւ անոնք նոյն կրօնը կը պաշտեն ինչպէս ես»:

Չուր տեղ փորձեց Սերուխա փրկել խա- ղաղութիւնը. ընդվայր եղան իր ջանքերը հաւատացնելու Կայսեր, թէ իր թագաւորը հանդուրժող է քրիստոնեաներու հանդէպ: Ի վերջոյ դրաւ անոր առջեւ, թէ պատե- րագմի ելքը կարող է աննպաստ ըլլալ մէկ կամ միւս կողմին համար: Իսկ պատերագմի զրդպատճառը կրնայ վրիպիլ իր նպատա- կէն, այնու որ Պարսկաստան գտնուած բազ- մաթիւ քրիստոնեաները կարող են բնա- ջնջումի ենթարկուիլ: Յուստինոս, սակայն, ամէն դիւանադիտական պատշաճութիւն ան- տես ընելով գոչեց սպանական ծայնով դես- պանին. Եթէ Խոսրով համարձակի որ եւ է քայլ առնել Հայոց դէմ, պիտի քայլէ ինքը

բազմաձեռն բանակով անոր վրայ, դահն- կէց պիտի ընէ զանիկա եւ ուրիշի մը պիտի չնորհէ թագաւորութիւնը:

Կայսեր այս սպանական խօսքերուն պա- տասխանեց Խոսրով վերջնագրով մը. ուր կը մեղադրէր Հոռոմայեցիները, թէ 50ամեայ խաղաղութեան դաշնագրութեան հակառակ կը միջամտեն Պարսկահայաստանի գործերու մէջ. կը պահանջէր որ Կայսրը վճարէ դա- շինքով նշանակուած ոսկւոյ տուրքը. եւ չխառնուի Հայաստան տեղի ունեցած անցքե- րու մէջ:

Յուստինոս իր կողմէ հրատարակեց պա- տերագմ (572 աշուն):

Չայս կ'ակնարկէ անշուշտ Եղիշէ, երբ կը գրէ. «Յետ այսորիկ իրբեւ ետես զօրավարն Պարսից դնդին, եթէ հատան պատգամա- ւորքն ի միջոյ [խարել զնոսա] եւ բարձաւ յայս ակնկալութեանն իւրոյ ցրուել գնոսա յանգակ միաբանութեանն, յայցմամ... հրամայէր [ածել զառաջեալ գերամակս փղացն]...» (89). այսինքն թագաւորն Խոսրով հրա- մայեց, որ բանակը, որ կազմակերպուած էր, յառաջ խաղայ Փայտակարանէն (573 դա- րուն):

Կայսրը, որ անհոգ գտնուած էր պա- տերագմի պատրաստուելու, հրաման տուած էր Մարկիանոսի ձեռք ինկած զինուորներով Դարա մեկնիլ: Ասկէ ասպատակաւորներ ու- ղարկեց Մարկիանոս Աղձնիք, որ անպաշտ- պան էր. իսկ ինքը դնաց պաշարեց Մծրինը (572 աշուն):

62. ԳՂՈՆ ՄԻՆԸՐԱՆ ՄԻՆԸՐԵՆԱՆԳԱԿ

Պատերագմը հրատարակուած էր: Մինչ Յուստինոս առանց պատերագմի պատրաս- տուելու հրաման կ'արձակէր Մարկիանոսի երթալ եւ Մծրինը պաշարել, Խոսրով նա- խահոգ եղած էր ամբողջ տարի մը, ի ծա- ծուկ, Հայաստանի սահմանին մօտ զօրաժո- դով ընելու: Նա յաղթ բանակ մը պատրաս- տած էր արդէն ի Փայտակարան, երբ պատե- րագմը կը հրատարակուէր (572 աշուն): Ժամանակը աննպաստ էր թէ մէկ եւ թէ միւս կողման համար պատերագմական ձեռնարկու- թիւններու: Որովհետեւ պատերագմի զրդա- պատճառը Հայոց ապստամբութիւն եղած էր, կը սպասուէր, որ Հայաստան ըլլար մարտադաշտը. Կայսրը օգնութեան կը հաս-

նէր ապստամբներու, որոնք արքայից արքայի անմիջական սպանալիքի տակ էին եւ պէտք ունէին օգնական բանակի: Բայց Կայսրը ան- պաշտպան Աղձնիք ասպատակաւորներ կ'ու- ղարկէ, Մծրինը պաշարել կը հրամայէ: Խոսրով օգտուեցաւ այս հանգամանքէն եւ հրաման տուաւ իր զօրքին ի Փայտակարան կազմ եւ պատրաստ ըլլալ՝ զարնան յառաջ խաղալու դէպի Վրաստան եւ Հայաստան. նուաճել այդ երկիրները. ապա իջնալ Միջա- դետք պատահելու կայսերական բանակին:

Թէ մտահոգիչ էին պատերագմական ձեռնարկութիւնները երկու կողման համար ալ, կը զգացուի թագաւորին արտայայտու- թիւնէն. «Եթէ սպրեւցի անօրէնն այն (Վա- սակ = Փիլիպոս) ի մեծ պատերագմէն» (Եղիշէ, էջ 75). նոյնը կը կրկնէ Եղիշէ. «Եւ ստուգէր (թագաւորն) զիրս մեծի պատերագ- մին» (100). իսկ հազարապետի բերանը կը դուրի. «Եթէ լիցի մեր յաղթութիւն» (73). այդ եթէն ցոյց կու տայ, թէ հակառակ ա- մէն պատրաստութեան անստոյգ կը մնար մեծ պատերագմի ելքը:

Տեսանք վերագոյն, թէ Հազարապետն ի Փայտակարան կը յանձնէր պարսիկ զօրքը «Մուշկան Նիւսալուրտ» զօրագլխին եւ ինքը կը վերադառնար արքայից արքայի ձմե- րոցը, տեղեկատուութեան համար: Այդ զօ- րագլխին իսկական անունը անանգած է մեզի Սերիոս, հանդերձ կարեւոր տեղեկութիւննե- րով, որոնք առաջնորդ պիտի ծառայեն մեզի լուսարանելու Եղիշէի պատմութիւնը:

Սերիոս կը գրէ, թէ Վահրամ Վշնաս- պէն ետքը «եկն եւ Գ[ո]ղոնն Միհրան քսան հազարաւ զօրաց սպառազինաց եւ փղօք բազ- մօք. եւ ունէր ընդ ինքեան սաստարս բազումս ի ճամբարէ անթիւ ազգացն. [ընդ] որ բնա- կեալն են ընդ լեռնակողմամբ Կովկասու ազգք Հոնաց: Եւ հրաման (էր) յարքայէն, զի ան- ճետս արասցեն զարս ի յաշխարհէն Հայոց՝ իլիլ, բրել, յատակել, անխնայ յերկիր կոր- ծանել: Եւ եկեալ նա |||» (էջ 29): Այստեղ թուղթի մը կամ տողերու անկում կայ Սե- բիոսի բնագրին մէջ. պակասը մասամբ կա- րելի է լրացնել էջ 26 յառաջ բերուած կրկնութեամբ մը. «Գայ ապա ի վերայ նորա (Վարդանայ) Միհրան Միհրեւանդակ քսան հազարաւ զօրու եւ փղօք բազմօք: Եւ եղեւ պատերագմ մեծ ի դաշտին Խաղամախեաց. եւ հարեալ զօրն Պարսից անհնարին հա-

բուսածովք՝ մաշկին ի սուր սուսերաց-  
զփիղան ամենայն թափէին. [եւ Միհրանն  
(Միհրանեանք) սակաւուք պրծեալ գնա-  
ցին յերկիրն իւրեանց]: Իսկ էջ 29 վերոյի-  
շեալ հատուածը կը շարունակուի «||» բայց  
եթէ ուրեք յանմատոյց ամբողջաց ուրեմն  
մնացեալ ապրեցան մարդիկ. եւ կամ թէ ու-  
րեք ի հեռագոյն աշխարհս փախստական  
գնացին: Բայց սակայն ոչ կարացին բազումք  
ճողոպրել. քանզի զորս գտանէին (Պար-  
սկիք) սուր ի վերայ եղեալ սատակէին:

«Սա արար կռիւ մի ի Վիրս եւ պարտե-  
ցաւ. եկն ի Հայս եւ առ զԱնկղ սուտ երդ-  
մամբ» (Աեր. 29):

Զօրագլուխին անունը Սերիոս նախ  
«Միհրան Միհրեանդակ» կոչած է (էջ 26)  
եւ ապա «Գողոն Միհրան» (էջ 29), զոր պէտք  
է կարգաւ Գողոն, ինչպէս կ'ենթադրէ Սամ.  
Անեցւոյ «Ճիհր Վղոն» ընթերցուածը: Վեր-  
ջին անունն Գողոն ծանօթ է յոյն եւ ասորի  
մատենագիրներու լ'աւոյց, լ'աւոյց, Eglon  
գրչութեամբ. այսպէս կը կոչուէր պարսիկ  
զօրավար մը նախ քան զՔրիստոս 385ին,  
ուրիշ մը 504ին յետ Քրիստոսի, դարձեալ  
հեթեմաթ թագաւոր մը 528ին, ի վերջոյ մող-  
պետաց մողպետ մը Կաւաթի օրով՝ Glonazes  
(Justi, 116): Ուստի «Գողոն Միհրան» իմա-  
նալու է Գողոն՝ Միհրան տոհմէ: Անունս չէ  
ստուգարանուած. ուստի չենք կրնար ստու-  
գութեամբ ըսել թէ այն անձնանունն է, թէ  
պատուանունն: Իսկ Միհրեանդակ Միհրան  
անունին կից Հ. Հիւրշման կը ստուգարանէ  
պարսկ. \*Mihravandak, հայ. Mi՞rabanaka, «  
«ճառաց Միհր» (Arm. Gram. I. 52): Սերիոս  
այս անուամբ կը կոչէ նաեւ Վահրամ Զո-  
րինը, Վահրամ Վչնասպի որդին, «Վահրամ  
Միհրեանդակ, իշխան արեւելից աշխարհին  
Պարսից» (էջ 30). նա՛եւ Վահրամ Միհրան  
տոհմէ էր (Nöldeke, Tabari, 139): Աւելորդ-

թեան արժանի է, որ Թէոփանէս Բիւզան-  
դացի 573ին Մծրինի քով տեղի ունեցած ճա-  
կատամարտին մէջ պարսիկ զօրավարը Մե-  
րանոս կ'անուանէ Βαραμαάνης, իսկ Յովհ.  
Եղիպ. Βαραμάνης, զոր Nöldeke (անդ) կ'իմա-  
նայ «որդի Վահրամայ». ինչպէս ալ հասկը-  
նանք, կը մղուինք Միհրեանդակ անունը  
կրող այս երկու Միհրանները նոյնացնել.  
ուսկից կը հետեւի թէ «հազարապետն» Վահ-  
րամ Վչնասպ յանձնեց Փայտակարան հաւա-  
քուած զօրքը իր որդւոյն Վահրամ Միհրան  
Միհրեանդակի:

573 դարնան շարժեցաւ պարսկական բա-  
նակը Փայտակարանէն դէպի Վրաստան: Սե-  
րիոս կը գրէ. «Սա արար կռիւ մի ի Վիրս եւ  
պարտեցաւ»: Սերիոսի խմբագիրը, ինչպէս  
այլուր տեսանք (Հանդ. Ամս. 1938, էջ 133),  
չի հանդուրժեր, որ Արշակունիք պարտուին  
Սելեւկեաններէ. ուստի «պարտուեցան» կը  
փոխէ «յաղթեցին» եւ «յաղթեցին»՝ «պար-  
տեցաւ» ի: Նոյնը այս տեղ պատահած ըլլա-  
լու է: Վերք, որոնք առանձին մնացած էին,  
չէին կարող ի վիճակի ըլլալ պարսիկ յաղթ  
բանակին դիմադրելու: Գիտենք որ Գուրգէն  
Վրաց իշխանը կամ թագաւորը արդէն Կ.Պո-  
լիս փախած էր, երբ հասան հոն հայ  
փախստականները:

Վրաստանէն իջաւ Միհրան Միհրեան-  
դակ Հայաստան. ուր սուտ երդմամբ նուա-  
ճեց Անկղ բերդն եւ հոն ամրացաւ (573 դա-  
րուն):

Սերիոսի համաձայն Միհրան Հայաստան  
մտաւ «քսան հազարաւ զօրաց սպառազինաց  
եւ փղօք բազմօք». եւ «ունէր նա ընդ ինքեան  
սատարս բազումս ի ճամբարէ աղւացն, որ  
ընակեալ են ընդ լեռնակողմամբ Կովկասու  
ազգք Հոնաց»: Եղիշէի տողերը, թէ արքայն  
«գունդս գունդս յամենայն աշխարհացն զու-  
մարէր ընդ նմա եւ բազում երամակս փղաց  
յղէր ընդ նմա» ճշգրիտ կը համապատասխա-  
նեն Սերիոսի տեղեկութեանց: Չայս մա-  
սամբ կը հաստատէ նաեւ Յովհ. Եփեսացի.  
«Այս (571ի) կուռնէն... ետքն ալ բախեցան  
բանակներն իրարու հետ եւ Պարսիկները  
չառ սնկամ պարտուեցան եւ անոնցմէ փի-  
ղեր գերութեցան» (տե՛ս § 18): Իսկ Կաւկա-  
սեան լեռնականներու սատարութիւնն Պար-  
սից բանակին տեսանք արդէն վերագոյն.  
որուն վկայ էր նաեւ Թէոփանէս Բիւզան-  
դացի:

<sup>5</sup> Յովհ. Գրատեանակերտցի այս տեղիքն ունի.  
«Ի մամանակի ասա խորով արքայ Պարսից զօր բա-  
զում գումարեալ՝ տաքէ հրոսակս Վարդանայ. եւ  
ինի պատերազմ սատակի ի դաշտին խաղամախայ. եւ  
ի մշտաջան ազօթից արքայն Ներսեսի անհնարին հա-  
րաւածովք մաշն զօրքն Վարդանայ զՊարսիկսն» (էջ  
64 Ղուկ.): Գրատեանակերտցի մամանակը կ'են-  
թադրէ 553էն յետաջ եւ Ներսէս Առաքաղեցւոյ  
(548—557) օրով: Նայնք կրկնած է Վարդան Արեւելցի  
(էջ 7), որ նաեւ Սերիոսը ձեռքի տակ ունեցած է.  
«Ի մամանակս նորա (Ներսիսի) ստաքեաց խորով թա-  
գաւորն Պարսից հրոսակս, զի կայցեն գ՛վարդ(ան).  
եւ եղև մեծ պատերազմ ի դաշտին խաղամախայ (!)  
եւ կուտրեն զօրքն Պարսից ազօթիք սուրբ հայրա-  
պետին Ներսիսի»:

Եղիշէի համաձայն «Մուշկան Նիւսա-  
լաուերտ»ի, այն է Միհրանի յանձնուեցաւ  
«Միհրներսէ հազարապետի», այս ինքն  
Վահրամ Վչնասպի ի Փայտակարան կազմա-  
կերպած բանակն: «Իսկ յետ բազում ա-  
ւուրց զօրագլուխն Պարսից խաղաղք գայր ա-  
մենայն հեթանոսական բազմութեամբն. եւ  
եկեալ հասանէր յաշխարհն Հայոց [ի Հէր եւ  
ի Զարաւանդ] գաւառ: Եւ անդէն ի գաւա-  
ռին գտեղի առեալ նորա, բանակ բոլորէր,  
փոս հատանէր, պատնէչ կանգնէր, շերտա-  
ւոր փակէր, ամրացուցանէր իրրեւ գրադաք  
ամենայն պատրաստութեամբ: Գունդ բազում  
հատանէր ի զօրաց նորա (խրո՞ց), ասպա-  
տակաւ արշաւէր, յաւարի առնուլ կամէր  
զգաւառս բազումս» (81):

Այս տեղ «Հեր եւ Զարեանդ գաւառ»  
փոխառութիւն է Ղ. Փարպեցիէն, որ կը գրէ,  
թէ Վարդանեանք, երբ տակաւին Այրարատ  
կը գտնուէին (451 ապրիլ 8), «լուան, եթէ  
զօր եհաս բազում ի Հեր եւ ի Զարաւանդ գա-  
ւառ», անմիջապէս կը հաւաքուին եւ կ'ել-  
լին անոնց դէմ, յուսով թէ «թերեւս անդէն  
ի տեղւոն ի Հեր եւ ի Զարեանդ գաւառին  
վճարին ելք գործոյն պատերազմին եւ (ս)  
ոչ (ընդ) ոտն (տպ. ոք) լինէր (եւ) արդել  
զօրուն Պարսից հասանել յաշխարհն Հայոց  
սպանութեամբ եւ զերելով յարձակել եւ  
փրստել: Եւ սոցա թէպէտ եւ ածեալ գայս-  
պիսի ինչ զմտաւ կամէին փութալ, սակայն  
եւս առաւել ստիպով եկեալ հասանէին դունդն  
Պարսից ի գաւառն Արտաղ, հուպ ի գեօղն  
որ կոչի Աւարայր, ի շրջափակ տեղի տղմուտ  
գաշտին, զոր ընտրել (տպ. ընտրեաց) յա-  
ղագս երկիւղի զօրացն Հայոց՝ ամուր ա-  
պաստանի անձանց համարէին պատշաճ. եւ  
ի միջի նորա ածեալ զակիչ բանակէին»  
(Պարսիկք, 69): Ասկէ կը տեսնուի, որ Պար-  
սիկք Հեր եւ Զարեանդ գաւառն միջամուխ  
կը հասնին Արտաղ եւ Աւարայրի դաշտին  
վրայ բանակ կը դնեն Հայոց հոն համեմէն  
յառաջ: Մինչ Եղիշէի տեղեկութեանց հա-  
մաձայն Պարսիկք Հեր եւ Զարաւանդ գա-  
ւառի մէջ կը բանակին:

Փարպեցիէն կախումը լաւ եւս կը տես-  
նուի յաջորդ հատուածէն, որ փոխառու-  
թիւն է.

Ղ. Փարպ. 68—69. Եղիշէ.

Ատաբէր երանելի սպա- Չայն իրրեւ լուան զօրքն  
բազման Հայոց Վարդան, Հայոց, սեպուի մի յազ-  
մարանութեամբ աւա- գէն Ամատունեաց, Առան-  
գանոյն որ ընդ նմայն ձար անուն, ընտրեցին  
էին, սեպուի մի յազգէն յամենայն զօրականէն լի  
Ամատունեաց, որում ա- իմաստութեամբ եւ բա-  
նուն էր Առանար, իրրեւ ջութեամբ: Եւ ընդ առաջ  
երեք հարիւր հեծելով՝ նորա երկու հազարոք.  
երթալ լրտեսել զբազմու- հար սատակեաց զբազ-  
թին զօրացն Պարսից, եւ մութին գնդին, եւ գնա-  
տալ զբոլորս, եթէ հնար ցեալսն ի նոցանէ անդրէն  
լիցէ, առ ի փութապէս ա- ի բանակն փախստական  
սէ, զալ բերել մեղ զպսակ արկանէր: Եւ ինքն ող-  
արքայութեան... եւ եր- ջանդամ այսրէն դառնայր:  
թեալ Առանձար եւ գունդն եւ լինէր տօն ուրախու-  
որ ընդ նմա... տեսին թեան յաւուրն մեծի՞  
զրանակն Պարսից. եւ զօրացն Հայոց:  
զհօր վերջապահ թեով  
միով անկեալ՝ զբազումս  
հանէին ընդ սուր, եւ  
գայս փախստականս արարեալ արկանէին ի զօրն Պար-  
սից: Եւ ինքեանք զարձեալ ողջանդամք հասանէին ու-  
րախութեամբ ի գունդն Հայոց եւ պատէին նոցա  
զԱստուծոյ զօրութիւնն, զոր յաջողեաց նոցա Փրկիչն:  
Եւ լուեալ երանելոյ սպարապետին Վարդանայ հան-  
դերձ հիաստմուն զօրքն՝ զհանային եւ որհնէին գա-  
մենահօրն Աստուած»:

Եղիշէի համաձայն Պարսիկք դէպի Հայերը  
կը յառաջեն, որոնք կը գտնուին միջնաշ-  
խարհի մէջ:

«Եկն ի Հայս եւ առ զԱնկղ սուտ երդ-  
մամբ»: Այս բերդը կը գտնուէր Ծաղկոտն  
գաւառի մէջ Արածանոյ վրայ (Փարպ. 60-  
ասկէ Եղիշէ, 44). ըստ Պրոկոպիոսի 120 աս-  
պարկէ հեռու Դունէն, զժուարամատոյց լե-  
բան մը գահավէժ գաղաթի վրայ կառու-  
ցուած (տե՛ս § 50, ծան. 9), անոր ստորաբը  
կը գտնուէր Անկղ գիւղը: Հմմտ. Այրա-  
րատ, 318. Բագրեւանդ, 291—293): Այս տեղ  
զետեղուած էին Պարսիկք 450ին եւ հոս  
դարձեալ 569ին: Բերդին առումը եղած է  
«սուտ երդմամբ»: Հայ ուրացեալներու սա-  
ղանքով անշուշտ:

Եղիշէ Հայոց ընդհարումը Միհրանի  
հետ կը նկարագրէ վեցերորդ (տպ. հինգ-  
երորդ) յեղանակին մէջ, որուն խորագիրն  
է ըստ Վիեննայի Թ. 969 ձեռագրին «Կրկին  
անգամ ընդդէմ կալ Հայոց (Չ. Հայոց կալ)  
պատերազմաւ թագաւորին Պարսից», մինչ  
տպագիրն ունի պարզապէս «յարձակումն  
Արեւելեաց» (76): Իսկ էջ 5 նախարանին

<sup>6</sup> Կ'անկարկուի Պենտեկոստէից տօնը, որուն նա-  
խորդ շաբաթ օրուան մէջ էին ըստ Փարպեցւոյ (69):

1887-63



մէջ կ'ըսուի. «վեցերորդ՝ զընդդիմանարն Հայոց պատերազմաւ»:

Նախաբանին մէջ կը գրէ Եղիշէ.

«Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր. եւ այնպէս աներկիւզս առնէ զմարդիկ, իբրեւ զանմարմին զօրս հրեշտակաց. որպէս անդատին ի սկզբանէ է տեսանել ի բազում տեղիս: Որ սիրովն Աստուծոյ իբրեւ զինու վառեալք էին, ոչինչ ինայեցին զանգիտելով իբրեւ անարի վատասիրք, կամ ի մահ անձանց կամ ի յախշտակութիւն ընչից կամ ի խողխողումն սիրելեաց, կամ ի գերութիւն ընտանեաց, ելանել ի հայրենի երկրէն եւ անկանել ի ստրկութիւն յօտարութեան: Առ ոչինչ համարեցան զայս ամենայն անցս շարժարանացն, այլ միայն միարանեալ ընդ Աստուծոյ, զի ի նմանէ միայն մի՛ գերի ելցեն. եւ (քան զ)ամենայն երեւելի մեծութիւնս՝ զնա բաւական համարեցան ընտրել ի միտս իւրեանց: Եւ զուրացութիւնն մեռելութիւն վարկան. եւ զմահն, որ վասն Աստուծոյ՝ անանց կենդանութիւն. եւ ծառայել յերկրի՝ ազատութիւն կենաց իւրեանց. եւ ընկենուլ զանձինս յօտարութիւն՝ ընտաթիւն ընդ Աստուծոյ գիտացին»:

Որպէս յայտ ժամանակի տեսաք աչօք մերովք, զի զնոյն նահատակութիւն նահատակեցաւ աշխարհս Հայոց» (76):

Համառօտ բովանդակութիւնն է այս՝ ա՛յս 2. յեղանակին. ողերանութիւնը անոնց, որոնք անձնուիրութեամբ նահատակուեցան կրօնի ազատութեան համար, ինկան պատեարագմի մէջ իբրեւ պատուոյ դաշտի վրայ, ամբացան մնացեալները ամուր բերդերու մէջ, շարունակելու կոխը, եւ ուրիշներ զիմեցին յօտարութիւն պահելու համար իրենց բրիտանիցները:

«Յայսմ տեղոջ ոչ միայն ի վերայ միոյ ազգի է ողբումն այս, այլ ի վերայ ազգաց եւ աշխարհաց. զոր եւ յառաջ մատուցեալ ասացից ըստ կարգի, թէպէտ եւ ոչ ինչութեան մտօք: Ահա ակամայ ճառագրեմ բազումս. որպէս կորեան ոմանք առ ի ճշմարիտ կենաց իւրեանց եւ պատճառք եղեն բազմաց կորստեան, ոմանց երեւելեացս միայն եւ այլոց՝ երեւելեացս եւ աներեւութից: Եւ այն է՛ւս չար է քան զամենայն (զի) դուռն գար բացին կարստեան, Աստուծոյ միայն կարողութիւն է փակել գնա. այլ ըստ մարդկան սահման՝ անցեալ է հեար»

(69—70): Այս տրամադրութեան տակ ծնած են նաեւ տողերս. «Արդ... սկսցուք ուստի արժան է սկսանել, թէպէտ եւ ոչ յօժարիցիմք զթշուառութիւն մերոյ ազգիս ողբալ: Ահա ոչ ըստ կամաց՝ արտօսալից ողբովք ճառագրեմք զբազում հարուածս. յորում պատահեցաք եւ մեք իսկ ականատեսք լինելով» (6): «Չանցս իրացն պատմեմ... ոչ ի կարծ ընդոստուցեալ եւ ոչ ի լուր զարթուցեալ, այլ ես ինքնին անձամբ անդէն ի տեղուջն պատահեցի եւ տեսի եւ լուայ» (14):

Եղիշէ ոչ պատահամբ միայն «անդէն ի տեղուջն» գտնուած է, եւ ականատես եղած անցքերուն, այլ եւ պատերազմակից եղած է եւ իր հոետորական ճառերով խրախոյս կարգացած եւ քաջալեր հանդիսացած է պատերազմի դաշտին վրայ, իբրեւ նոր Ղեւոնդ մը:

Հայ բանակի որպիսութեան մասին լրտեսած էր պարսիկը: Այս կէտին երկիցս կ'անդրադառնայ Եղիշէ. նախ կ'ըսուի թէ տեղեկութիւններ հաւաքողն է Հազարապետը, լրատուն Վասակ = Փիլիպպոս: Եղիշէի տողերն են.

«Կոչէր առ ինքն զՎասակ եւ որք ընդ նմայն էին իշխանք ամենեքեան. բազում պարզեւս յարքունուստ շնորհէր նոցա եւ զօրացն որ ի նոցա բանի էին...: Հարցանէր եւ ստուգէր, թէ քանի՛ այր կայ ի Հայոց աշխարհին ի զնդին Վարդանայ ընդ ամենայն բազմութեանն: Իբրեւ լուաւ ի նմանէ, թէ աւելի քան զվաթսուն հազար, ինդրէր եւս տեղեկութիւն վասն իւրաքանչիւր անձին քաջութեան. եւ կամ քանի՛ այնոքիկ են որ սպառազէնք իցեն եւ կամ քանի՛ այնոքիկ են, որ մերկ առանց զինու աղեղնաւորք իցեն. սոյնպէս եւ վասն վահանաւոր հետեւակաց»:

«Եւ իբրեւ ուսաւ զթիւ համարոյ բազմութեանն, առաւել եւս փութացաւ ուսանել, թէ քանի՛ք իցեն պարագլուխք քաջ նահատակացն, զի երիս ընդ միոյ պատրաստեցէ առ մի մի ի նոցանէ: Թող զայն ամենայն, այլ եւ դրօշից անգամ իւրաքանչիւր տեղեկանայր ի նմանէ. եւ եթէ (ի) քանի՛ գունդ զօրք բաժանիցին եւ ո՛րք ի նոցանէ սողաք լինիցին եւ ո՛ր գորագլուխ, յորմէ՛ կողմանէ յուզմ մտանիցէ. եւ զի՛նչ անուանք իւրաքանչիւր համհարգացն իցեն. եւ քանի՛ փողահարք ի մէջ զնդին ձայնիցեն: Ղակի՛ջ գործիցեն արգեօք, եթէ արձակ բանակիցեն. ճակա՞տ առ ճակատ գործիցեն, եթէ հա-

մաղունդ ընդ մի տեղի դրդիցեն: Ո՞րք ի նոցանէ յերկրայս կայցէ եւ կամ ո՛րք գանձն ի մահ դնելով գուն գործիցէ:

«Եւ իբրեւ զայս ամենայն տեղեկացաւ ի նմանէ, կոչէր զամենայն զօրագլուխ(ս)ն, պատուէր հրամանի տայր ամենեցուն յանդիման նորա, զի խրատու նորա (Փիլիպպոսի) լուիցեն ամենեքեան» (74): Իսկ էջ 89 կ'ըսուի, թէ զօրագլուխը պատերազմէն յառաջ «յառաջ կոչէր զանօրէնն Վասակ եւ գաւեհայն ուրացեալ իշխանսն որ էին ընդ նմա յաշխարհէն Հայոց. հարցանէր զնոսա եւ ուսանէր ի նոցանէ զհնարագիտութիւն յաթութեանն: Եւ իբրեւ ուսեալ տեղեկացաւ գառն առն իւրաքանչիւր քաջութիւնս, կոչէր եւ զբազումս ի գորագլխացն, որ էին ընդ իւրով ձեռամբ եւ հրամայէր...» (89): Ընդգծուած տեղիքները գրեթէ բառ առ բառ ստուում են առաջինէն:

Ինչպէս տեսանք վերագոյն, «ամենեւին օղնական ոք ոչ գտաւ զնդին Հայոց» (73): Վարդան սպարապետ ունէր իր տրամադրութեան տակ հայ պատերազմիկներ միայն, հաւաքուած իր շուրջ հայ դաւառներէն: Անոնցմէ ալ ոմանք անջատուեցան եւ անցան Պարսից կողմը: Բնաշխարհի բոլոր անոնք, որ կարող էին որ եւ է նպաստ մատուցանել պատերազմի, ոտք կանգնած էին: Անոնց թուին մէջ նաեւ Եկեղեցականները: Զօրքը կանոնաւոր ոտձիկ չունէր: Ժողովուրդը կը պարենաւորէր բանակը: Հակառակ ամէն անպատահանքներու մէկ սիրտ, մէկ հոգի, որոշած էին կուռել: Եղիշէ կը գրէ.

«Իբրեւ ետես Մեծն Վարդան գերկառակութիւն աշխարհին իւրոյ, ոչինչ թերահաւատութեամբ զանգիտեաց: Թէպէտ եւ ստուգեալ գիտաց զբազմաց այլոց եւս երկմտութիւն, որ դեռ եւս ընդ նմա միարանեալք էին», բայց եւ այնպէս «քաջալերեցաւ յանձն իւր եւ քաջալերեաց զզօրսն իւր. քանզի ինքն իսկ դեռ բռնացեալ ունէր զթագաւորանիստ տեղիսն միարանութեամբ նախարարացն, որ ոչ քակեցան ի սուրբ Ուխտէն: Հրաման տուեալ ամենայն զօրացն ժողովել յԱրտաշատ քաղաք: Փոխանակ յետս կացելոցն, որ ելին զհետ իշխանին Սիւնեաց, զեղբարս կամ զորդիս կամ զեղբարցն որդիս ի տեղիս նոցա մատուցանէր. եւ զիւրաքանչիւր զօրս տան նոցա (տայր ի ձեռս նոցա): Զի դեռ եւս ինքն ունէր զամենայն աշխարհն»:

Եւ ամենեքեան փութով ի տեղի պատերազմին եկեալ հասանէին իւրաքանչիւր զօրօք եւ ամենայն հաստատութեամբ: Նոքա եւ որ բունքն հաստատուն կացեալ էին ի տեղուջն...: Եւ ամենայն գործակալքն արքունի իւրաքանչիւր զօրու հանդերձ...: Եւ լինէր հանդէս համարուն վաթսուն եւ վեց հազար այր ընդ հեծեալ եւ ընդ հետեւակ: Եկին եւ եւս ընդ նոսա եւ սուրբքն Յովսէփ (կաթողիկոսն Յովհաննէս) եւ Ղեւոնդ (Եղիշէ՞) երէց բազում եւ այլ եպիսկոպոսք եւ բազմազոյն քահանայք եւ պաշտօնեայք: Քանզի ոչ ինչ զանգիտեցին եւ նոքա գալ ընդ նոսա ի գործ պատերազմին: Զի ոչ եթէ մարմնական համարէին զկուռն, այլ հոգեւոր առաքինութեան: Յանկային մահակից լինել քաջ նահատակացն» (76—77):

ՃԱԿԱՍԱՎԱՅՐԸ

Եղիշէ շատ բացայայտ կը գրէ, թէ Վարդան սպարապետ «հրաման տուեալ ամենայն զօրացն ժողովել յԱրտաշատ քաղաք... եւ ամենեքեան փութով ի տեղի պատերազմին եկեալ հասանէին իւրաքանչիւր զօրօք»: Բայց քիչ յետոյ իշխանացանկ մը գետեղելով — փոխառութեամբ ըստ մեծի մասին Փարպեցիէն (տե՛ս § 47, 15), կ'աւելցուի. «Սոքա ամենեքեան համադուռք հասանէին ի գործ պատերազմին ի դաշտն Արտազու» (77): Անձանթ է պատմութեան «դաշտն Արտազու»: Ղ. Փարպեցի, որմէ փոխ առնուած է «Արտազ», հետեւեալ դէպքի մէջ կը յիշէ զայն. 451 ապրիլ 8էն սակաւ ինչ յետոյ կը լսեն Վարդանեանք, թէ «զօր եհաս ի Հեր եւ ի Զարեանդ գաւառ». կ'աճապարեն այդ զօրաց առաջն առնել, որպէս զի միջնաշխարհ չիջնան: Մայիս 25ին\* կը հանդիպին պարսիկ բանակին, որ զակիչ ամեալ գետեղուած էր զգուշօրէն «ի գաւառն Արտազ, հուպ ի գեօղն որ կոչի Աւարայր, ի շրջափակ տեղի տղմուտ դաշտին» (Փարպ. 68—69): Այն տեղ կը տրուի ճակատամարտը: Եղիշէ էջ 90 միւսանդամ կ'անդրադառնայ այս ճակատամարտին եւ կը գրէ, թէ Վարդան «կարգէր եւ կազմէր զճակատն... ընդ ամենայն երեսս դաշտին դէմ յանդիման Արեաց զնդին, առ ափն Տղմուտ գետոյն»: Կը լսէ

\* Փարպ. 69. կ'ըսուի. «յառուր ուրբաթու մեծի տօնին Պենդէկոստէին». այսինքն տօնին նախորդ ուրբաթ օրը, որ կ'էնայ 25 մայիս:

յիշել Աւարայր գիւղը: Անունս յիշուած կը դռնեմ Եղիշէի քով Ը. Յեղանակին մէջ միայն, էջ 147. ուր կ'ըսուի. «նովաւ եւ դաշտն Աւարայրի պայծառացեալ ծաղկալից լինի»: «Դաշտն Արտագու» այս տեղ եղած է «դաշտն Աւարայրի», իսկ Ղ. Փարպեցոյ «տղմուս դաշտը» վերածուած է հոս «Տղմուս գետի»: Թէ այս տեղ Սմբագրին ձեռքը պէտք է տեսնել, եւ անոր անուշաղիբ ընթերցումը Փարպեցոյ տողերուն, եւ ի վերջոյ անհամար թիւեր Արտագ դաւառի տեղագրութեան, կը համարիմ թէ ամէն կասկածէ վեր է: Ուստի պէտք է Հայաստանի աշխարհագրութեան գրքերէ եւ Պատմութեան դասադիրքերէ ջնջել «Տղմուս գետի» գոյութիւնը, եւ Փարպեցոյ տեղիքն այնպէս հասկնալ, թէ դաշտավայրը, ուր տեղի ունեցած է յիշեալ պատերազմը, եղած է տղմուս, այսինքն տղմային, մօրական:

Մասնաւոր ուշադրութեան արժանի է Եղիշէի այն տեղիքը, ուր կ'ըսուի. «Քանդիւնքն իսկ (Քաջն Վարդան) դեռ բռնացեալ ունէր զթագաւորանիստ տեղիսն միարանուծեամբ նախարարացն, որ ոչ քակտեցան ի սուրբ ուխտէն... զի դեռ եւս ինքն ունէր զամենայն աշխարհն» 573ին, եւ իր տրամագրութեան տակ 66.000 զօրք: Վերադոյն (§ 53) տեսանք, թէ Վարդան 571ին գրաւեց Միջնաշխարհի կարեւոր բերդերը, կոտորեց, հարածական վարեց պարսիկ զօրքը եւ իր զօրջին տակ առաւ «զթագաւորանիստ տեղիսն»: Իսկ 451ին, երբ կարմիր Վարդան Աւարայրի դաշտին վրայ կը կուռէր, Հայաստանի մարդպանն էր Վասակ, եւ այս հանգամանքով նա ինքն էր, որ «ունէր զամենայն աշխարհն»: Ուստի տարբեր ժամանակներ, տարբեր հանգամանքներ:

Թշնամին տեսանք Անդղ բերդին մէջ ամբացած: Վարդան, որ զթագաւորանիստ տեղիսն ի ձեռին ունէր, զօրքը կը հաւաքէ Արտաշատ: Պատերազմը տեղի կ'ունենայ «մեծ դաշտի» վրայ:

Սերիոս, եւ իրեն հետեւելով Յովհաննէս կաթողիկոս պատմարան, Միհրանի եւ Վարդանի մղած ճակատամարտին վայրը կ'անուանեն «Սաղամախեաց դաշտ»: Դաշտս կը յիշուի նոյն կամ յաջորդ տարւոյն միւսանգամ, ուր ուխտապահներու հետ բախում մը

կ'ունենայ նաեւ Փիլիպպոս Սիւնեաց տէր (Սեր. 29):

Դուինի (եւ Արտաշատի) շրջանը կը կուռէ քաղաքուղաւտ. «Ե. Ժողով արար Բարդէն ի Բաղաքուղաւտի» (Գիրք թղթոց, 220):

«Սաղամախեաց դաշտ» ընթերցուածի հարազատութեան մասին չեմ ուզեր կասկած լրբայց կը դժուարիմ տալ անոր ստուգարանութիւնը, որովհետեւ չունինք հայերէնի մէջ խաղամախի արմատ: Հիւրճման, Հին Հայոց տեղւոյ անուններ, էջ 360 կը կարգայ կաղամախիք եւ կը հարցնէ «ինչ է Կաղամախիք»: Երասխի հովտին կաղամախներու գոյութիւնը կը յիշէ Կուրտիոս (Հայրուսակ, էջ 285): Փաւստոսէ (Գ. 7) դիտենք, որ Դունոյ դաշտին վրայ Սոսրոյ Ա. Կոտակի հրամանով տնկուած են կաղնատունի տունկեր, այսինքն «վայրենի կաղին մայրեաց»: Տարօնի մէջ կը յիշուի «Կաղամախեաց բլուր» Արածանոյ մօտ (Յովհ. Մամիկ. 50, 53): Ասկէ կրնայինք մտածել, թէ Սաղամախեաց դաշտն ալ Կաղամախեաց ըլլայ: Հ. Մ. Չամչեան «Սաղամախ» դաշտը կ'ենթադրէ Մարդաստանի մէջ, այն է Վասպուրականի շրջանին:

Ինչպէս ալ ստուգարանել ուզենք, այն անտարակոյս կը մնայ, թէ Սաղամախեաց դաշտը Արտաշատի շրջակայքը պէտք է փնտռել. յայն կոյս Երասխի տափաստանը:

Ռազմադաշտը կը կտրէր գետ մը, որ կը հոսէր Արտաշատի առջեւէն: Հայերը հաւաքուած էին Արտաշատ: Պարսիկները կը գտնուէին յայն կոյս Երասխի. եւ չհամարձակեցան անցնել միւս կողմը. Ժամանակը զարնանային էր, ուստի յորդած պէտք է ըլլար գետը. Հայք, որոնք լաւածանօթ էին անշուշտ հոններու, անցան յայն կոյս, թերեւս խնայելու համար քաղաքին եւ այն տեղ ապաւինած ժողովուրդին, եւ բախեցան թշնամոյն ձեռնամխի: Կ'ըսուի թէ «հնչունն ձայնից զքարանձաւս լեռանցն շարժէր» (91): Յայս կոյս գետին կոյին լեռնադաշտեր եւ լեռնահովիտներ, ուր «զկնի մնացեալ էր» հայ բանակին մէկ մասը (91): Կուրը տեղի ունեցած է միջնաշխարհի մէջ. վասն զի պատերազմէն անմիջապէս ետքը լսելի եղած են «ճշխն կանացեացն եւ ողբք ի վերայ սիրելեացն, աշխարանք մերձաւորացն, վայ եւ աւաղ բարեկամացն» (92):

ԶՕՐԱՆԱՆԿԵՍ

Երբ «Միհրանի» կը հարցաքննէր զ«Վասակ Սիւնի» ի մասին հայ բանակին, կը պատասխանէր, թէ Հայ զօրաց թիւն է «աւելի քան զվաթսուն հազար» (74): Իսկ Արտաշատի զօրահանդէսին «լինէր հանդէս համարուն՝ վաթսուն եւ վեց հազար այր՝ ընդ հեծեալ եւ հետեւակ» (77): Տարի մը յառաջ երբ ոտք ելած էին Հայերը Սուրէն մարդպանի դէմ, Յովհ. Եփեսացոյ համաձայն՝ հայ զօրքին թիւն էր 20.000 (Բ. 20. § 18): Այս համեմատութեամբ 66.000 շատ մեծ թիւ կը ներկայանայ):

Ասոնց դէմ պարսիկը հանած էր, ըստ Եղիշէի եօթնապատիկ աւելի, առանց շօշափելի թիւ մը նշանակելու: Սերիոսի համաձայն Միհրան ձեռքի տակ ունէր 20.000 սպառազէն զօրք. ասոնցմէ զատ նաեւ անթիւ լեռնականներ:

ՌԱԶՄԱՃԱԿԱՆ

Պարսկականը:

Միհրան «կարգէր կազմէր զզօրսն ամենայն. եւ տարածանէր երկայնէր զճակատն յերկայնութեան մեծի դաշտին (Սախամախեաց): Եւ իւրաքանչիւր գազանացն (փղացն) յաջմէ եւ յահեկէ գերեքհազար սպառազէնս պատրաստէր: Եւ զընտիր ընտիր նահատակացն շուրջ զիւրեաւ գումարէր: Եւ այսպէս ամբացուցանէր զզօրն Մատեան իրբեւ զաշտարակ մի հզօր եւ կամ իրբեւ զբերդ մի անմատոյց: Նշանս բաշխէր, զրօշս արձակէր. եւ ի ձայն մեծի փողոյն պատրաստ հրամայէր լինել: Իսկ զզօրն զԱպարհայիկ եւ զԿատաշաց եւ զՀոնաց եւ Գեղաց եւ զայլ եւս ընտիր մարդիկ զօրուն ի մի վայր ժողովէր եւ պատուէր հրամանի տայր ընդ աջմէ կողմանէ իւրոյ զնդին պատրաստ լինել ընդդէմ Հայոց զօրագլխին (90):

Հայկականը:

«Իսկ արին Վարդան յառաջ մատուցեալ եւ գաւազանին հարցանէր. եւ միարան ամենեցուն խրատուք զզօրագուխն կարգէր: Զզօրնդն առաջին տայր ի ձեռն իշխանին Արծրունեաց եւ նիզակակից նման զմեծ իշխանն Մովսէս. եւ զայլ ամենայն նախարարեան համահարգս երկոցունց. եւ զամենայն

բազմութիւն զնդին թիւս աստի եւ անտի կազմէր նոցա: Եւ զզօրնդն երկրորդ տայր ի ձեռն [Սորենայ] Սորիսոռունեաց եւ նիզակակից նմա զԼինձայինն եւ [զԵրեսէ Քաջբերունի]: Եւ զզօրնդն երրորդ մատուցանէր ի ձեռն [Թաթլոյ Վանանդացոյ] եւ նիզակակից նմա [զՏաճատ Գնթունի], եւ զրազումս ի քաջ արանց աստի եւ անտի թիւս նոցա: Յանձն իւր առնոյր զզօրնդն չորրորդ եւ նիզակակից իւր զքաջն [Արշաւիր] եւ [զհարազատ եղբայրն իւր զՀամազասպեանն]: Կարգէր եւ կազմէր զճակատն յորդորելով ընդ ամենայն երեսս դաշտին դէմ յանդիման Արեաց զնդին առ արին [Տղմուս] գետոյն (90):

Փակագծի մէջ առած եմ այն անունները, որոնք Ղ. Փարպեցիէն փոխ առնուած են (Փարպ. 71): Այս եւ էջ 77 յառաջ բերուած իշխանացանկերու մասին տես վերը § 47, 15:

ՎԱՐԳԱՆԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Եղիշէ երկու բանախօսութիւն գետեղած է այս Զ. յեղանակին մէջ՝ խօսուած ճակատամարտէն յառաջ, մին Վարդան սպարապետէն ուղղուած զօրքին (77—81) եւ երկրորդը «Ղեւոնդ» երէցին (էջ 82—88) աւելի երկար: Երկուքին մէջ ալ կը տեսնուի խրամագրին ձեռքը: Կարեւոր կը համարիմ յառաջ բերել Վարդանի ձառն հետեւեալ տողերը, որոնք պատմական արժէք ունին:

«Ի բազում պատերազմունս մտեալ է իմ եւ ձեր ընդ իս. է ուրեք զի քաջապէս յաղթեցաք թշնամեացն, եւ է ուրեք զի նոքա մեզ յաղթեցին. եւ բազում այն է ուր յաղթող գտեալ եմք եւ ոչ յաղթեալք: Եւ միանգամայն այն ամենայն մարմնոյ պարծանք էին, քանզի հրամանաւ անցաւոր թագաւորի մարտնչէաք. եւ որ փախչէր, վատանուն աշխարհի երեւէր եւ անողորմն մահ ի նմանէ գտանէր: Իսկ որ քաջութեամբ յառաջ մատուցէր, քաջ անուն ազգի ժառանգէր եւ պարգեւս մեծամեծս [յանցաւոր եւ] ի մահկանացու թագաւորէն ընդունէր: Եւ մեք աւաստիկ յիւրաքանչիւր մարմինս ունիմք վէրս եւ սպիտ բազումս. եւ բազում այն քաջութիւն իցէ, վասն որոյ առեալ է պարգեւս մեծամեծս: ... Իսկ արդ եթէ վասն մահկանացու հրամանատուին զայն արութիւնս կատարէաք, որչափ եւս առաւել վասն անմահ թնայ

գաւորին մերոյ, որ տէր է կենդանեաց եւ մեռելոց... Արդ աղաչեմ զձեզ, քաջ նիզակակիցք իմ, մանաւանդ զի բազումք ի ձէնջ լաւագոյնք են քան զիս արութեամբ եւ գաւոր ի վեր ըստ հայրենի պատուոյն. բայց յորժամ ձերով կամօք եւ յօժարութեամբ առաջնորդ եւ զօրագլուխ ձեզ կացուցէք, հեշտ եւ բաղձալի թուեսցին ձեզ բանքս իմ, ի լսելիս մեծամեծաց եւ փոքունց:

«Մի երկուցեալ զանգիտեսցուք ի բազմութենէ հեթանոսացն եւ մի՛ յահազին սրոյ առն մահկանացուի զթիկունս դարձուցուք: Զի եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձեռսմեր, սատակեսցուք զգորութիւնս նոցա, զի բարձրացի կողմն ճշմարտութեան. եւ եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտիւ. բայց միայն յարութիւն քաջութեանս վատութիւն մի խառնեսցուք [...]:»

«Իսկ արդ յերկուս եւ յերիս կոխու Տէրն ինքնին մեծաւ զօրութեամբ օգնեաց մեզ, որպէս զի զանուն քաջութեան ժառանգեցաք, զգորսն արքունի չարաչար հարաք եւ զմոզան անողորմ սատակեցաք եւ զպղծութիւն կուպաշտութեանն ի տեղեաց տեղեաց սրբեցաք: Զանօրէն հրաման թագաւորին եղծաք սպախանեցաք, զխոտվութիւն ծովուն ցածուցաք, լեռնանցեալ ալիքն դաշտացան, բարձրագէզ փրփուրն սպառեցաւ, գազանացեալ սրամտութիւն դադարեաց: Որ ի վերայ ամպոց որոտայր, նկուն եղեալ՝ գտաւ ի ներքոյ քան զսոլորական բնութիւնն ընդ մեզ խօսելով: Որ բանիւ եւ հրամանաւ կամէր կատարել զչարութիւնն ի վերայ սուրբ եկեղեցւոյ, արդ աղեղամբ եւ նիզակաւ եւ սրով կոռելի: [...] Հաստատուն կացէք յանշուշտ զօրագլուխն մեր, որ ոչ երբեք մոռացի զգործ նահատակութեանս: Ով քաջք, մեզ այս մեծապէս է, զոր կատարեաց Աստուած ի ձեռն մերոյ բնութեան, յորում եւ զօրութիւնն Աստուծոյ մեծապէս երեւի: Զի եթէ զայլս կոտորելով ի վերայ աստուածային օրինացն՝ պարծանս անձանց ժառանգեցաք եւ զքաջ անուն ազգատոճմին մերոյ թողաք եկեղեցւոյ, եւ վարձուց ահնկալութիւն ի Տեառնէ է, որ պահի իւրաքանչիւր ումեք ի ձէնջ ըստ յօժարութեան սրտին եւ ըստ առաջարկութեան գործոց...: Եւ արդ եկն եւ հաս ժամանակ... չէ մեզ մարդ զօրավար,

այլ զօրագլուխն ամենայն մարտիրոսաց: Երկուք թերահաւատութեան է՝ նշանակ. զթերահաւատութիւնն մեք ի մէնջ վաղ մերժեցաք. ընդ նմին եւ երկուք փախիցէ ի մասց եւ ի խորհրդոց մերոց...:

Զայս ասէր եւ անդէն ի դաշտին զտեղի առեալ զտեղէր զգորսն. եւ յամենայն կողմանց տակաւ զայրուծին գումարէր» (77-81):

Ղեւոնդի բանախօսութիւնը, տեղւոյն անյարիր, կը թուի ինձ թէ իմբազրին կարկատանքն է հետեւողութեամբ այն համառոտութեան, որով յառաջ բերած է Փարպեցի Ղեւոնդի խօսած ճառը (Փարպ. 70): Վարդանի ճառին մասը կը համարեմ տողերս.

«Գիտէք դուք ամենեքեան, յառաջ ժամանակաւ հասեալ ձեր ի գործ պատերազմի, թէպէտ եւ էր ձեր սովորութիւն՝ քահանայից հանապազորդել ի մէջ բանակիս, ի ժամ ճակատուցն յանձնեալ ձեզ ի նոցանէ աղօթիւք՝ յամուր տեղւոյ ուրեք թողուիք զնոսա. իսկ այսօր եպիսկոպոսք եւ երիցունք եւ սարկաւազունք, սաղմոսերգուք եւ գրակարգացք իւրաքանչիւր կարգեալ կանոնաւ՝ իրր վառեալք զինու եւ պատրաստեալք ի պատերազմ, կամին ընդ ձեզ յարձակել հարկանել զթշնամիսն ճշմարտութեան: Եւ եթէ մեռանել եւս հասանէ ի նոցանէ, սակայն եւ յայնմանէ ոչ են զանգիտելոց. քանզի լաւագոյն զմեռանելն կամին քան զմեռուցանելն» (էջ 87):

«Ազգակեաց ամենայն բազմութիւնն զօրացն եւ ասեն. Հաւասարեցէ մահ մեր ընդ մահու արդարոցն, եւ հեղունն արեան մերոյ ընդ արիւն սուրբ մարտիրոսացն: Եւ հաճեսցի Աստուած կամաւոր պատարագաւ. եւ մի տեսցէ զեկեղեցի իւր ի ձեռս հեթանոսաց» (88):

Ղազար Փարպեցւոյ ազգեցութեան տակ է իմբազիրը, երբ կը գրէ. «Որպէս երանելի երէցն Ղեւոնդ հրաւան առեալ ի սուրբ ընկերակցացն ի մեծէն Յովսէփայ եւ յամենայն մեծամեծացն... ասէ բարձր բարբառով...» (82 = Փարպ. 70). «ցայս վայր խօսեցաւ ի գիշերին յայնմիկ սուրբ երէցն Ղեւոնդ... եւ սեղան ուղղեալ զամենասուրբ խորհուրդն կատարեցին... եւ ընդ առաւօսն սուրբ օրինացն հաղորդեցան» (88 = Փարպ. 71):

ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Երկու կողմէ դաշտի երկարութեան զէմաւ դէմ զիրք բռնած էին Հայերը եւ Պարսիկներ: Անոնց մէջէն կ'անցնէր գետը, զոր Երասխ կ'անուանեմ: «Երկու կողմանքն... մեծաւ բարկութեամբ զայրանային եւ զագանացեալ զօրութեամբ յիրեարս յարձակէին» նետ եւ նիզակարձակութեամբ: Կամաց կամաց յառաջանալով «խումբ արարեալ ամենայն բազմութեանն զգետն ի մէջ փակէին: Եւ զանգիտեալ զունդն Պարսից ի դժուարութենէ գետոյն՝ գտեղեաւն գետալ սկսան»: Պէտք է նկատի առնել, որ «գարնանային էր ժամանակն» (92). յորդած էր գետը դարիս եւ դարիւ. այս էր պատճառը, որ Պարսիկ զորքը վախցաւ «ի դժուարութենէ գետոյն». եւ չհամարձակեցաւ կտրել անցնիլ կամըջասաստ գետը: «Իսկ գունդն Հայոց, որոնք անշուշտ գիտէին գետին հունները, հասեալ անցանէին (ըստ գետն), ձի ի վերայ առեալ յարձակէին մեծաւ զօրութեամբ» թշնամույն վրայ: «Սաստկապէս բախեալք ընդ միմեանս, յերկոցունց կողմանցն բազում վիրաւորք յերկիր անկեալ զիսթաւալ խաղային»:

Վարդան տեսնելով որ Պարսիկք «զձախակողմն շարժեցին զՀայոց գնդին, մեծաուժով յարձակէր ի տեղին եւ զաջ թեւն գնդին Պարսից բեկեալ՝ արկանէր զգազանօքն. եւ շրջան առեալ կոտորէր մինչեւ ի նոյն տեղի: Եւ այնպէս շտապ տաղնապի ի վերայ հասուցանէր, մինչեւ գունդն Մատեան քակտեալ բաժանեցան ի մեծամուր պատրաստութենէն, դեռ եւս քաջ քաջ ի փախուստ դառնային»:

Այս միջոցին Պարսիկը կը նկատէ հեռուն հայ գունդն զասալիքներ. «գոմանս քակեալ տեսանէր ի գնդէն Հայոց եւ զկնի մնացեալ ի հովիտս լեռանցն: Վասն որոյ գաղաղակ բարձեալ՝ քաջալերէր շուրջ զիւրեաւ զգորսն Արեաց, որք գտեղի առեալ կացին ընդդէմ գնդին Վարդանայ: Եւ անդէն ի տեղւոյն երկօքին կողմանքն զպարտութիւն խոստովանէին. եւ առ յոյժ թանձր անկեալ զիսկանց իրրեւ զքարակոյտս զերբկաց երեւէին (վայրեն):»

«Զայն իրրեւ ետես Մուշկանն Նիւալաւուրտ, մնայր գազանացն Արտաշրի, որ ի վերայ գազանացն նստէր ի բարձր գիտանոցին իրրեւ յամուր քաղաքի. եւ ի ձայն մեծ դալարափողոցն զիւր գունդն ստիպէր: Եւ

յառաջամարտիկ զօրօքն զնա (զՎարդան) ի մէջ փակէր: Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցօքն ոչ սակաւ նախճիրս զործէր ի տեղւոյն» (91/92):

Այս տողերուն կը կցուի տեղիքս. «Յորում տեղւոյ եւ ինքն (Վարդան) արժանի եղեւ առնուլ զկատարեալ նահատակութիւնն»:

Աւարայրի պատերազմի մասին Ղ. Փարպեցի այսպէս կը գրէ. «Եւ բաժանեալ յերիս սուաջս զգորսն Հայոց սրբոյն Վարդանայ... յարձակէին ի վերայ միմեանց երկօքին կողմանքն, Հայոց եւ Պարսից... եւ զգորսն Պարսից ի փախուստ դարձուցանէին գառաջինն: ||| (հոս հարկ է թղթի մ'անկում ենթադրել, ուր կը պատմուէր պատերազմի շարունակութիւնն եւ Վարդանի նահատակութիւնը, որուն հետեւութեամբ կը քայքայի բանակը. շարունակութիւնն է այժմ.) «Իսկ այլ բազմութիւն զօրացն Հայոց, որք առ հարկի եւ ոչ կամաւ, ... անդէն ի փախուստ դարձեալ կորնչէին...: Եւ տեսեալ զօրացն Պարսից զգունդն Հայոց լքեալս... ի մէջ առեալ շուրջ գնդօք պատեալ ծովանային...» (էջ 72) եւ կոտորէին: Թէ Եղիշէի իմբազիրը ունէ՞ր աչքի առաջ այս կորսուած թուղթը եւ անոր համաձայն եւ ոչ ենթադրարար գրած է Կարմիր Վարդանի մահը, կը մնայ խնդրական: Իսկ իմադամախեաց դաշտի հերոսը՝ Քաջն Վարդան ելաւ պատերազմէն ողջանդամ: Խմբագիրը Վարդանի մահուամբ պատերազմը վերջացած կը ներկայացնէ: Որ եւ է խօսք չ'ըներ, թէ Հայք փրկեր գերի առին, ինչպէս կը յիշեն Սերբոս եւ Յովհ. Եփեսացի:

«Եւ յերկարել գործոյ պատերազմին՝ օրն տարաժամէր. եւ մօտ առ երեկս կարճատէր: Բազմաց օրահասք մահու հասանէին. մանաւանդ ի թանձրութենէ անկեալ զիսկանցն մօտ առ մօտ խտացեալ իրրեւ զփայտահարս մայրաւորաց...: Եւ որք մնացեալքն էին, վատնեալք եւ ցրուեալք լինէին ի լեռնագաշտս եւ յամուրս ձորոցն: Եւ յորժամ պատահէին միմեանց, դարձեալ միւսանդամ զմիմեանս սատակէին: Եւ մինչեւ ցմուտս արեգականն անդադար լինէր գործ դառնութեանն: Եւ քանզի վարնանային էր ժամանակն, ծագկալից դաշտքն դառնային յորդահոսանս արեանց բազմաց...: Քանզի ոչ եթէ կողմն էր որ յաղթեաց եւ կողմն էր որ պար-

տեղաւ, այլ քաջք ընդ քաջս ելեալ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան» (92):

Այս տեղ ունինք խմբագրէն նաեւ դիտողութիւնս.

«Բայց քանզի անկեալ էր զօրավարն Հայոց ի մեծ պատերազմին, ոչ ոք զոյր այնուհետեւ ի միջի զլիսաւոր, յոր յեցեալ ժողովէին զունդքն մնացելոցն: Թէպէտ եւ բազում այն էր որ ապրեցանն քան եթէ որ մեռանն, սակայն ցանեալ ցրուեցան: Եւ հասեալ անկանէին ի տեղիս տեղիս յամուրս աշխարհին եւ բռնանային ի վերայ բազում գաւառաց եւ բերդից, զոր եւ ոչ առնուլ իսկ ոք կարէր» (92/93):

«Եւ այս են անուանք քաջ նահատակացն, որ անդէն ի տեղուջն կատարեցան»: Խմբագրելը յառաջ կը բերէ հոս այն իշխանացանկը, զոր կազմած էր Ղ. Փարպեցի, այն տարրերութեամբ, որ խմբագրելը իշխաններու անուններու կից յիշած է իւրաքանչիւր տոհմին կորուստները: Մինչ Ղազար «Հատ խուզիւ եւ բազում քննութեամբ հարցեալ եւ ուսաք, կ'ըսէ, զնահատակելոցն թիւս, որք ի տեղուջ պատերազմին պսակեցան ընդ աւագ նախարարսն՝ ՄՀՁ այր, որք լինին միահամուռ ՌԼԶ այր» (72). Եղիշէի խմբագրելը, որպէս «ի տեղուջն պատահեալ», Աւարայրի կռուին մէջ վկայողներու թիւը կ'ընծայէ 287 + 9 = 296, իսկ արտաքոյ կռուին սպանուածներու թիւը գիտէ 740: Չարմանայի կերպով միահամուռ գումարը երկուքի քով ալ ճշգրիտ 1036 կը ներկայանայ, թէեւ Ղազարի քով տասնեակ մը նուազ է կա'մ կռուի մէջ եւ կա'մ կռուէն դուրս ինկողներու թիւը. այսինքն կամ 276 կարգալու է 286 եւ կամ 750՝ 760: Պիտի հարցնենք, ինչո՞ւ Ղազար աւելորդ հարցաքննութիւններու անձնատուր եղած է, քանի որ ճիշդ թիւը «Եղիշէ» մանրամասնօրէն աւանդած էր իրմէ յառաջ: Չէ՞ գտնուած ժամանակակիցներէն մէկը, որ Ղազարի մատնացոյց ընէր Եղիշէի ոսկէմատեանը (Հմմտ. § 47, 16): Հետաքրքրական է զուգարկութիւնը, որ մինչ Հայք իրենց կորուստին մէջ կ'ունենան «ինն մեծամեծ նախարարս» (անոնց թուին մէջ է նաեւ «յազգէն Գնուենաց մանուկն Վահան»), նոյնպէս Պարսիկներու 3544 ինկողներու թուին մէջ «ինն այր ի նոցանէ ի մեծամեծ պատուաւորացն էր» (93): Վերջիններուս համար կը գրէ Ղ. Փարպեցի. «իսկ ի զօրացն

Պարսիցն որք անկան ի պատերազմին յաւուրն յայնմիկ, զոր ստուգիւ համարեալ պատմեցին մեզ տեղեկացեալք(ն) ի զօրագլխացն Պարսից, 3544 այր» (Փարպ. 73): Կ'երեւայ թէ նաեւ Եղիշէի խմբագրելը նոյն աղբիւրէ տեղեկացած է (!):

Բայց անըմբռնելի պիտի ըլլայ մեզի այդ Խմբագրի մանկական միամտութիւնը, եթէ նկատի առնենք, որ ան նախորդ էջերու մէջ նկարագրած էր մեզի «մեծ պատերազմ» մը (էջ 75, 100), ուր Հայոց կողմէ 66.000 եւ թշնամույն կողմէ անոր եօթնապատիկը իւրաւոր կը բախուին ահաւոր սաստկութեամբ, ամբողջ օր մը զիրար կը կոտորեն գազանացած, մեծ դաշտին վրայ «յերկոցուց կողմանցն բազում վիրաւորք յերկիր անկեալ թաւալեալ խաղային» եւ «առ յոյժ թանձր անկեալ զիականց իրրեւ զբարակոյտս դերկաց երեւէին», «մանաւանդ ի թանձրութենէ անկեալ զիականցն մօտ առ մօտ խտացեալ իրրեւ զփայտահարս մայրաւորաց», եւ սակայն յաջորդ առաւօտեան երբ հաշիւ կ'ընեն, Հայոց կորուստը 296 եւ Պարսիցը 3544 զինուոր կ'ըլլայ: Եթէ «քաջք ընդ քաջս ելեալ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան», անոր համաձայն նաեւ անկեալներու թիւը համապատասխան համեմատութիւն մը կ'ենթադրէ: Նոյն եզրակացութեան պիտի յանդիմնք նաեւ այն ժամանակ, երբ կ'ըսուի թէ «բազում այն էր, որ ապրեցանն քան եթէ որ մեռանն». անշուշտ թէ մէկ եւ թէ միւս կողմէն: Այն ստոյգ է որ նոյն գիշերն իսկ Հայերը փախուստի զիւած էին, թողլով պատերազմի դաշտը Պարսիկներու:

Պարսիկը կ'ողբայ «զանհարին հարուածան եօթնապատիկ զիւրոյ զնդին քան զՀայոցն» (93): Եթէ պարզ թուարանական դործողութեան ենթարկենք այս հաշիւը, պիտի ստանանք համեմատութեամբ 3544 պարսիկ անկեալներու՝ Հայոց կորուստը 506, ուստի ոչ 296 ըստ Խմբագրին: Իսկ եթէ նկատենք պարսիկ բանակին սպառազէն զօրքի թիւը 20.000 ըստ Սերիոսի եւ ընդունինք անոր կէսը կոտորուած, Հայոց կորուստը եղած պիտի ըլլար իրը 1500. յամենայն զէպս աւելի ստուար բանակներու ի տես 1:7 համեմատութեամբ: Սերիոս կը գրէր. «հարեալ զգօրն Պարսից անհարին հարուածովք մաշէին ի սուր սուսերաց. զփիզսն զամենայն թափէին»:

Եւ ոչ զարմանալի եւ ոչ ալ անհաւատալի պէտք է երեւայ Սերիոսի այս հաւատաւոր, նկատի առնելով, որ Հայք կը կռուէին հայրենի հողին համար, քրիստոնէական եկեղեցւոյ ազատութեան համար, անագորոյն թագաւորի սպառնալիքի տակ, կեանքի եւ մահուան երկընտրանքի առաջ: Իրենք, որ արտաքուստ որ եւ է օգնական չէին ունեցած, թողուած էին իրենց ոյժին: Յաղթութիւն չէին կրնար ակնկալել, բայց կարող էին բեկանել թշնամույն ոյժը. եւ այսպէս նպատակ մատուցած ըլլալ կայսերական բանակին, որ կը կռուէր Մծրինի առջև:

Այս պատերազմը Եղիշէի Պատմութեան մէջ չորս անգամ անուանուած է «Մեծ պատերազմ» (75, 94, 96, 100): Եւ կը զգացուի արդեամբք ճակատամարտի նկարագրութեանէն, թէ իրապէս եղած է մեծ եւ ահաւոր: Երկու կողմերն ալ կրած են մեծամեծ վնասներ: Պատերազմը տեւած է ամբողջ ցորեկ մը, առաւօտէն մինչ մայրամուտ: Վերջ տուած է մթութիւնը: Պատերազմի ելքը մնացած է անորոշ. «քանզի, կը գրէ Եղիշէ, ոչ եթէ կողմն էր որ յաղթեաց եւ կողմն էր որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան»:

Թէ հայն եւ թէ պարսիկը գիշերուան մթութիւնը իրենց պաշտպան ընտրած զիմեցին լեռներ եւ հովիտներ թագստոց փնտուելու: Հայերը տեղեաց քաջամտութեամբ ցան մօտաւոր եւ հեռաւոր ամբողջութեաներու մէջ. եւ շարունակեցին կռիւը սաստկութեամբ:

Յաջորդ առաւօտ ահաւոր տեսարան մը կը բանար ռազմադաշտի վրայ: «Եւ քանզի զարնանային էր ժամանակն, ծաղկալից դաշտքն դառնային յորդահոսոսն արեանց բազմաց: Մանաւանդ յորժամ տեսանէր ոք զբազմակոյտ զիականցն անկելոց՝ սիրան բեկանէր եւ աղիքն գալարէին (ի) լսել զմիջիւն խոցելոցն եւ զմոռչիւն բեկելոցն, զթաւալը յոր խաղալ վիրաւորելոցն, զսրտաթափումն անարի արանցն, զճշիւն կանացեացն, զողբս ի վերայ սիրելեացն, զաշխարհս մերձաւորացն զվայ-աւաղ բարեկամացն» (92):

Իսկ Պարսիկը «կարի յոյժ ի խոր խոցեցաւ... իրրեւ ետես զանհարին հարուածան՝ եօթնապատիկ զիւրոյ զնդին քան զՀայոցն, բեկաւ անկաւ զօրութիւն ուժոյն իւրոյ. եւ

ոչ հանդարտէր կալ ի վերայ խորհրոց մտացն. քանզի ոչ որպէս կարծէր՝ [զ]պատերազմն կատարեցաւ: Մանաւանդ իրրեւ հայէր տեսանէր զբազմութիւն անկելոց իւրոյ կողմանն. եւ թիւ համարոյ եւս առնէրս եւ իրրեւ այնչափ յորով գտանէր զիւր անկեալսն քան զՀայոց զնդին, եւս առաւել վասն երեւելի արանցն, զորս յականէ եւ յանուանէ զիւր թագաւորն, ի մեծ տազնապի լինէր այրն յանձն իւր: Արդարութեամբ զիրան գրել եւ ցուցանել՝ ի թագաւորէն երկնչէր. դարձեալ եւ թագուցանել եւս ոչ կարէր, քանզի ոչ ծածկէր այնպիսի մեծ կռիւ» (93—94):

Երկու բոթարեր սուրհանդակներ ի միասին կը հասնէին Տիգրոն, զուժելու երկու պարտութիւններ պարսկական բանակներու: Մէկը Հայաստանէն էր, երկրորդը Մծրինէն: Երկուքի հրամանատարներն ալ Միհրան տոհմէ էին: Մծրինի քով, Սարգաթոն դաշտի վրայ տեղի ունեցած էր պատերազմը 573 զարնան սկիզբը, ուր կորսնցուցած էին Պարսիկները 12.000 հոգի եւ տուած 70.000 գերի (§ 55): Թագաւորը ցնցուած էր մեծապէս. «զի յոյժ բեկաւ զօրութիւն նորա, որպէս զի երկոքին կողմանքն նորա հարան» (94):

Անշուշտ Եղիշէի Սկզբնագիրը շատ աւելի ընդարձակ եւ մանրամասնութիւններով տուած էր այս պատերազմի նկարագրութիւնը. բայց Խմբագրելը հարկադրուած էր պայն համառօտելու՝ շատ չհեռանալու համար Ղ. Փարպեցւոյ հետքերէն: Այսպէս անյիշատակ թողուցած է թէ պատերազմի ժամանակ Հայերը գերի բռնած են փիղեր, զոր կը յիշեն թէ Սերիոս («զփիղան զամենայն թափէին») եւ թէ Յովհ. Եփեսացի (Բ. 21 «անոնցմէ փիղեր գերուեցան», § 18):

Այս տեղ կը վերջանար Եղիշէի Զ. Յեղանակը: Յաջորդ Յեղանակի նիւթն է Յերկարումն իրացն խոսովութեան» (էջ 5):

63. ՅԵՐԿԱՐՈՒՄԻ ԻՐԱՅՆ ԽՈՍՎՈՒԹԵԱՆ  
Կայսրը խոստացած էր ասպնջականութիւն շնորհել այն Հայերուն, որոնք Խոսրովի վրէժխնդրութենէն փախստական պիտի գիւմէին իր պաշտպանութեան: Ասկէ կարելի է հետեւցնել, թէ ուխտապահ Հայերը նախատեսած էին սպաղան: Վարդան իր բովանդակ ոյժը նետած էր ճակատ. շունէր պա-

հետի գունդ. վասն զի «ամենեւին արտա-  
քուստ օգնական ոք ոչ գտաւ զնորին Հայոց».  
մինչ պարսիկը արդէն թուով բազմածեան,  
կարող էր տրամադրել պահեստի զօրքի  
վրայ. բաց աստի ունէր հնարաւորութիւն  
հայթայթել նոր ոյժ «ի մօտաւոր կողմանց  
աշխարհին», ինչպէս որ իրօք «հասեալ բա-  
զում պրուծի՝ յաւելոյր ի թիւ անկերցն եւ  
լինէր գունդ բազմութեան իբրեւ զառաջինն»  
(98):

Այս պատճառաւ երբ կոխեց մութը եւ  
անկարելի եղաւ շարունակել պատերազմը,  
հրաման տուաւ Վարդան իր զօրքին դիմել  
փախուստի մութի հովանուցն տակ: Թերեւս  
յառաջուրն նախատեսուած էր նախարարա-  
կան գունդերու գրաւելը բերդերը: Երկրին  
բնիկները, որոնք տեղեակ էին ճանապարհ-  
ներուն, կարող էին մթութեան մէջ իսկ  
գտնել ամբողջութեանը:

Փախուստի դիմած էին նաեւ թշնամի-  
ները: Եղիշէ կը գրէ, թէ «եւ որք մնացեալը  
էին՝ վասնեալք եւ ցրուեալ լինէին ի լեռնա-  
դաշտս եւ յամուրս ձորոցն (Հայք եւ Պար-  
սիկք). եւ յորժամ պատահէին միմեանց,  
զարձեալ միւսանգամ զմիմեանս սատակէին»  
(92):

Հայ նախարարք «հասեալ անկանէին ի  
տեղիս տեղիս ամուրս աշխարհին եւ բռնա-  
նային ի վերայ բազում գաւառաց եւ բերդից,  
զոր եւ ոչ առնուլ իսկ ոք կարէր» (93): Այլք  
դիմեցին Սաղտեաց աշխարհ, արդէն յունա-  
կան հողի վրայ, ուրիշներ «ի կողմանս հա-  
րաւոյ յանմատոյց ամուրսն Տմորեաց» եւ  
զարձեալ ոմանք «ի թանձրախիտ մայրինս  
Արձախայ. եւ այլ ոմանք ոմանք անդէն ի  
միջոցի աշխարհին բռնացան ի վերայ բա-  
զում ամրոցացն» (97): Վերջիններէս էին  
«մեծ ամուրք Կապոյտ լերինն» ի միջոցի աշ-  
խարհին (98):

Անոնց հետեւեցան իրենց ընտանիքի ան-  
դամները, ինչպէս կը գրէ Եղիշէ. անոնք  
«քաջախիբէին զմիմեանս եւ ասէին. Ձի՞ պիտոյ  
է մեզ բնաւ կեանք անցաւոր աշխարհիս եւ  
կամ ընդէ՞ր տեսանեմք զարեւ յետ մերոց  
սիրելեացն: Ձի եթէ քաջ նահատակքն մեր  
անկան ի մեծ պատերազմին եւ բազում վի-  
րաւորք տապալեցան յարին յապաժոյժ ի  
մէջ զաշտին, եւ ամենեցուն մարմինքն եղեն  
զէջ թռչնոց եւ կերակուր զազանաց, եւ պա-

տուական նախարարքն մեր հասին յանար-  
գութիւն թշուառութեան, լքին զլեւաքան-  
չիւր իշխանութիւն եւ են ի հալածանս նե-  
ղութեան, որ եւ ամենայն փափկութիւն  
Հայոց եհաս ի վիշտս վտանգի եւ յանհարին  
ապականութիւն, ոչ անսամք խաբերայ հրա-  
մանացդ եւ անկանիմք ի ձեռս անօրէն իշ-  
խանացդ:

«Թողին այնուհետեւ իւրաքանչիւր զգեօլս  
եւ զաւանս եւ զագարակս. ելին հարսուէր  
յառագաստից եւ փեսայք ի սենեկաց, անկան  
ծերք յաթոռոց եւ տղայք ի զրկաց. երթային  
երիտասարդք եւ կուսանք եւ ամենայն. բազ-  
մութիւն արանց եւ կանանց, հասեալ ունէին  
զամուրս անապատին եւ զանխար տեղիս բա-  
զում լերանց...: Քանզի բազումք ի յազգէ  
մեծ նախարարացն էին, եւ եղարք եւ որ-  
դիք եւ զստերք հանդերձ ամենայն սիրելեօքն  
իւրեանց ի մէջ ամբական վայրացն... զայս  
միայն խնդրէին յԱստուծոյ, մի՛ տեսանել  
նոցա զաւեր սուրբ եկեղեցեացն» (96—97):

Որ եւ է խօսք չենք գտներ եկեղեցական-  
ներու փախուստին մասին այժմեան Եղիշէի  
մէջ: Թէպէտ Յովհ. Եփեսացի տեսած է ի  
Կ. Պոլիս Հայոց կաթողիկոսն եւ անոր շուրջը  
բազմաթիւ եպիսկոպոսներ եւ քահանաներ:  
Այս կէտը շօշափել հաճելի չէ երեւցած  
Սմբագրին, որովհետեւ իր ծրագրին չէր հա-  
մապատասխաներ: Նա պէտք ունէր «Սուրբ  
քահանայից», իր Պատմութեան վերջաւորու-  
թիւնը Ղ. Փարսեցեոյ Պատմութեան համա-  
ձայն աւարտելու համար: Յովսէփ կաթ.,  
Ղեւոնդ երէց, Սահակ եպիսկոպոս, Սա-  
մուէլ, Արրահամ, Քաջաջ, Արշէն եւն պէտք  
է ներկայանային Տիգրոն Վասակի դատաս-  
տանի համար իբրեւ դատախազ եւ ի վերջոյ  
նահատակուէին (էջ 100 եւ շար.):

Երբ լուսացաւ երկրորդ օրը ռազմագաչ-  
տին տէրն էր Միհրան. որ փութաց հաւա-  
քել զօրքին մնացորդն եւ այրացաւեր ընել  
երկիրն եւ բնակչութիւնը, որ չէր կրցած  
փախչել, կոտորել: Իսկ բերդերու մէջ ամ-  
բացած փախստականները փորձեց նախ հրա-  
պոյրով եւ ապա գէնքի ոյժով նուաճել: Բայց  
բախեցաւ դիմադրութեան: Բերդականները  
ոչ միայն դիմադրեցին, այլ եւ անցան յար-  
ձակողականի, տեղ տեղ նոյն իսկ պարսկա-  
կան հողերու մէջ միջամուխ:

Դժբախտաբար ամբողջ այս Յեղանակը  
— որուն բովանդակութիւնն որ եւ է նմա-  
նութիւն չէր կրնար ունենալ Փարսեցեոյ  
Պատմութեան հետ, այնպէս կրճատուած,  
նոր յաւելուածներով խաթարուած եւ հա-  
տուածներու տեղափոխութեամբ այլայլուած  
է, որ դժուար է իրաց ժամանակագրական  
զարգացումը վեր հանել:

Սերիոսի համաձայն պատերազմէն ետքը  
Հայերը անկարող շարունակելու կոխը՝ փա-  
խուստի դիմած են. պատմագրին թերի տո-  
ղերուն շարունակութիւնն է. «բայց եթէ  
ուրեք յանմատոյց ամրոցաց ուրեմն մնացեալ  
ապրեցան. եւ կամ թէ ուրեք ի հեռագոյն  
աշխարհս փախստական գնացին» կ'ակնարկէ  
Եղիշէի յիշած ի միջոցի աշխարհին եղած  
բերդերն եւ Սաղտեաց, Արցախի, Տմորեաց  
եւ Կորդեաց ամրոցները: «Բայց սակայն, կը  
գրէ Սերիոս, ոչ կարացին բազումք ճո-  
ղուրել. քանզի զօրս գտանէին (Պարսիկք)  
սուր ի վերայ եղեալ սատակէին» համաձայն  
թագաւորին հրամանին: Ինքն իրեն կը հա-  
կասէ Սերիոս, երբ կը գրէ (26). «եւ Միհ-  
րեանն սակաւուք պրծեալ գնացին յերկիրն  
իւրեանց»: Վերջին տեղիքս առանց տարա-  
կուսի Սերիոսի խմբագրին մէկ փոփոխու-  
թիւնն է, ինչպէս նաեւ էջ 29 պակասաւոր  
տողերը նոյն խմբագրէն դիտմամբ դուրս  
ձգուած կ'երեւան՝ թագցնելու համար Հայոց  
պարտութիւնը: Թէ իրօք Պարսիկները «սուր  
ի վրայ եղեալ սատակէին», կը հաստատէր  
Եղիշէ. «յորժամ պատահէին միմեանց...  
զմիմեանս սատակէին». տես նաեւ էջ 95 եւն,  
բերդերու նուաճման ժամանակ սպանու-  
թիւնները:

ԴԻՄԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամուրք Կապոյտ լերան: Միհրանի գունդը  
լրացած նոր հասած հեծելազօրքով, «յառաջ  
խաղային ի միջոց աշխարհին. մարտ եղեալ  
կուռէին ընդ մեծ ամուրս Կապոյտ լերինն:  
Իսկ որ ի ներքսն էին՝ քաջութեամբ մար-  
տուցեալ հարկանէին զբազումս ի գնդէն  
Պարսից եւ զմնացեալսն փախստական ի բա-  
նակն արկանէին: Իսկ նոքա զարձեալ յողո-  
քանս մատուցեալ՝ նուաճել խաբէութեամբ  
կամէին: Իբրեւ ոչ ոք հաւատաց իջանել առ  
նոսա, զի մի մատնեացին շարաչար ի ձեռս  
թշնամեացն, սակայն վասն երգմանցն հարկ

եղեւ քահանային իջանել առ նոսա, որում  
անունն էր Արշէն...: Այլ նա... կապեաց եւ  
խաղացոյց զերանելին եւ որք ընդ նմա իջեալ  
էին» (98):

Հոս «իբրեւ — իջեալ էին» անտարակոյս  
խմբագրին յաւելուածն է: Անունս առնուած  
է Ղ. Փարսեցիէն, յիշուած կապեալ քահա-  
նաներու թուին մէջ. «եւ զսուրբ երէցն Ար-  
շէն» (75). իսկ «որք ընդ նմա իջեալ էին»  
չի համապատասխաներ վերի պարբերութեան  
հետ:

Ամուրք Կապոյտ լերին կը յիշէ Յովհ.  
Կրասխանակերտցի, խօսելով Սմբատ Ա.  
թագաւորի վրայ. «Երթեալ յամրոցս քարան-  
ձաւին ի Կապուտայ (լերին), որ ի Չորն  
Երասխայ, անդ դարեալ դադարէր. վասն զի  
անտուկ էր ի մարդկանէ» (234). այլուր  
պարզապէս. «երթեալ զողէր յամրոց վայրս  
Երասխաձորոյ»: Ասկէ Ասողիկի (165),  
Սմբատ «փախստեաց ամբանայ յամուրս Կա-  
պուտայ լերինն» եւ «ի Կապուտ ամրո-  
ցինն». իսկ Վարդան աշխարհագրի համա-  
ձայն «Բերդն Կապուտ, որ կոչի Արտագե-  
րից...»: Այս վկայութեանց համաձայն ամ-  
րոցս կը գտնուի Արշարունիքի մէջ, ոչ  
չատ հեռու Կամրջաձորի վանքէն, ինչպէս  
նաեւ Վանանդայ սահմանէրէն (համա. Ակի-  
նեան, Քրիստոնէութեան մուտքը Հայաստան  
եւ Վրաստան, էջ 92): Հ. Ղ. Ալիշան կը գրէ.  
«Կապոյտ բերդն թուի ինձ հաւանօրէն աւե-  
րակ բերդն Մանսիր Ղալխի գրեալ ի ուսս  
աշխարհացոյցի, ի խաղ մի աղբերականց  
գետոյն Կաղզուանայ, զոր եւ գերմանացի  
ուղեւորն Քոխ՝ յանուանէ իսկ Կապոյտ գետ  
լուաւ եւ կոչէ եւ զօթանդակ մի նորին՝  
Վանքսու» (Ալիշան, Այրարատ, 58):

Այս ամրոցի՞ մասին են տողերս. «Արդ  
զարձեալ յայնժամ զբրեաց (Վասակ) զՄուշ-  
կան Նիւսալուուրա եւ զամենայն աւագանին  
Արեաց, առեալ զզօրսն հասանէր ի վերայ ամ-  
րոցին, յոր անկեալ էին գունդ մի ի զօրացն  
Հայոց հանդերձ սուրբ քահանայիքն, եւ  
մարտ եղեալ կուռէին շուրջ զբերդան: Եւ  
իբրեւ ոչ ինչ կարացին ազգել նոցա, դար-  
ձեալ յերդմունս ապաստան եղեալ, զի ուխ-  
տիս իջուցեն զնոսա առանց դաւ ինչ զօր-  
ծելոյ. եւ երկիցս եւ երիցս անգամ ետուն  
տանել զաւետարանն: Թէպէտ եւ քահա-  
նայքն յանձն առնուին զիջանելն կալ առաջի,  
բազումք ի զօրականացն ոչ կարէին հաւա-

տալ սուտ ուխտին Վասակայ. քանզի սկսաւ երթալ Մուշկան Նիւսարուերս գհեա չար խրատուն Վասակայ: Եւ ոմն ի քաջ զորահանէն Հայոց, որ անկեալ էր ի բերդն փախտեամբ, Բակ անուն, ելեալ ի պարիսպն թշնամանս զնէր անօրինին (Վասակայ)... Սոյն այսոս այս ի նմին գիշերի եօթնհարիւր արամբք ել զնայ ի բերդէ անտի, եւ ոչ կարացին ձեռն արկանել ի նա: Իսկ որ ի ներքս յամբին մնացին, թէպէտ եւ գիտէին ճշմարտիւ զխաբեայ երգմունս նոցա, ոչ ունէին համար ի ներքս: Իրրեւ ոչ կամաւ իջեալ կացին առաջի, հրամայեաց սպանանել ի նոցանէ երկերիւր եւ երեքսասան այր» (95 հմմտ. նաև էջ 94):

Կ'ըսուի, թէ «Իրրեւ ետես (Վասակ) եթէ երթայ զօրավարն գհեա խրատու կամաց նորա (իւրո՞յ)՝ սկսաւ այնուհետեւ ի բազում տեղիս արձակել զասպատակաւորսն. եւ զոր արտաքոյ քան զամուրսն գտանէին զբազմութիւն մարդկան, վարեցին ի գերութիւն. եւ զամբար ի ձեռն առեալ հրծիղ առնէին զբազում տեղիս» (98): Խօսքը անշուշտ պարսիկ զօրավարին մասին է:

Ամուրք Տմորեաց (եւ Կորդեաց): «Իսկ որք էին յամուրսն Տմորեաց, իրրեւ լուան զայս ամենայն չարիս, զոր գործեցին զօրքն արքունի, ոչինչ շահ օգտի համարէին զկալն ի մէջ ամբականացն. քաջութեամբ ելեալ յարձակեցան օգնականութեամբ ամբականացն. եւ հասեալ ի մօտաւոր աշխարհն Պարսկաց, յանինայ կոտորելով՝ նախծիրս արեան գործէին. եւ զմնացեալսն գերի առեալ տանէին եւ անդէն յամուրսն արկանէին. եւ զշնուածս աշխարհին զամբար ի ձեռն առեալ հրոյ ճարակ տային» (98):

Ամուրք Խախտեաց: «Դարձեալ եւ որք էին ի լերինս Խախտեաց, իրրեւ տեսին, եթէ յանդգնարար զօրքն Պարսկաց յաներկիւզս իջանեն յամուրս աշխարհին Հայոց, յարձակեցան եւ նոքա մեծաւ գորութեամբ ի ձորագաւառն Տայոց: Եւ գտին անդ գունդ բազում ի զօրացն արքունի, որ գերի առնուլ կամէին զամբականս աշխարհին: Դարձեալ եւ կարծէին եւս եթէ զանձք նախարարացն անդ իցեն. վասն այսորիկ եւ յանինայ յուզէին զվայրսն: Նաև տեսին եւս անդ ի գեօղս երկուս, զի զեկեղեցիսն այրեցեալ էր. առաւել եւս վասն այնր ի նախանձ բարկութեան բրդեցան: Յարձակեցան, հարան ի գիծի

միմեանց եւ կամակարութեամբ յաղթեալ բեկին արկին զգորութիւն զնդին Պարսից, եւ կոտորեցին զբազումս ի նոցանէ եւ զմնացեալսն փախտաւան հանէին յաշխարհէն: [Եւ յայնչափ յանդուզն յարձակմանէն՝ միայն երանելին Հմայեակ, եղբայր սպարապետին Հայոց Վարդանայ, յանինայ քաջութեամբ մարտուցեալ՝ կատարեցաւ նահատակութեամբ ի վերայ սուրբ ուխտին միաբանութեան: Եւ այլքն ամենայն ողջանդամ ապրեալ գհեա երթային փախտաւանացն»] (99):

Փակագծի մէջ առնուած տեղիքը Ղ. Փարպեցիէն փոխառութիւն է, էջ 74:

Ամուրք Արձախայ. Հոնական արշաւանք: Եղիշ էր գրէր «Ամենեւին արտաքուստ օգնական ոք ոչ գտաւ զնդին Հայոց, բայց յայնց Հոնացն, որոց բանս եղեալ էր» (73): Այս տեղիքը յայտնապէս ցոյց կու տայ, թէ Հոնք ստուգիւ մասնակցած են 573 տարուոյ հայկական կռիւներու, յարձակում գործելով Պարսից վրայ: Այս կէտին կ'անդրադառնայ Եղիշ քիչ յետոյ:

Յետ մեծ պատերազմին Հայերէն ոմանք «որ յԱրձախայ մայրին անկեալքն էին փախտաւանք, ոչինչ լուեալ զաղարեցին խաղաղութեամբ: Այլ հանապազ յղէին յաշխարհն Հոնաց, չարժէին եւ յորդորէին զգունդն Հոնաց. եւ յիշեցուցանէին նոցա գուխտն, զոր եղեալ էր ընդ Հայս եւ անսուտ երդմամբ հաստատեալ: Հաճոյ թուեցաւ բազմաց ի նոցանէ լսել զբանսն քաղցրութեամբ: Նաև մեղադիր եւս լինէին նոցա, եթէ ի կռիւն ընդէ՞ր ոչ եկիք պատրաստութեամբ: Եւ իրրեւ յառաջնուամն ինչ ոչ հնարէին զմիմեանս հաւանեցուցանել, ապա գունդ բազում գումարէին եւ անդէն յարձակեալ հասանէին ի սահմանս տէրութեանն Պարսից. եւ զբազում գաւառս հարեալ, բազմազոյն եւս գերի առեալ տանէին յաշխարհն իւրեանց. եւ յայտնի ցուցանէին թագաւորին (Չ. չունի) զմիարանութիւնն, զոր ունէին ընդ զնդին Հայոց» (99):

[«Մուշկան Նիւսարուերդ հանդերձ ամենայն մնացեալ զօրուն գումարէր յաշխարհն Աղուանից... եւ յամենայն ամբականս, զոր աւերեալ էր զնդին Հոնաց վասն ուխտին Հայոց: Որպէս եւ յոյժ իսկ տրտմեալ էր թագաւորն ոչ միայն ընդ աւեր աշխարհ-

հին (տպ. աշխարհացն) եւ ընդ անկանել զօրացն, այլ եւս առաւել ընդ աւերել Պահակին (ճորայ), զոր ի բազում ժամանակաց հազիւ ուրեմն կարացին շինել. եւ յայնմ ժամանակի առեալ քանդեցաւ, որում չէր իսկ ակնկալութիւն շինութեան» (100): Այս հատուածը կ'երեւայ թէ շատ աղճատուած է իմբրագրէն: Հոնաց այս ասպատակութիւնը կը յիշեն Բիւզանդական Մատենագիրք, բայց փոխանակ Հոնաց՝ Թուրքերը կը նշանակեն Մենանդր կը գրէ: Օւ Դօծրօքս Եօթնալօնտէս էս տըն Մղծիչը, տըն տէ Դճ Էտեմօն: Այս ասպատակութիւնը կը յիշուի 572/3ին: Նոյն շրջանին թուրքերը զեւսպանութիւն մ'ալ ուղարկած էին Յուստինոսի, որ նա ալ իր կողմէ յարձակի Պարսից վրայ (§ 26):

Մեծ պատերազմի արդիւնքը հաղորդած էր զօրագլուին Պարսից թագաւորին, ինչպէս էջ 94էն կը տեսնուի: Մուշկան Նիւսարուերս «արգարութեամբ զիրսն գրել եւ ցուցանել ի թագաւորէն երկնչէր. դարձեալ եւ թաքուցանել եւս ոչ կարէր, քանզի ոչ ծածկէր այնպիսի մեծ կռիւ» (94): Կը հետեւի ասկէ, թէ զեկուցումը հաղորդուած է թագաւորին: Կ'ըսուի զարձեալ թէ «Վասակ» երգմունս կնքէր արքունի հրամանաւ եւ վկայութեամբ անձին իւրոյ... եւ երեւեցուցանէր զթողութիւն ասպատակութեանն... թէպէտ եւ հրաման թագաւորին հաստատութեամբ էր տուեալ, վասն զի յոյժ բեկաւ զօրութիւն նորա (անշուշտ ի լուր ելիցն պատերազմի), որպէս զի երկոքին կողմանք նորա հարան» (94): Չայս կը հաստատեն նաև տողերս. «Արդ զարձեալ յայնժամ զրդեաց (Վասակ) զՄուշկան Նիւսարուերս եւ զամենայն աւագանին Արեաց, առեալ զգորսն՝ հասանէր ի վերայ ամրոցին» (չէ յիշուած ամրոցն յանուանէ) (էջ 95):

Սակայն եւ այնպէս յետոյ կ'ըսուի թէ «Իրրեւ այս այսպէս կատարեցաւ (այսինքն ամրոցներու դէմ յարձակումները), զաղարեցին զօրք թագաւորին խառնամուխ լինել յամենայն տեղիս անխորութեամբ. եւ եւս առաւել ձեռնապահ լինել եկեղեցեացն: Դարձեալ միւսանգամ անդրէն հարցանել սկսան յարքունիս» (99):

Ասկէ վերջն է, որ կ'ըսուի, թէ «եւ անդէն չու արարեալ խաղայր զնայր հասանէր (զօրավարն) յաշխարհն Պարսից. գրէր եւ

ցուցանէր յարքունիս զամենայն իրս ստուգութեամբ. եւ զմնաս գործոյն արկանէր զուրացելովն» (Վասակաւ): Այժմ միայն, կ'ըսուի, թէ թագաւորը իրազեկ եղած է պատերազմի ելքի մասին:

«Իրրեւ լուաւ թագաւորն զամենայն աւեր աշխարհին եւ ստուգեաց զիրս մեծի պատերազմին, բեկանէր անկանէր ի մեծ խորխտայոյն, եւ լուեալ դադարէր ի հանապազօրդ եւ ի խարբայ խորհրդոյն. յուզէր եւ քննէր զվրիպումն անհանձար գործոյն. եւ կամէր տեսանել, ասելով՝ Ո՞ր ոք էցէ որ զիս ճշմարտութեամբ ի վերայ իրացդ հասուցէ: Իսկ որ էր գիտակ անօրէն գործոյն, անդրէն ի դրան արքունի, նոյն հազարապետն Միհրներսէ յառաջ մատուցեալ ասէ ցթագաւորն. Չայդ ես ասեմ քեզ, արքայ քաջ, եթէ կամիս ստուգութեամբ լսել զարգարն, որք գլխաւորք քրիստոնէիցն են ի Հայս, տուր կոշիկ. եւ զան յօժարութեամբ եւ ասեմ քեզ զամենայն արգարութեամբ» (100):

Այս անկարգ տեղեկութիւնները չեմ կրնար Սկզբնագրին հարազատ համարել. այլապէս բիծ դրած ըլլամ Եղիշի անուան: Վերջին հաստատման մէջ իմբրագրը ձգտում կը ցուցնէ հայ նախարարներն եւ Եկեղեցականները Տիգրոն տանիլ, դատախազ ըլլալու Վասակի գատավարութեան ժամանակ. ուստի գրուած է Փարպեցու ազդեցութեան տակ:

Թագաւորը «մեծ պատերազմի» ելքի մասին տեղեկութիւններ առած էր անշուշտ շատ վաղ. հաւանօրէն 573 զարնան, երբ տեղի ունեցած էր նաև Մծրինի քովէրը յոյն եւ պարսկական բախումը, որ յանգած էր Պարսից պարտութեան (573, ապրիլի սկիզբը): Այս պատճառաւ ճիշդ է Եղիշի զեկուցումը, թէ Խոսրովի գորութիւնն բեկաւ, երբ լսեց թէ «երկօքին կողմանք նորա հարան»: Ժամանակը չէր ներեր պարտութիւններու պատճառները քրքրելու: Մծրին պաշարուած էր. պէտք էր անյապազ օգնութեան հասնիլ: Այս նպատակով ալ հրաման արձակեց Խոսրով Միհրանին բանակի մեծ մասով ճանապարհ ելլել զէպի Մծրին: Անոր տեղ մարդպան կարգեց Փիլիպպոսը. եւ ինքը անցած հզօրագոյն բանակի գլուխը փութաց Միջագետք:

Այս միջոցին Յոյները լքած Մծրինի պաշարումը վայրագ փախուստով քաշուած էին

Դարա: Այս անգամ Սոսրով պաշարեց Դարան եւ գրաւեց (573 հոկտ.): Սկսան զինա- դազարի մասին բանակցութիւններ:

64. ՓԻԼԻՊՊՈՍ ՍԻՆԵՆԱՅ ՏԵՐ, ՄԱՐԶՊԱՆ

Սերիոս կը գրէ, թէ Միհրան Միհրեան- դակէն ետքը Հայաստանի զօրավար կամ մարզպան կարգուեցաւ «Փիլիպպոս Սինեայ տէր. արար կոխ մի ընդ Քաղաքն եւ ընդ Սաղամախիս եւ կոխ մի ի Վանանդ ի յՈթմսու գեղ(Ղ) . եւ յերկոսեան պարտեցաւ: Եկաց նա ամս է. եւ գնաց: Ապա եկն ինքն արքայն Անուշըռուան Սոսրով» (29):

Սինեայ աշխարհը, ինչպէս տեսանք վե- րագոյն (§ 49), բաժնուած էր մարզպանա- կան Հայաստանէն եւ ենթարկուած Ատրպա- տականի մարզպանութեան. այս հանգաման- քով մասնակցած էր պատերազմին պարսկա- կան բանակի կողքին:

Սմբազիրը պատմութեան ընթացքին ներկայացուցած էր Փիլիպպոս Սինեայ տէրը «Վասակ» անուամբ: Ան յաջորդն էր Վա- սակ = Վահանի, ինչպէս կ'երեւայ, իրրեւ եղբայր: 573ի պատերազմի նախօրեակին Պարսիկ զօրավարին առաջնորդն եւ խոր- հրրդատուն էր. նոյն պաշտօնին մէջ էր նաեւ պատերազմէն ետքը: Կ'ըսուի թէ այդ պա- տերազմին մէջ «Վասակ (= Փիլիպպոս) ... գանձն իւր ի մէջ գագանացն թաքուցեալ ապրեցոց» (94):

Երբ Միհրան պատերազմէն ետքը Մծրին պիտի երթար, հրամանաւ թագաւորին՝ մարզպանութիւնը կը յանձնէ Փիլիպպոսի: Այս անգամ Սմբազիրը նոր մարզպանը կ'ա- նուանէ «Ատորոմիզդ», հետեւելով Փարպեց- ւոյ: Եղիշէ կը գրէ այս փոփոխութեան մա- սին. «Յայնժամ գմի ոմն [յաւագ նախարա- րացն Ատորոմիզդ] անուն, որոյ իշխանու- թիւնն իսկ խառնեալ էր ընդ Հայոց աշխար- հին եւ գործակից էր զօրավարին (Միհրա- նայ) ի նմին պատերազմին, գրէր եւ յանձն առնէր (թագաւորն) նմա գաշխարհն Հայոց մարզպանութեամբ», յանձնարարելով, որ «աշխարհն սիրով նուաճէ» (փոխառութիւն Փարպեցիէն):

Թէ Եղիշէի խօսքերը Փիլիպպոսի մա- սին են, ապացուցանել հարկ չկայ: Ղ. Փար- պեցի իր Ատորոմիզդի համար գրած է տո- դերս. Յազկերտ Բ. լսելով «զկոտորունն լաւ արանց ի գնդէն Պարսից եւ գմահ առն

Վարդանայ՝ յահաւոր սուղ ընկզմեալ խոռ- վէր» . ուստի «ՁՄուշկան նիւալաւուրտ հանդերձ գնդաւն ի դուռն կոչէր. եւ զԱտորոմիզդ ոմն անուն յաշխարհէն Հայոց՝ մարզպան հրամայէր թողուլ. որում յանձն առնէր հրովարտակով զմարդիկն Հայոց չըն- դոստուցանել, այլ սիրով նուանել. եւ զպաշտօն քրիստոնէութեանն համարձակա- պէս ունել ամենեցուն: Եւ տեսեալ Մուշկա- նայ գհրովարտակն թագաւորին Յազկերտի եւ լուեալ զբանսն ի հրովարտակէն՝ կացու- ցանէր ի Հայս մարզպան զԱտորոմիզդ Ար- շական, եւ զիրս ամենայն ըստ գրեցեղոցն ի հրովարտակին թագաւորին՝ նմա յանձն առ- նէր: ... Եւ մնացեալ Ատորոմիզդ մարզպան աշխարհիս Հայոց՝ բազում թուղթս խաղա- դութեան առնէր ի տեղիս տեղիս Հայոց աշ- խարհին, թէ Եկայք շինեցարուք աներկիւ- դութեամբ եւ մի ինչ գարհուրիք: Յորս գրէր եւ կնքէր աւետաւոր բանս, շնորհել ամենե- ցուն զկարգ քրիստոնէութեան, որպէս եւ կամիցի ըստ իւրաքանչիւր կամաց: Որք ի համբաւն խնդութեամբ [ի Պարսից եւ ի Սի- նեայ] ժողովեցան ամենեքեան» (Փարպ. 73):

Ընդգծուած բառերը փոխառութեամբ կը գտնենք խմբագրին քով (էջ 100—101): Շարունակութեան մէջ խմբագիրը յառաջ կը բերէ Ս. Քահանայից հարցաքննութիւնը մարզպանի կողմէ, քաղելով Փարպեցւոյ Բ. Դրուագէն: Անկարեւոր կը համարիմ մի առ մի մատնանշել փոխ առնուած տեղիքները, զորոնք քառակուսի փակագծի մէջ առած են (հմտ. յատկապէս Փարպ. 75): Այս տե- ղիքները կարեւոր էին խմբագրին համար մասնաւորապէս յիշել, վասն զի անոնք յե- տոյ պէտք էին իրրեւ դատախազներ Վա- սակի դատավարութեան ժամանակ:

«Արդ եկն եմուտ մարզպանն Ատորոմիզդ յաշխարհն Հայոց սիրով խաղաղութեամբ: Հրամանաւ արքունի կոչեաց առ ինքն [զՍա- հակ եպիսկոպոսն Ռշտունեաց, ուսանել ի նմանէ զիրացն ամբաստանութիւն: Բայց նորա թէպէտ եւ աւերեալ էր ատրուշան մի եւ բազում չարչարանք հարեալ էր զպաշ- տօնեայս կրակին, ոչինչ գանդիտեաց դալ յատեան հրապարակին: Դարձեալ եւ ի տա- նէն Արծրունեաց բարեպաշտօն երէց մի Մուշէ անուն, որ առաջնորդ էր աշխարհին Արծրունեաց, աւերեալ էր եւ նորա զկրա-

կատուն մի եւ կապանօք բազում չարչարանս անցուցեալ էր ընդ մոզսն. եւ սա ոչինչ գան- դիտեաց, այլ կամաւ եկն եւ յանդիման եղեւ մարզպանին: Երկու եւ այլ քահանայք երա- նելիք, որոց անուանքն են Սամուէլ եւ Ար- րահամ, քանդեալ էր եւ սոցա գատրուշանս յԱրտաշատ եւ յառաջագոյն ըմբռնեալ էին ի կապանս յուրացելոյն Վասակայ. ածին եւ զնոսա առ առաքելն ընկերսն: Եւ ժողովե- ցին եւս ի նոյն տեղի զմեծն Յովսէփ եւ զԼե- ւոնդ եւ զՔաջաջ եւ զԱրշէն: Իսկ մարզպանն իրրեւ ուսաւ եւ տեղեկացաւ յամենեցունց, գրեաց եւ եցոյց յարքունիս զամենայն ճըշ- մարտութեամբ որպէս զիարդ լուաւ ի բե- րանոյ նոցա:

«Բայց Վասակ թէպէտ եւ յառաջագոյն հասեալ էր ի դուռն, ըստ կամաց իւրոց գա- մենայնն այլ ընդ այլոց երթեալ պատմէր ստութեամբ. սակայն ի միտս թագաւորին ոչ կարէր զանձն արդարացուցանել: Պա- տասխանի արար նմա եւ ասէ. Յորժամ քրիստոնէայքն եւս եկեացեն, հասարակ լու- այց յատենին:

«Իսկ զսուրբ քահանայսն վասն զի կա- պանօք (Չ. կամօք) տանէին՝ յետ երկուց ամսոց եւ քսան աւուր հասանէին ի ձմերոցն արքունի: Իրրեւ լուաւ մեծ հազարապետն, եթէ ածին զնոսա ի քաղաքն, ինքն իսկ ա- կանատես լինէր նոցա: Բայց թէպէտ եւ տե- դեկութեամբ լսէր ի նոցանէ գամենայն, ոչ կարէր ձեռն արկանեալ եւ չարչարել զնո- սա: Քանզի բազումք ի նախարարացն Հայոց դեռ եւս բռնացեալ ունէին զամուրս աշխար- հին. եւ դեռ եւս մարզպանն յերկիւղի էր. [վասն որոյ եւ զգուշութեամբ հրամայեաց պահել զսուրբսն, զաշխարհն հրամայէր սի- րով նուաճել:] Վասն որոյ եւ ինքն իսկ շըր- ջէր եւ ժողովէր եւ շինէր ուխտիւ հաստա- տութեամբ» (100—101):

Քառակուսի փակագիծներու մէջ առ- նուած այս հատուածները կը պատկանէին Բ. Յեղանակին, ուսկից փոխառութեամբ գետեղուած են հոս Սմբազրէն (տես § 69):

Եղիշէի քով չենք գտներ որ եւ է խօսք այն երկու կոխներու մասին, որոնք մղուած էին Փիլիպպոսի կողմէ ընդ մէջ Քաղաքին եւ Սաղամախեաց, եւ դարձեալ յՈթմսու Վանանդի, որոնց մէջ ձախողած կամ «պար- տուած» էր ըստ Սերիոսի: Թերեւս Ոթմսուի կուռի հայի տեղիքս, տեղի ունեցած Տայոց

ձորագաւառին մէջ. «Յարձակեցան, հարան ի դիմի միմեանց. եւ կամակարութեամբ յաղթեալ՝ բեկին արկին զգորութիւն զնդին Պարսից եւ կոտորեցին զբազումս ի նոցանէ եւ զմնացեալսն փախստական հանէին յաշ- խարհէն» (99): Այս կոխները մղուած պէտք է ըլլան 573—575 տարիներուն, յառաջ քան թողութեան հրովարտակի հռչակումը:

Ինձ կը թուի, թէ այս տեղոյ կը պատ- կանի վերագոյն յառաջ բերուած տեղիքը. «Իրրեւ այս այսպէս կատարեցաւ դադարե- ցուցին զօրք թագաւորին խառնամուխ լինել յամենայն տեղիս անխտրութեամբ. եւ եւս առաւել ձեռնապահ լինել եկեղեցեացն: Դարձեալ միւսանգամ անդրէն հարցանել սկսան յարքունիս» (99):

Փիլիպպոսի մարզպանութեան եօթը տա- րիները, զոր կը նշանակէր Սերիոս, հարկ էր գետեղել 573 զարուն — 579: Բայց որովհե- տեւ պատմագիրը կ'աւելցնէ թէ «ապա եկն ինքն արքայն», որով կ'ակնարկուի Սոսրովի արշաւանքը Արտազ — Բագրեւանդ — Կա- րին — Սերաստիա — Մելիտինէ, ստիպուած ենք Փիլիպպոսի վերջին տարին ընդունել 575 զարուն: Նկատելով, սակայն, թէ Սոս- րով պարզապէս անցաւ Հայաստանէն, իսկ անոր Հոռմէական արշաւանքին պէտք ունէր Հայաստան իր մարզպանին, ճշգրտոյնս պի- տի ըլլար, եթէ Փիլիպպոսի վերջին տարին 575/6 զարուն, այսինքն մինչեւ Հոռմէական բանակին յառաջխաղացութիւնն Հայաս- տան, ընդունինք եւ «եկաց ամս եւթն» իմա- նանք «ամս երես» (573 զարուն — 576 զա- րուն): Սոսրովի պարտութիւնը Մելիտինէի քով (575 ամառ) պատերազմի նոր ընթացք տուաւ: Յոյն-հայկական բանակը մտաւ մի- ջամուխ Հայաստան (575/6) եւ յառաջացաւ մինչեւ Տիւրոնի դուռը: Բնականաբար այս պարագաներու մէջ չէր կրնար Փիլիպպոս Հայաստան գեղեքած ըլլալ:

Մելիտինէի կուռէն ետքը Յուստինիա- նոս քաղեց իր յաղթ բանակով զէպի Հայաս- տան (575 աշուն). զոր նուաճեց հոռմէական դրօշին տակ (§ 55), անտարակոյս ոչ առանց սուրբի: Հայաստանի մարզպանն էր Փիլիպ- պոս, որ կը նստէր Դուռն: Եւ կոխը, որ տեղի ունեցած էր «ընդ Քաղաքն եւ ընդ Սա- ղամախիս», հաւանօրէն այս տարւոյն զէպ- քերէն էր: Այս կուռի մասին ըսուած կը հա- մարիմ Սերիոսի այն տեղիքը, ուր կ'ըսուի,

Թէ 571, փետրուար 3ի դէպքէն ետքը «Տայր (Կայսրն Յուստինոս Բ.) նոցա (այսինքն Հայոց) զգորսն կայսերական յօգնութիւն: Եւ նոցա առեալ զգորսն՝ զիմեցին ի վերայ քաղաքին Դուռայ եւ պաշարեալ կործանեցին ի վայր (զպարիսպսն) եւ հայրաձեցին զգորն Պարսից որ ի նմա կային: Բայց եհաս ի վերայ նոցա (Հայոց) յանկարծօրէն խռովութիւն մեծ. զի զեկեղեցին Ս. Գրիգորի, որ շինեալ էր մերձ ի քաղաքն (եւ) էին արարեալ համբարանոցս Պարսիկքն, հարին հուր եւ այրեցին. վասն որոյ եղեւ նոցա խռովութիւն մեծ» (Սեր. 26):

Այս այն Ս. Գրիգոր եկեղեցին էր, զոր կառուցած էին Հայերը 571ին Արտաշատի առաջ շինուած ատրուշանի ատաղձով (§ 53), քաղաքին պարիսպին մօտ: Եկեղեցւոյն կից էր կաթողիկոսարանը, որ նոյնպէս հրոյ ճարակ կ'ըլլայ: Հրդեհի մասին կը վկայեն Սորմէն Ստրատելատ (Գիրք Թղթոց, 90 «նստեալ ի Դուռայ աւերածին»): Վրթանէս Քերզոզ (անդ, 93) «ի Դուռայ այրեցեալ եւ յաւերակ եկեղեցւոյն նստի»: Իսկ Արրահամ կաթողիկոս կը գրէ թէ հրդեհի զոհ գացած է նաեւ կաթողիկոսարանի զիւանը, ի մէջ այլոց «Պայման նամակ» մը, որ հայերէն գրով էր, «յապատմութեանն կորեալ» (անդ, 183): Վրթանէս հրձիգները մատնանիչ կ'ընէ Սորմէնի. «Ձրնծոյ այրեցմանս այսորիկ եւ աւերածի դուրք (Հոռոմայեցիք) մատուցէք նմա» (անդ, 94): Բարեբախտարար նախահոգ եղած էին Հայերը արդէն 572ին, «զսպասս ամենայն եկեղեցւոյն որ ի Դուռնի Ս. Գրիգորի, տարան եղին ի պահեստի ի Կարնոյ քաղաքի» (Սեր. 53):

Կ'ըսուի թէ այս ցաւալի միջադէպը «խռովութիւն մեծ» կը պատճառէ «նոցա», այսինքն Հայոց, անշուշտ ոչ անոր համար, որ եկեղեցին նորակառոյց էր, այլ վասն զի այրման պատճառ եղած էին Յոյները, ինչպէս կ'իմանայ E. Stein (38). «Անշուշտ նպատակ չունէին Յոյները հայ ժողովրդեան կրօնական զգածումներուն զպչիլ. բայց հայ ժողովուրդը, որ արդէն իւր կաթողիկոսին ի Կ. Պոլիս Կաթողիկէ եկեղեցւոյ հետ ունեցած հարաբերակցութեան վրայ տեղի էր, ի մեծ խռովութիւն, զրգուրեցաւ»: Յամենայն դէպս «այս խռովութիւնն մեծ» յուզուած էր կրօնական-քաղաքական հողի վրայ եւ առիթ տուած էր խօսակցութեան, որ Սերիոս ար-

ժանի կ'ընէ շեշտել զայն մասնաւոր կերպով (հմմտ. եւ Գիրք Թղթոց, էջ 93):

Եղիշէ, որ իր է. Յեղանակին մէջ կը խոստանար պատմել «զյերկարունն իրացն խռովութեան», անշուշտ մանրամասն նկարագրած էր ինչպէս Փիլիպպոսի կոիւններն Այրարատի եւ Վանանդի մէջ, նոյնպէս Խոսրովի անցքը Հայաստանէն եւ պարտութիւնը Մելիտենէի քով, եւ դարձեալ յունական-հայկական բանակի յաղթական մուտքը Հայաստան, ի վերջոյ Խոսրովի մահը (579 փետր.): Խմբագիրը այս մասերը զուրս ձգած է, վասն զի իր ծրագիրն էր «Վասակի» դատաստանով վերջացնել իր Պատմութիւնը:

Ինձի կ'երեւայ թէ այս Յեղանակէն փրկուած հատուածներ են հետեւեալք (61—62):

«Ազգ եղեւ ուրացեալն [Վասակայ] եւ իշխանացն որ ընդ նմա էին՝ քաջութիւն նահատակութեան գնդին Վարդանայ յաշխարհին [Աղուանից] եւ միարանութիւնն եւս (Հոնաց—Յունաց): Մինչչեւ յանդիման եղեալ էին միմեանց, զգիշեր մի օգնական դտեալ նորա՝ փախստական անկանէր յամուրս իւրոյ աշխարհին. եւ այնպէս տաղնապաւ մերժեցաւ, զգիշեր եւ զաւարն զոր առեալ էր յԱյրարատ գաւառէ՝ ախամայ գիւրն եւս եթող եւ փախեալ»:

«Եւ քանզի ժամանակ ձմերանոյն հասեալ էր եւ զոռճիկս թշնամեաց գնդին հարեալ էր, ոչ կարէր զմիով տեղեալ համագունդ զգորսն դարմանել. այլ սփռէր տարածանէր ընդ գաւառս գաւառս աշխարհին առ ի հանգիստ ձմերոցին...»: Իմացիւր Յուստինիանոս զօրավարի մասին:

«Եւ դունդս գունդս արձակէր յաշխարհն Միւնեաց, առնոյր եւ աւերէր զբազում գաւառս. եւ այնպէս ի նեղ արկանէր գնա եւ գամենայն զգորսն որ ընդ նմա էր, զի գէշս եւ զձիս մեռելոտիս առ սովոյն փտանդի անխտիր ուտէին: Եւ բազում հարուածս հասուցանէին ի վերայ ուրացելոյն. մինչեւ ժողով սուրբ եպիսկոպոսացն եւ ամենայն ուխտ քահանայութեանն դառնապէս արտասուս իջուցանէին ի վերայ չարաչար վշտացելոցն. որ բոկ եւ հետի վարէին զարս եւ զկանայս փափկասունս. եւ բազում տղայք զբարի հարեալ ընկեցան յանցս ճանապարհաց»:

Չեմ կրնար հաւատալ, թէ Վարդանի դունդերէն մին կամ միւսը թոյլ տուած ըլ-

լայ իրեն այսպիսի խժողովութիւն հանդէպ հայ ժողովուրդի: Բայց նման վերաբերութիւն մը կարելի էր սպասել այն յոյն խաժամուժ բանակէն, որ յառաջացաւ մինչեւ Կասպից ծով (575—577): Եւ արդեամբք ալ կը պատմէ Յովհաննէս Եփեսացի, թէ հոռոմէական զօրքերը երբ «քրիստոնեայ հիւսիսային գաւառները», այսինքն Միւնեաց եւ Աղուանից աշխարհները հասան, իրենց ընդառաջ ելան քահանաները աւետարանով եւ խաչով, բայց անոնք ամենեւին ուշադրութիւն չգարձուցին ասոնց, այլ ամբարշտօրէն եւ ամբարտաւանօրէն մէկ-երկու տարեկան մանուկներ ոտքէ բռնած վեր կը նետէին եւ ուրիշներ նիզակներ եւ սուրբ ցից բռնած կ'ընդունէին զանոնք, եւ այսպէս խոց եւ արիւն լուայ կը նետէին շուներուն ի կեր: Կ'անարգէին, կը սպաննէին եւ կը կողոպտէին վանականները, կը քաշէին միանձնարաններէն երկար տարիներէ ի վեր ճգնող միանձնաւորները, եւ ծերունի եւ պատուական անձնաւորութիւններ կը կախէին, կը շարձարէին, կը կտրատէին սուրբով, «ոսկի եւ արծաթ բերէք» ըսելով: Այսպէս կը շարձարէին նաեւ հաւատաւոր կուսանները եւ դառն մահուամբ կը սպաննէին» (Չ. 10. տես վերը § 18. Ա. Մաս, էջ 195—196):

Եթէ խժողովութիւններուն մասին հարկ տեսած է զրել Յովհ. Եփեսացի, որչափ առաւել ի լուր անոնց՝ ողորացած պիտի ըլլար զգայունն Եղիշէ: Թերեւս ա՛յս շրջանին հային նաեւ տողերս. «Յարձակեցան ոմանք յԱտրպատական աշխարհն, եւ ի տեղիս տեղիս բազում քնասս արարին՝ առնելով եւ աւերելով եւ քանդելով զբազում ատրուշանս» (53):

Վերագոյն (§ 19) յայտնած էի այն միտքը, թէ Սերիոս 570—590 տարիներու պատմական դէպքերու համար աղբիւր ունեցած ըլլալու է Եղիշէն: Ինձ հաւանական կը թուի տեսութիւնս նաեւ այսօր, գոնէ 570—579 շրջանին համար:

65. ԹՈՂՈՒԹԵԱՆ Բ. ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Թէպէտ հրամայած էր Խոսրով իր զօրավարին բնաջնջել հայ ժողովուրդն եւ երկիրը այրացաւեր ընել, բայց զիջած էր իր բարկութենէն, երբ յաջողած էր գրաւել Դարա բերդաքաղաքը (573): Խոսրով չէր

ուզեր հրաժարիլ Հայաստանէն անոր բարերութեան պատճառաւ: Իսկ անմարդարնակ երկիրը պիտի չմատակարարէր իրեն իր ցանկացած բերքը:

575 զարնան, երբ անցաւ Խոսրով Հայաստանէն, զիմադրութիւն չկրեց Հայոց կողմէ: Նաեւ ինքը պատժական միջոց չգործադրեց հոն: 575 ամառը Խոսրովի պարտութիւնն մէկ կողմէ եւ յոյն բանակին յաղթական մուտքը Հայաստան եւ Ատրպատական միւս կողմէ՝ յեղաշրջում յառաջ բերած էին քաղաքական հորիզոնի վրայ: Այժմ տրամադիր էր Խոսրով խաղաղութեան: Մինչ բանակցութիւնները Պարսից եւ Բիւզանդիոնի միջեւ յառաջ կը մղուէին, յանկարծօրէն համբաւ տարուծուեցաւ, թէ կայսերական բանակը Կովկասի մէջ չարաչար պարտութեան մատնուած է: Ի լուր Տամ-Խոսրով զօրավարի յառաջխաղացութեան խուճապի մատնուած էին Հոռոմայեցիք եւ վայրագ փախուստով հոռոմէական սահման դիմած: Հայաստան միւսանդամ նուաճուած էր պարսիկ լուծին տակ (§ 55): Այս կը պատահի 577 աշնան:

Պէտք է ենթադրել, թէ այս միջոցին հրատարակուած ըլլայ թողութեան հրովարտակը իր նոր խմբագրութեամբ, որով կը ներէր ապստամբութեան մասնակցողներուն յանցանքը եւ կը յորդորէր փախստականները վերադառնալ իրենց ապաստանի տեղերէն եւ վերաշինել իրենց տուները եւ մշակել երկիրը:

Հինգ տարի օտարութեան մէջ անցուցած էին հայ փախստականները, միշտ յուսով վերադարձի: Հոռոմէական բանակի 577ի նահանջը ի գերեւ հանած էր ամէն յոյս: Այժմ յաղթական թագաւորը կոչ կ'ուզէր իրենց միւսանգամ առանց երկիւղի վերադառնալ, վերաշինել կործանած եկեղեցիները, տէր ըլլալ իրենց կալուածներու, եւ նուիրուիլ խաղաղ աշխատանքի: Հայրենաթախձութիւնը թեւ բուցցուց անոնց: Որոշեցին միարան վերադառնալ: Այս խուճիկէն դուրս կը մնային այն փախստականները, ըլլայ զինուորական, ըլլայ եկեղեցական դասակարգերէ, որոնք պարագլուխներն եղած էին ապստամբութեան: Խոսրով կը պահանջէր զանոնք կայսրէն վրէժիւնդրութեան համար. բայց կայսրն Տրեբելիոս յարգելով իր նախորդին խոստումը, տրուած Հայոց, տեղի չտուաւ թագաւորին պահանջներուն:

Հրովարտակին բնագիրը այնպես ինչպես հասցուցած է մեզի խմբագիրը, հարազատ Սկզբնագիրը է: Խմբագիրը հետեւելով Ղ. Փարպեցու, նոյնացուցած է զայն Յագ-կերտ Բ-ի տուած թողութեան հրովարտակին հետ, զոր Փարպեցի կարճ խօսքով միայն յիշած էր. «Զպաշտօն քրիստոնէութեանն համարձակապէս ունել ամենեցուն». որուն համաձայն Ատրորմիզդ «բաղում թուղթս խազաղութեան անէր ի տեղիս տեղիս Հայոց աշխարհին, թէ Եկայք շինեցարուք աներկուցութեամբ. եւ մի ինչ գարհուրիք: Յորս գրէր եւ կնքէր աւետաւոր բանս, շնորհել ամենեցուն զկարգ քրիստոնէութեան, որպէս եւ կամիցի ըստ իւրաքանչիւր կամաց: Որք ի համբան ինդութեամբ [ի Պարսից եւ ի Սիւնեաց] ժողովեցան ամենեքեան» (Փարպ. 73): Մինչ Ատրորմիզդ ապստամբութեան պարագլուխները կալանաւորած ի Դուռն կուղարկէ, Խոսրով վերադարձող իշխաններուն ամէն ազատութիւն կը շնորհէ, վասն զի չկային անոնց թուին մէջ պարագլուխներ:

ԲՆԱԳԻՐԸ

1. Եւ եպիսկոպոսացն հրաման տայր ունել զիւրաքանչիւր իշխանութիւն եւ ըստ առաջին սովորութեանն պաշտել յայտնութեամբ. եւ համարձակութեամբ եւս զալ ի հրապարակ:
2. Նաեւ ընծայից եւ պատարագաց արժանի առնէր թողուլ գառաջեալ:
3. Եւ քանզի բազում դաւառս առեալ եւ աւերեալ էր զօրականին, թողուլ հրամայէր զհարկս աշխարհին:
4. Եւ զայրուծին եւս զարքունի թեթեւացոյց առ ժամանակ մի:
5. Եւ միայնակեացք, որք ելեալ եւ կորուսեալ էին, հրամայէր զալ եւ ունել զիւրաքանչիւր տեղիոն:
6. Եւ զամենայն կարգս աստուածապատութեանն, որպէս զիւրոզ եւ ունէին յառաջ ժամանակաւ առ նախնեօքն, նոյնպէս եւ այժմ, առէ, կալցին:
7. Եւ եթէ ոք ի հեռի աշխարհ ուրեք զնացեալ իցէ [իմ իշխանութիւն է յարքունուստ, առ մարգարանն], եթէ՛ յազատաց իցէ, եթէ՛ ի շինականաց, եթէ՛ յեկեղեցականաց, զինչ եւ թողեալ իցէ, եկեցցեն եւ կալցին զիւրաքանչիւր զարարս: [Եւ երգ-

մունս կնքէր եւ առաքէր ի կողմանս կողմանս. որ եւ բազումք իսկ եկին եւ ժողովեցան եւ կալան զիւրաքանչիւր շինուածս]:

8. [Նաեւ որ մեծն է քան զամենայն] Որ ի բռնութենէ ոք ահամայ զմոզութիւն կալեալ էր հրովարտակս առաքէր յարքունուստ] անդրէն ունել զքրիստոնէութիւնն. [եւ յանդիման խօսէր թապաւորն որք էին (իմացիր՝ որոց էինն) ի Դրանն արքունի]. Որք ոչ սիրով ունիցին զղենիմագեզն, այնպիսեացն եւ աստուածք են ցասուցեալ. եւ ես ինչ ոչ եմ շնորհակալ. եւ այսօր զնոյն հրաման տամ ամենեցուն՝ ի կամս մարդոյն թողեալ ըստ իւրաքանչիւր մտաց, որպէս զինչ կամի պաշտել պաշտեսցէ. ամենեքեան իմ ծառայք են:

Զայս ասէր եւ զրով հրաման տայր ամենայն աշխարհի»:

Թողութեան հրովարտակիս գոյութիւնը քանիցս յիշատակուած է Եղիշէի Պատմութեան խմբագրութեան մէջ. կը թուեմ 1. «Երգմունս կնքէր (Վասակ) արքունի հրամանաւ եւ վկայութեամբ անձին իւրոյ եւ խարերայ երիցամբքն, որ ընդ նմա էին պատգամաւորս առնէր զնոսա եւ երեւեցուցանէր զթողութիւն ապստամբութեանն առ ի շինութիւն եկեղեցուց շնորհել անդրէն եւ զամենայն կարգս անդրէն յարմարել ըստ առաջին սովորութեանն: Թէպէտ հրաման թագաւորին հաստատութեամբ էր տուեալ. սակայն զօրքն Հայոց վասն նենդութեանն Վասակայ... հրամանի թագաւորին ոչ կարէին հաւատալ վաղվաղակի» (94): 2. «Այլ մարդիկ Հայոց, որ հասեալ էին ի վերայ յեղեղուկ հրամանաց թագաւորին եւ ուրացեալ չարիմացն Վասակայ, ոչինչ հաւատային սուտ թողութեանն» (96): 3. Բերդի մէջ գտնուած քահանաներէն ոմանք կը կալանաւորուին. իսկ «զայլ քահանայսն արձակեցին յիւրաքանչիւր տեղիս, հրաման տուեալ վասն շինութեան եւ խաղաղութեան աշխարհին» (96):

ԴԱՐՁ ՓԱՆՍԵՒՅՑ

Եղիշէ համառօտիւ կը պատմէ հրովարտակին ազդեցութիւնն եւ փախստականներու վերադարձը. իր խօսքերն են.

«Իրրեւ լուան զայս բազումք, որ էին ցանեալ եւ ցրուեալ ի հեռաւոր տեղիս, գային եւ ունէին զիւրաքանչիւր արարս:

«Իսկ նախարարքն, որ էին յամուրս աշխարհին եւ կամ ի հեռաւոր օտարութեան, իրրեւ տեսին զշինութիւն երկրին, մանաւանդ զեկեղեցեացն հաստատութիւն, քաջալերեցան, համարձակեցան եւ նոքա յանդիման լինել արքային: Վասն որոյ եւ պատգամաւորս յղեցին առ մարգարան աշխարհին, զի ի Դուռնն ցուցցէ զբանս նախարարացն: Իսկ նա վաղվաղակի յարքունուստ զիւր ողորջանաց եւ ուխտ հաստատութեան տայր տանել առ նոսա:

«[Բայց նոքա թէպէտ եւ գիտէին զդատութիւն տէրութեանն, թէ սուտ են յամենայնի, կամեցան չարչարակից լինել սրբոցն. զի եթէ մահ եւս առաջի կայցէ, ոչինչ զանգիտիցին երկիւղիւ]: Եւ զայս լուեալ թագաւորին, ոչ կապանօք, այլ արձակ օտիւք եւ արձակ ձեռօք հրամայէր առ ինքն կոչել: Ածին (նախարարք) վաղվաղակի զկին եւ զորդիս եւ զինչս իւրաքանչիւր, ետուն ի ձեռս Մարգարանին եւ ինքեանք փութապէս զնացին ի ձմերոցն արքունի» (էջ 102—103):

Թէ թագաւորը ցանկացած ըլլայ, որ վերադարձող նախարարները ներկայանան իրեն, զարմանալի է. ինչպէս որ պատշաճութեան համեմատ էր, որ անոնք արձակ օտիւք եւ արձակ ձեռօք երթային թագաւորին եւ իրենց հպատակութիւնը մատուցանէին անոր: Խմբագրին «զառնութեան» պէտք է վերադրել այդ նախարարներու կապանքի ենթարկումն ի Տիգրան, որպէս զի անոնք «չարչարակից լիցին սրբոցն», ինչպէս կը պահանջէ իր նմանութեան օրինակն Ղ. Փարպեցի: Չեմ տարակուսիր, թէ նախարարք ողջամբ վերադարձան արքունիքէն իրենց ընտանիքներուն:

Ինչ որ կը ներկայացնէ մեզի Եղիշէի Պատմութիւնը այս համառօտութեան մէջ իսկ, նոյնը կը հաստատէ Յովհաննէս Եփեսացի, երբ կը գրէ. «Պարսիկը (Խոսրով) ըսաւ անոր (Տիգրանին) . Իմ ծառաներս ինձի ետ տուր, որոնք ինձի դէմ ապստամբած են: Բայց անիկա չլսեց անոր: Այն առեւ Պարսիկը խորամանկ գտնուեցաւ եւ զարձաւ նամակներով Հայոց (ըսելով) . Ինքը չ'ուզեր անոնց որ եւ է չարիք հասցնել եւ (իրենց ըրած) յիմարութիւնը յիշել: Ասոր վրայ անոնք միւսանգամ հատուածեցան Հռոմայեցիներէն եւ բովանդակ աշխարհն զնաց եւ հպատակեցաւ (Պարսիկին), ի բաց

առեալ այն զլիւսաւորները, որոնք Կ. Պոլիս Կայսեր ընդէն էին. այս ինքն բովանդակ աշխարհն, գրեթէ 20.000 հոգի հատուածեցաւ եւ զնաց եւ անձնատուր եղաւ Պարսիկներուն: Անիկա ետ զարձաւ եւ զբաւեց Հայաստանը այնպէս ինչպէս յառաջ» (§ 18, Ա., 190/191):

66. ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԼՈՒԽՆԵՐԸ Կ. ՊՈԼԻՍ

1. Յովհաննէս Եփեսացի կը գրէ, թէ Հայերը երբ տեսան որ անաստուած պարսիկ պետութենէն իրենց դէմ ահաւոր պատերազմ մը զբողոսած է, աճապարեցին քրիստոնէայ Բիւզանդիոնի մէջ ապաստանարան փնտռել: Հասնելով Կ. Պոլիս, կ'ուզենք, ըսին, այսուհետեւ քրիստոնէայ պետութեան հպատակներ ըլլալ. եկանք հոս, օգնութիւն ինդրելու հռոմէական պետութենէն, որպէս զի ան փրկէ զմեզ մոզութեան անագործութենէն: Այս փախստականներու մէջ էին Կաթողիկոսն (Յովհաննէս Բ.) եւ եպիսկոպոսներ եւ շատ ազատներ, նաեւ նախարարներ: Անոնք կայսեր կողմէ մեծապատիւ հիւրասիրուեցան. շնորհուեցան անոնց պարգևներ, շքեղ ապարանքներ, ընդարձակ կայսերական բնակարաններ: Շատ զբամ, տուն եւ տեղ, նաեւ երեք տարուան համար հարկերու թողութիւն շնորհուեցան անոնց, որոնք Բիւզանդական պետութեան այլ մասերու մէջ ապաստան խնդրած էին:

Ապստամբութեան զլիւսաւորները՝ Վարդան եւ իր գործակիցները, Վրաց Գորգոնիոս (Գուրգէն) թագաւորն իր բովանդակ ժողովուրդին հետ, որոնք Հռոմայեցուց անձնատուր եղած էին, եկան եւ ներկայացան Կայսեր (§ 18):

Եկեղեցականներու թուին մէջ էր առանց տարակուսի նաեւ Եղիշէ քահանայ:

«Կաթողիկոսն Յովհաննէս երկու տարի ետքը վախճանեցաւ սուանց բախտ ունենալու միւսանգամ տեսնելու հայրենիքը» (Բ., 22, § 18):

Յովհ. Եփեսացու այս տողերը հասկըցուած են մինչեւ այսօր ան իմաստով, թէ Յովհ. Կաթողիկոս վախճանած է 571 կամ 573 տարիէն, այսինքն փախստեամբ Կ. Պոլիս հասնելէն երկու տարի ետքը: Բայց Եփեսացին այս զլիւսուն մէջ կը խօսի պատերազմի 2. տարուայ դէպքերու մասին, երբ Հայաստան կը զբաւուրի կայսերական բանակէն (575/76): Եթէ այս տարիէն հաշուենք յի-

չեալ երկու տարիները, կաթողիկոսը վախճանած կ'ըլլայ 577/78 տարւոյն: Այս մեկնութեան ի նպաստ կը վկայէ Գուրգէն քարտուղար Հայոց մեծաց եւ սուրբ Թադաւորացն պոստոսպար, որ ստացողն եղած է 627 թուին, այն է Հայոց ՀԶ թուականին, «էակը» գրքին, որուն յիշատակարանն եղած է.

«Գրեցաւ գիրքս այս էակքս [հրամանաւ] Թարգմանեալ ի Յունաց ի հայս (հրամանաւ) տեառն Յովհաննիսի Հայոց կաթողիկոսի Գարեղինացոյ ի ԻՅ. թուականութեանն Հայոց: Վկայէ այսմիկ Սարգիս Աբարացի եպիսկոպոս<sup>7</sup> ճշմարիտ վկայութեամբ»: Հայոց թուականի ԻԵ. տարին կը համապատասխանէ փրկչական 576 յուլիս—577 յունիս տարւոյն (տես առ այս Ա.Կլինեան, Գասական հայերէնը եւ Վիեննական Միսիթարեան Դպրոցը, Վիեննա 1932, էջ 115—116):

Յառաջ կը բերեմ այս տեղ նաեւ այն տեղեքները, գործնք կը գտնեմ ժամանակակից եւ յետագոյն հեղինակներու քով, Կ. Պոլիս ապաստանող փախստականներու մասին:

2. Թովմաս Արծրունի քաղելով Աբրահամ Մամիկոնեանի Պատմութենէն, կը հաղորդէ.

«Իսկ [Վասակ Արծրունի, հայր Աղանայ սրբոյ, առեալ զՏաճատ եւ զԳոտեր զեղբայր իւր] գնաց առ Կայսր, մեկուսի եղեալ ի շփոթմանց պարսկական վրդովմանցն եւ աւերման աշխարհին: Իսկ Թագաւորն Մարկիանոս (իմացի Յուստինոս Բ.) ընկալաւ զնոսա սիրով ի խաղաղութեան, մեծաշուք պատուով ի բարձ եւ ի պատիւ յառաջ ածեալ իրբեւ զքաջամարտիկ արայեանս որ ի վերայ եկեղեցեաց Քրիստոսի եւ սուրբ ուղղափառ հաւատոյ արեամբ չափ ճշնեալ նահատակեցան եւ զխոստովանողական անուն ճայն ի վերայ եղեալ կարգային» (82): Անունները Թովմաս առած է Փարպեցիէն, որ կը գրէ Աղան, «որ էր ազգաւ ի հոյակապ... տոհմէն Արծրունեաց, որդի Վասակայ, եղբոր Տաճատայ եւ Գոտորգի» (էջ 5): Ոսոքը փախստական հայ իշխաններու, յատկապէս Քաջ Վարդանի մասին է:

<sup>7</sup> Սարգիս արարացի եպիսկոպոս հաւանորէն նոյն է անորի Սարգիս եպիսկոպոսի հետ, որ վանահայրն էր «Աբարացեաց վանքի», եւ էր Ի. դարուն յայտնի անձնատրութիւն. հմտ. A. Baumstark, Geschichte der syrischen Literatur, Bonn 1922, էջ 185:

3. Ստեփ. Ասողիկ. «Եւ իշխանքն Հայոց համօրէն աստուրեալ ի Պարսից՝ ձեռն ետուն ի Յունականն, նոքօք ընդդէմ կալով սաստիկ մարտիւ: Իսկ Վարդանայ առեալ զընտանիս իւր եւ զայլ պայազատսն՝ փախստեաց անկանի յաշխարհն Յունաց ի Թագաւորեալ քաղաքն Կոստանդնուպոլիս: Եւ երթեալ յանդիման լինէր Թագաւորին Յուստինոսի, որ զսուրբն Սովիթա շինեաց. եւ հաղորդի ընդ նմա օրինաց. եւ յիւր անուն անուանէ զաւագ դուռնն սուրբ Սովիթայ, որ մինչեւ ցայսօր կոչի Դուռն Հայոց» (85):

4. Փոռ պատրիարք, թուղթ առ Զաքարիա կաթողիկոս. «Ի ԶԺ թուականութեանն Հայոց (567!)՝ սպան խեռն Վարդան Մամիկոնեան զՍուրէն մարզպան Պարսից... եւ ինքն փախեալ բազում աղխիւ եւ համօրէն ընտանեօք եմուտ ի Յոյնս եւ ի Ժ եւ ի է ամի<sup>8</sup> Յուստինոսի կայսեր, յորժամ զսուրբն Սովի շինէր, ի տօնի սրբոյ Սաշին ի հաղորդութենէ ի բաց եկաց ասելով թէ Վարդապետք մեր ոչ հրամայեցին մեզ: Յայնժամ հրամայեաց Թագաւորն ժողով լինել եւ զալ եպիսկոպոսաց բազմաց եւ վարդապետաց եւ ժողովեցան ի Կոստանդնուպոլիս ձԼ. որում Ե. րորդ ժողովն կոչի, եւ Հայք ընդ նոսին եւ ձեռնադրով զժողովն Քաղկեդոնի ընկալան» (հմտ. նոյնը Վարդան պատմիչ, էջ 84):

5. Վարդան պատմիչ կը գրէ թէ «Մամիկոնեանքն հինգ գրիւ արծաթոյ, առն գնել զդուռն արեւմտեան սրբոյն Սովիթայ ի Յուստինոսէ՝ յիշատակ Հայոց» (85):

Ինչպէս Փոռի տողերէն տեսնուեցաւ, փախստականները Կ. Պոլիս ղժուարութիւններու բախեցան զաւանաբանական հողի վրայ: Քաղկեդոնական եւ ոչ-քաղկեդոնական խնդիր: Յուստինոս կայսր նկատելով որ Հայք իրբեւ քրիստոնեայ, զաւանակից են իրեն, առած էր յանձն անոնց պաշտանութիւնն: Երբ անոնք Կ. Պոլիս հասան, խիղճ ըրին ոմանք հաղորդակցութեան մէջ մտնել յոյն եկեղեցեոյ հետ: Այս խնդրոց շուրջը ներքին եւ արտաքին աղբիւրները այսպէս կը գրեն.

6. Աբրահամ Մամիկոնեան առ Թովմայ Արծրունեոյ. «Բայց աղերսեալ Թագաւորն

<sup>8</sup> Իմացի ի ԺԶ. ամի Թագաւորութեանն Յուստինոս, այն է 571:  
<sup>9</sup> Ճշգիւ «Ի ԺԼ. ամի Յուստինոսի, որ է 573 տարին: Յուստինոս եւ Յուստինոս (Յուստինեանս) յաճախ կը շփոթեն հայ պատմագիրները:

զարս պատուականս, [զՎասակ եւ զՏաճատ եւ զԳոտեր], որք էին ի մեծ նախարարութենէ տանն [Արծրունեաց], զի զժողովն <Քաղկեդոնի> ընկալցին ընդ երկց սուրբ ժողովոցն: Նոքա պատասխանեալ ասեն. Վասն զի մեք ի պարսկական հինիցն անդուլ եւ անպարապ գոլով՝ ի բաց լքաք զկրթութիւնն զրոյ սրբոյ՝ առ ընտրել զհաւատոյ խոստովանութեան կանոնադրութիւն. բայց մինչ էաք յաշխարհին մեր՝ առաջնորդքն մեր ոչ ետուն տեղի ընդունել զասացեալսն ի սահմանին խոստովանութեան: Արդ ոչ կարեմք փոյթ ընդ փոյթ շղոմարար հաճութեամբ Թագաւորիկ յանձն անուլ զոր հրամայէ կայսերական ճոխութիւնդ. այլ հրամայեցէ մեզ գրել ի Հայս եւ հարցանել առաջնորդացն Հայոց եւ ընդունել պատասխանինս: Այլ եւ զայս եւս եղին առաջի Թագաւորին աղերսական մեղադրանս, եթէ Ընդէ՞ր իրբեւ ժողովն դուժարէր, ոչ գոք ի Հայոց հարկաւոր համարեցայք կոչել ի միարանութիւն հաւատոյ: Պատասխանի ետ Մարկիանոս (իմացի)՝ Յուստինոս Բ.) եւ ասէ. Վասն զի առաջնորդքն Հայոց զպարսկական շփոթմանցն զվտանդ կրէին»:

«Ապա առեալ հրաման մեծամեծացն [մեր Արծրունեացն]՝ գրեն առ Աբրահամ՝ Մամիկոնէից եպիսկոպոս, [որ էր աշակերտ սրբոյն Սահակայ], եւ ծանուցանեն նմա զոր խնդրէ արքայ: Եւ դարձեալ պատասխանի ասէ. Մի՛ տալ տեղի լսել հրամանի Թագաւորին. թէ վտանդ ինչ հասանէ կրել հանդոյն զինչ կրեցին: Զոր տարեալ զթուղթն մատուցին առաջի Թագաւորին: Իսկ Թագաւորն գիտացեալ զհաստատունն եւ զանդրդուելի միտս նոցա՝ ոչինչ փոյթ արարեալ թողու ի կամս կամաց իւրեանց՝ կեալ որպէս հաճոյ թուի: Եւ կացեալ անդ մինչ ի ժամանակս [առաջինն Ղեւոնի] կայսեր՝ մեռանի անդ [Վասակ եւ Տաճատ] եւ փոխին ի հանգիստ Կոստանդնուպոլիս ի գերեզմանս մեծամեծացն Մամիկոնեանի մասին տե՛ս վերը, § 48, Բ., էջ 772):

7. Իսկ Յովհ. Եփեսացի կը գրէ, թէ Հայ փախստականները ի սկզբան «առանց հարց ու փորձի եւ քննութեան եւ խղճմտելու վայցին եւ հաղորդուեցան պատրիարքին հետ. առանց հոգ ընելու այն խորութեանց եւ վէճերու մասին, որոնք Քաղկեդոնի ժո-

ղովին զեղծումով մուտ գտած էին հռովմէական նահանգներու բոլոր եկեղեցիներու մէջ: Երբ լուեցաւ այս բանը իրենց աշխարհին (Հայաստանի) մէջ, զայրացան անոնք ասոնց վրայ, թէ՛ հոն մնացած եպիսկոպոսներն եւ թէ՛ աշխարհին մարդիկ. եւ գրեցին ասոնց խիստ խօսքեր, որուն մասին կը պահանջէ ժամանակս, որ լուծեամբ անցնինք: Այս պատճառաւ ալ բաժնուեցան ասոնք եւ անջատուեցան եւ ապա կազմեցին ասոնք սեպհական ժողով(արան) մեծ սրահի մը մէջ, ուր իրենց նախարարներէն մէկը կը ընակէր: Հոն հաւաքուեցաւ ընտիր համայնք մը իրենց կաթողիկոսին մահէն ետքը» (Բ., 23, § 18): Պատմագիրը միարձեպ էր:

8. Diegesis կը գրէ<sup>10</sup>. «Յետ բազում ժամանակաց Վարդան (Βαρταζ) ոմն իշխան սպանեալ զրոնաւորն Սուրէն պարսիկ եւ զՀայս նշկահեալ՝ դէմ եղեալ տարադէմ երթայ աներկիւղ ի Կոստանդնուպոլիս ի քառասներորդ ամի Խոսրովու (572/73) եւ յերեսներորդ ամի Յուստինիանու<sup>11</sup>, որ կառուցցն զեկեղեցին սուրբ Սովիթա. սակայն հանդերձ իւրովն որոշեալ եկաց ի հաղորդութենէ նորա. քանզի ասէր բայ. Պատուէր ունիմք ի վարդապետաց մերոց շինել ընդ ձեզ ի վարդապետաց մերոց շինել ընդ ձեզ ի հաղորդութեան: Նմին իրի հրաման ետ կայսր նմին Վարդանայ, զի միահամուռ ի Կոստանդնուպոլիս կոչեսցէ զեպիսկոպոսունսն եւ զվարդապետս Հայոց...:

«Անդ միարանեալ նոցա՝ զգրուես սրբոյն Սովիթայ կից յանուն նոցա յորջորջեցին, որ եւ մինչեւ ցայսօր իսկ անուանեալ կոչի Դուռն Հայոց...:

«Ի ժամանակն յայնսիկ զինդրոցն հաւատոյ յաճախագոյն յուզմունք բազում աւուրց լինէին վասն ուրացութեան իշխանաց եթէ ի Հռոմէական եւ եթէ ի Պարսկական բաժնին Հայոց. եւ յերկարեալ ձգէին ամս քսան, յաւուրս կաթողիկոսացն Յովհաննու եւ Մովսիսի մինչեւ ցառաջին ամ Խոսրովու<sup>12</sup>, որ Թագաւորեաց ի ձեռն Մաւրիկայ կայսեր մեծաւ զօրու Հռոմայեցոց. եւ ստրատեյալսն Մուշեղ Մամիկոնեան յորջորջեալն Տարօնացի եկաց մնաց ի Պարսկական բաժնին Հայոց: Թագաւորեաց Խոսրով ամս երե-

<sup>10</sup> Migne, Patrologia graeca, 132, c. 1248—1249.  
<sup>11</sup> Իմացի «Եւ ամի Յուստինեայ Բ.», որ է 572/73 տարին:  
<sup>12</sup> Այն է Խոսրով Բ. 590—628:

սուն եւ ութ. եւ ետ զՀայաստան ողջոյն մինչեւ ցԴուին Մաւրիկիայ կայսեր փոխանակ ընդ այնր զի ի նմանէ կացուցաւ թագաւոր. հանդերձ այսու մեծապատիւ մեծապարգեւ արար զնա եւ զգօրս նորա:

«Ի նմին ամի առաքեաց զՄուշեղ առ Մաւրիկ կայսր. որոյ հասեալ ի Կոստանդնուպոլիս յաւուրն մեծի տօնին պատուական խաչի՝ ի բաց կացին ի հաղորդութենէ Մուշեղ եւ գօրքն որք ընդ նմա: Զորոյ զպատճառն հարցեալ արքային, զԺողովն Քաղկեդոնի ասէր եւ զխոստովանել նոցա երկուս բնութիւնս: Յայնժամ ասէ թագաւորն. Ապա ընդէ՞ր բնաւ որ յառաջ քան զքեզն էր Վարդան զնոյն խոստովանեաց եւ ազատքն ամենքին որք ընդ նմայն էին, եւ վարդապետք նոցա ընդ գրով հաւանեցան: Վասն անդիտութեան, պատասխանի առնէ Մուշեղ, կամ առ երկիրդին. եւ արդ եթէ հրաման տաս եւ դիցես ունին ըստ պատշաճի՝ եւ արդարութեամբ զզատն առնիցես, ապաքէն ի վարդապետս մեր զճշմարտութիւնն դոցես: Պատուէր հրամանի տայր այնուհետեւ ամենայն եպիսկոպոսացն եւ Մովսիսի կաթողիկոսի հանդերձ զօրօքն իջանել զալ ի Կոստանդնուպոլիս»:

Այս երկու ժողովներուն ծանօթ է Անանուն ժամանակագիրը, որ կը գրէ. «Տիրեր ամս է. Առ սովաւ եղև ժողովն ի Կոստանդնուպոլիս՝ Հայոց եւ Հռոմոց վասն սահմանին Քաղկեդոնի. յորում պարտեցան Հայք». եւ «ի նորին (Մաւրիկիոսի) աւուրս եղև դարձեալ միւսանգամ ժողով Հայոց եւ Հռոմոց՝ վասն նորին ազանդոյն Քաղկեդոնի. ժողովին ի Կոստանդնուպոլիս. եւ եղև պարտեալք Հայք<sup>13</sup>»:

Պարսկահայաստանի մէջ քիչ յետոյ փոխուեցաւ կացութիւնը. Խոսրով Ա. ի Թողութեան հրովարտակը հաւաքած էր երկրին ամբողջութեանց եւ սահմանէն դուրս ապաստանած Հայերը: Յովհ. Կաթողիկոսի մահէն ետքը Կաթողիկոս ընտրուած էր ի Դուին Մովսէս Եղիվարդեցի: Կը պահանջէր քաղաքականութիւնը, որ ժողովուրդը հաստատմանը իր դաւանարանական յօդուածներուն մէջ եւ բունքը դիրք Կ. Պոլսէն եկած լուրերու հանդէպ: Սերիոս կը գրէ, թէ Մովսէս «ամենեւին ոչ լինէր ի նոսա (ի Յոյնս) հուպ»

<sup>13</sup> Անանուն ժամանակագրութիւն խմբագիր յօրինեալ յի. դարու, Վենետիկ 1904, էջ 75—76:

(էջ 53), յատկապէս դաւանարանական հարցերու մէջ<sup>14</sup>:

Թէ ի՞նչ եղաւ Հայաստանի վիճակը 575—577 տարիներուն, երբ Յունական բանակը մտաւ Հայաստան, չգիտեմ:

Վրթանէս Քերզոյ 606ին կը գրէր առ Սորմէն սորատելատ (ի Կարին), ակնարկելով Վարդանի փախուստն ի Կ. Պոլիս եւ Յունաց հետ հաղորդակից ըլլալը.

«Նեոին ասպնջական եւ առաջնորդ եւ Կարապետ զնա պարտ է ասել (տպ. պատրաստել), որ ազգի միոյ ապստամբութեան եղեալ պատճառ, եւ զարս ի կանանց վարատելոյ եւ զկանայս յարանց, յորոց բագումք քափառական կեցօք ի տար աշխարհի վախճանեցան՝ քաղման անգամ ոչ լիալ (տպ. լինել) արժանի: Եւ մանաւանդ յիւր բնակի եւ յուղղափառ վարդապետաց կարգէ սրանալով է փախուցեալ, որպէս զամբարիչան առանց ուրուք հալածելոյ, եւ տարագիր եղեալ յամբիժ եւ հուշակաւոր եւ կեցուցանող նոցին հաւատոց: Բայց եւ զայն պարտ է ճանաչել, զի որ բերանովք օրհնէք, այսինքն ժառանգաւորս հաւատոյ համբաւելոյ զձեզ սրբոյն Գրիգորի, զընծայ այրեցմանս այսօրիկի եւ աւերածի (Կալինարիէ Սորմէնի թղթին տեղիքն «նստեալ ի Դունայ աւերածին՝ հաւատոյ նոր Կարապետ»), դո՛ւք մատուցէք նմա. թողումք ասել զայն եւս» (Գիրք թղթոց, էջ 93—94):

Այս վկայութիւնները կը բերեն զմեզ այն եզրակացութեան, թէ Վարդան 573ի կուռէն ետքը առած իր ընտանիքն զխմեց Կ. Պոլիս:

Սերիոսի մէկ տեղիքը կը ստիպէ զմեզ ընդունելու, թէ Վարդան զետեղելով իր ընտանիքը Կ. Պոլիս, ինքը դարձեալ բանակի գլուխ անցած է եւ մասնակցած 575ի Մելիտինէի կուռին: Սերիոս կը գրէ. «Այս այն Վարդան է, յորոյ վերայ եկն Խոսրով». առանց այլ մանրամասնութեան:

67. է. ՅԵՂԱՆԱԿՆ. ՎԵՐՋԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Եղիշէ խոստացած էր տալ իրրեւ վերջին դուրս իր Պատմութեան է. Յեղանակին, որուն բովանդակութիւնն պիտի ըլլար «Յերկարումն իրացն խոսովութեան» (5): «Իրք խոսովութեան» կ'անուանէ առանց տարակուսի

<sup>14</sup> Ակինեան, Կիւրիոն Կաթողիկոս Վրաց, Վիեննա 1910, էջ 108—120:

այն պատերազմները, որոնք բորբոքեցան 571էն, Հայոց ապստամբութենէն ետքը Պարսից եւ Հռոմայեցոց մէջ եւ տեւեցին մինչեւ 590: Յուստինոս Բ. հրատարակած էր 572 ամառուան վերջը պատերազմ Պարսից դէմ եւ նախայարձակ եղած նոյն տարուոյն Մծրինի վրայ. իսկ Պարսիկը 573ի գարնան Հայաստանի եւ Դարա բերդաքաղաքի վրայ: Այս առթիւ կը գրէր Եղիշէ տողերս. «Դուռն, զոր բացին կորստեան, Աստուծոյ միայն կարողութիւն է փակել զնա, այլ ըստ մարդկան սահման անցեալ է հնար» (69): Եղիշէ յայտնած էր նոյն միտքը կանխաւ, երբ յառաջ կը բերէր առ Կայսր զրուած թուղթէն տեղիքս. «Եւ եթէ սակաւիկ մի հեղուայք, գուցէ եւ այլոց աշխարհաց բագումց հասանիցէ տապ բոցոյ սորա» (55): Հոս սակայն, ինչպէս կը կարծեմ, աւելի Պարսից քրիստոնէաները նկատի առնուած են. այն իմաստով, որ քրիստոնէութեան դէմ հալածանքը եթէ յաջողութիւն գտնէ, կարող է տարածուիլ նաեւ Պարսկաստանի նահանգներու մէջ բնակող քրիստոնէաներու վրայ:

«Երկարումն» բառը ցոյց կու տայ թէ Եղիշէ ապրած է այդ քսանամեայ պատերազմներու մէկ մասը. տեսած է պատերազմներու հետեւութեամբ ժողովուրդներու կրած հարուածները: Գրած է յամենայն դէպս 590էն յառաջ, երբ վերջ գտան պատերազմները: Այս տարիներու պատմութիւնն է, զոր կը խաստանար գրի առնել է. Յեղանակին մէջ. «ահա ոչ ըստ կամաց արտասուալիք ողբովք ճառագրեմք զբազում հարուածս, որում պատահեցաք եւ մեք ակնատես լինելով» (6). աղէտներ, զորոնք «արեւելք եւ արեւմուտք զիտացին» (67). պատերազմներ, որոնք ազգեր եւ աշխարհներ ոտնակոխ ըրին. «յայտմ տեղուջ, կը գրէ Եղիշէ, ոչ միայն ի վերայ ազգի միով (այս ինքն Հայոց) է ողբումնս այս, այլ ի վերայ ազգաց եւ աշխարհաց. գոր եւ յառաջ մատուցեալ ասացից ըստ կարգի, թէպէտ եւ ոչ խնդութեան մտօք» (69—70): Վերագոյն (§ 55) տեսանք պատերազմի ծաւալումն նախ Միջագետք, ապա Գամիլը, Կողովենէ, Փոքր Հայք, Մեծ Հայք, Հիւսիսային Կովկաս եւ Ատրպատական: Ուշագրաւ է հոս Եղիշէի արտայայտութիւնը «ի վերայ ազգի միոյ» (69), որ արձագանգ գտած կ'երեւայ Վրթանէս Քերզոյի առ Սորմէն թղթին մէջ. «որ ազգի միոյ

ապստամբութեան եղեալ պատճառ» (Գիրք թղթոց, 93), ուր խօսքը Գալին Վարդանայ մասին է:

Յաւ է որ շատ քիչ բան մնացած է մեզի անաղարտ այս «Երկարումն» տարիներու պատմութենէն: Խմբագիրը անգթօրէն եղծած ապականած է սկզբնագիրը: Ինչ որ զեւտենք այս շրջանէն, Սերիոսի քաղուածքներուն կը պարտինք:

Խմբագիրը, որ Ղազարի Պատմութեան հետքերով կ'ընթանայ, չչեղելու համար իր առաջնորդէն, «Աւարայրի» պատերազմէն ետքը պէտք էր անցնիլ ապստամբ բանակին մնացորդներուն նուաճման, գլխաւորներու կալանաւորութեան եւ ապա՝ Վասակի դատապարտութեան: Առ այս Եղիշէի է. Յեղանակին մէջ, որ պատերազմին շարունակութեան նուիրուած էր, իրեն համար զժուրաւ յարմար ատագձ պիտի գտնէր: Ստիպուած էր շատ բան յապաւել այդ Յեղանակէն, քիչն ալ, զոր պիտի կիրարկէր, պէտք էր ձեւի ենթարկէր եւ պակաս Ղազարեցիէն փոխ առնելով լրացնէր: Այսպէս բոլորովին նոր խմբագրութեամբ ձեւի եւ կերպարանքի բերած է է. Յեղանակը, որուն խորագիր զետեղած է. «Կարգազրի դարձեալ առաքինութիւնն Հայոց եւ շարապոյն եւս երեւի անօրէնութիւնն Վասակայ»:

Այս տեղ կ'աւարտի մեր Ուսումնասիրութիւնը Եղիշէի «Հայոց պատերազմի» պատմութեան Ա.—է. Յեղանակներու, որոնք կ'ընդգրկէին Խոսրով Ա. Անուշըրուանի (532—579) թագաւորութեան 46 տարիները, մասնաւորապէս 570—578 շրջանի Հայոց ապստամբութեան եւ նուաճումի պատմութիւնը, որուն գլխաւոր կէտերն են.

Խոսրով կը հրամայէ կանգնել Արտաշատ քաղաքի դրան առաջ ատրուշան եւ կը ստիպէ Հայերը, որ երկրպագեն կրակի: Կը դիմագրէ Հայոց Կաթողիկոսը իր ժողովուրդին հետ թագաւորին հրամանին: Երբ դէնքով պարտագրել կ'ուզէ թագաւորը իր կամքը, կը դիմեն Հայերը զաղտնի Յուստինոս Բ. Կայսեր (565—578), որ կը խոստանայ կայսերական գօրքը ուղարկել անոնց յօգնութիւն: Խրախուսուած այս խոստումէն, Հայաստան կը հրատարակէ յանուն քրիստոնէական ազատութեան՝ ապստամբութիւն: Հայոց կաթողիկոսն էր Յովհաննէս

Բ. Գարեղինների եւ Հայ Բանակին սպարապետ Վարդան Մամիկոնեան, որդի Վասակայ, կոչուած Քաջ:

Հայ Բանակը կը յարձակի Սուրէն Մարգարայի վրայ: Մարգարան սուսերահար կը սպանուի եւ իր զօրքը սպառուող կը կոտորուի (3 փետր. 571): Կը յաջորդեն ընդհարումներ Պարսից հետ. Հայ Բանակը երկիցս կը տանի յաղթութիւն: 572 աշնան սկիզբը Յուստինոս Բ. կը հրատարակէ պատերազմ Պարսից դէմ: Յոյն բանակը փոխանակ Հայոց օգնութեան հասնելու կը մեկնի Մծրին: Այն տեղ կ'ուղարկուի նաեւ Կարնոյ հռոմէական-հայկական զօրազուեղը: 573 զարնան պարսկական յաղթ բանակ մը Միհրան Միհրեանդակի հրամանատարութեան տակ կը քայլ Հայաստանի վրայ, կը յառաջանայ Միջնաշխարհ: Արտաշատի առաջ, յայնկոյս Երասխի, Սաղամախեաց դաշտի վրայ կը բախի անոր հետ Վարդան Մամիկոնեան 66.000ով: «Մեծ պատերազմ» կը տեւէ ամբողջ օր մը ահեղ սաստիկութեամբ: Հայք չունէին արտաբուստ օգնութիւն: Յեցած սեպհական ոյժի վրայ՝ կը պատերազմին մոլեգնօրէն կեանքի եւ մահուան պատերազմը: Երբ կը տարածամի օրը, կը կոխէ մթութիւնը, կ'ընդհատեն ակամայ երկու կողմերն ալ ճակատամարտը եւ կը դիմեն փախուստի, անորոշ թողլով պատերազմի ելքը: Վարդան եւ իւր ուխտապահ զօրքը խոնջ եւ բեկ եւ ի տես դասալիքներու չի համարձակիր երկրորդ անգամ պատերազմի դաշտ իջնալ, եւ մութին պաշտպանութեան տակ կը փնտռեն բերդերու եւ անմատոյց լեռներու վրայ ապաստան, երկրին մէջ եւ երկրին սահմաններէն դուրս:

Յունական բանակը հագիւ 575 ամառ կը յաջողի մտնել Հայաստան եւ նուաճել կայսերական դրօշին տակ. բայց կարճատեւ տեւողութեամբ: 577ին կը նուաճուի երկիրը միւսանդամ պարսկական լուծին տակ, աւեր եւ ամայի: Պատերազմը կը շարունակուէր Պարսից եւ Յունաց մէջ:

Այս փոփոխակի յաջողութիւններն եւ ձախորդութիւնները թէ՛ ոգեւորեցին եւ թէ՛ վհատեցուցին վերապրողներու սրտերը երկրին մէջ: Իսկ յուսախարութիւնը երկրէն դուրս, օտարութեան մէջ տուայտողներու, եղաւ անմխիթար:

Եղիշէի վիճակուեցաւ այդ անմխիթար սրտերու մխիթարութիւն չամբել սուրբ գործին զաղափարական բարձրութիւնն երգելով եւ այդ նպատակին համար պատերազմի դաշտերու վրայ ինկող նահատակներու անմահ յիշատակը պանծացնելով. իսկ վերապրեալներն իրբեւ խոստովանողներ եւ դիւցազներ գնահատելով: Հայրենիքի եւ Եկեղեցոյ ազատութեան համար զոհուած էին անոնք: Պէտք է անմահանար անոնց յիշատակը դարէ դար ի քաջալերութիւն եկող սերունդներու:

Այս պատերազմներու յիշատակը նախահոգ եղած էր Հայոց Կաթողիկոսն Յովհաննէս Բ., որ բովանդակ շարժման ոյժն եղած էր, անմահացնելու անով, որ «գտօն պատերազմացն յաղթութեան» 571 տարուոյ, հրամայած էր իր ճոխութեամբ «խոնկել ի սուրբ տօն Յայտնութեանն Քրիստոսի, զի անխափան կացցէ մեծ Յիշատակարանս այս ընդ աստուածային անանց տօնին»: Ժամանակը ճշգրտու համար կը կանխէր զբել Եղիշէ տողերս. «Իրբեւ այս ամենայն յաջողութիւն(ք) լինէին երկիւղածացն Աստուծոյ, ամենայն կախկոպոտունք եւ երիցունք պատուէր հրամանի տուեալ աշխարհին, զողջոյն ամիսն Քաղոց պահօք եւ աղօթիւք առնել ինդրուածս առ Աստուած»: Քաղոց ամիսը շարժական տօմարի համաձայն 570ին կը համապատասխանէր նոյեմբեր 3—2 դեկտեմբեր: Իսկ եկեղեցական տարւոյն մէջ կը զուգակուէր Ասորամակեղոնական տոմարին դեկտեմբեր ամսոյն եւ Արարական-Դամասկեան տոմարի 9 դեկտեմբեր—7 յունուար ամիսներուն: Վերջնոյս համաձայն Յայտնութեան տօնը կ'իյնար Քաղոց 29 = 6 Յունուար: Այս մասին, նաեւ Եղիշէի այս տեղիքը նկատի առնելով, խօսած եմ լայնօրէն այլուր<sup>15</sup>:

Երբ կը հրամայուի «զողջոյն ամիսն Քաղոց պահօք եւ աղօթիւք առնել ինդրուածս առ Աստուած», ոչ թէ մասնաւոր պահք կը սահմանուի, այլ արդէն սովորութեամբ պահուած Յայտնութեան պահքը այն դիտաւորութեամբ պահել եւ աղօթքով առ Աստուած կանխել: Ուստի «գտօն պատերազմացն յաղթութեան խոնկել ի սուրբ տօն Յայտնութեան» պէտք է այնպէս իմանալ, թէ Յայտնութեան յինանց մէջ օտնելու է: Եւ որով-

<sup>15</sup> Հ. Ն. Ակիւնեան, Քննութիւն Ս. Սահակի վերաբերուած Կանոններու եւ Հայոց Եկեղեցական տարին է. դարու սկիզբը, Վիեննա 1950, էջ 86—92:

հետեւ կը շեշտուի մասնաւոր կերպով «պատերազմացն յաղթութեան», տօնը սահմանուած ըլլալու է 571ի վերջերը, ի յիշատակ նոյն 571 տարուան փետրուար 3ի առաջին յաղթութեան: Թէ առաջին տարուան այդ 2—3 յաղթութիւնները — զորոնք կը յիշէ Եղիշէ 2—3 անգամ, որքան ուրախացուցած են տաղնապի մէջ զտնուող ժողովուրդը, կը տեսնուի Եղիշէի տողերէս. «Եւ զայն զայս ամենայն այցելութիւնս Աստուծոյ, որ ի վերայ աշխարհին Հայոց մեծապէս երեւեցան (տպ. երեւեցաւ), դրեցին սուրբ կախկոպոտունքն եւ ետուն տանել յաշխարհն Յունաց ի մեծ Քաղաքն (Կոստանդնուպոլիս) առ սուրբ ուխտ Եկեղեցոյն, զի եւ նոքա աղօթս առնելով ինդրեցցեն յԱստուծոյ՝ որպէս սկսաքս՝ ի նմին եւ կատարեցուք» (62): Ինչպէս էր, որ Հայերը հաղորդէին բոլոր պատերազմական յաջողութիւնները Կայսեր եւ Հայրապետին, իրբեւ իրենց դաշնակիցներու եւ բարեկամներու (հմտ. նաեւ § 51, իմանալով ըստ այսմ):

Որչափ ալ վիճելի համարինք սահմանուած տօնին ճշգրիտ օրը, բայց եւ այնպէս չենք կրնար անտեսել աւանդութեամբ մեզի հասած Վարդանանց զօրականաց յիշատակի օրը, որ Չատկական տօնին համաձայն կը շարժի 29 յունուար—4 մարտ ամիսներու միջոցին մէջ, հինգշաբթի օր մը: Չենք կրնար հաստատել, թէ այժմեան Տօնացոյցին կարգաւորութիւնը կ'արժէ<sup>9</sup> Չ. դարու հակարդաւորութիւնը կ'արժէր, 571ին մարտ: Յամենայն դէպս եթէ կ'արժէր, 571ին այդ յիշատակը պիտի տօնուէր փետրուար 5ին եւ 572ին նոյն ամսոյն 25ին: Այս մերձաւորութիւնը 571 տարուոյ փետր. 3ի կուրին եւ իր կարգին՝ Յայտնութեան տօնին, կը թելադրէ ընդունել թէ այժմեան «Վարդանանց» յիշատակի օրը 572ին հրատարակուած էր ազգային տօն, Նահատակաց օր, ի յիշատակ 571ին յանուն քրիստոնէութեան մղուած պատերազմներու մէջ նահատակուածներու: Անոնց միացան ապա 573ի «մեծ պատերազմի» մէջ ինկած բիւրաւորները: Անոնց սպարապետն էր Վարդան Մամիկոնեան, որ թէեւ ապրեցաւ ողջանդամ, բայց զրօշին տակ ինկած անմահները կարող էին կոչուիլ Վարդանեանք:

Աւարայրի ճակատամարտը տեղի ունեցած էր 451, մայիս 26ին շարաթ օր: Իսկ Նահատակներու օրը սովոր էր հին Եկեղե-

ցին տօնել անոնց նահատակութեան կամ նշխարաց փոխադրութեան օրը: Կը սպասուէր, որ նախնիք նշանակած ըլլային անոնց յիշատակը մայիս—յունիս ամիսներու մէջ:

Եղիշէ երգեց նախ Արտաշատի դաշտին դիւցազները: Նոյն Եղիշէ ներբողեց ապա Աւարայրի հերոսն եւ անոր զինուորակիցները, ինչպէս նաեւ Ս. Քահանայից նահատակութիւնն եւ նախարարներու խոստովանութիւնը. եւ կցեց այդ ներբողեանը իր ճանուրդն Պատմութեան: Կարմիր Վարդանանք եւ Քաջ Վարդանանք մի եւ նոյն նպատակին համար պատերազմի դաշտ իջած՝ դտան Հաւատացեալներու սրտերուն մէջ միաժամանակ սիրոյ պաշտամունք:

68. ՎԱՍԱԿԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս յաճախ անգամ շեշտեցինք, այս «Վասակը» կ'ամփոփէր իրեն մէջ երեք անձ, 1. Վասակ, Սիւնեաց տէր եւ Մարգարան Հայոց (450/51). 2. Վահան Սիւնեաց տէր (568—571). 3. Փիլիպպոս Սիւնեաց տէր եւ Մարգարան Հայոց (572—576): Այդ եռանդանայ Վասակ Սիւնին Սմբագրի նկարագրութեամբ շարագեւ մըն է քան սովորական մահկանացու: «Եղիշէի» Պատմութեան մէջ այնչափ չէ պայծառացուած Վարդան, որքան խաւարեցուած է Վասակ, յստկապէս այս է. Յեղանակին մէջ, ինչպէս խորագրին մէջ ալ շեշտուած է: Ան քաւութեան նոխպն եղած է թէ Հայոց եւ թէ Պարսից բազիններու վրայ: Հայոց ապստամբութեան, անյաջողութեան եւ աղէտներու պատճառն ներկայացուած է Վասակ, Հայոց խոստովանութեամբ. նոյնը Պարսից թագաւորին քրիստոնէութեան դէմ հանած հալածանքի, պարսիկ մոգերու կոտորածին, Պարսից կրած պարտութիւններու եւ այլ ձախորդութիւններու պատճառը, վկայուած Պարսիկներէն. ուստի անմեղ են Հայերը, որոնք ապստամբեցան թագաւորին դէմ եւ անմեղ Պարսից թագաւորն եւ զօրավարները, որոնք սլրացաւր ըրին Հայաստանը: Բարձրագոյն դրան ատեանէն կը դատապարտուի Վասակ ցկեանս բանտի. իսկ ապստամբութեան պարագլուխները արժանի կը դառնան խիստ կարանաւորութեան երկար տարիներով եւ Ս. Քահանայք՝ մահուան: Այսպէս կը վճռէր «Յարգեալ» իր «արդար» պատաստանը:

Ամենն աւելի այս Յեղանակին մէջ կը տեսնուի Խմբագրին անալիսի ճաշակը: Ոչ քերականական կապակցութիւն, ոչ արամարանական յորինումներ չեն եւ ոչ ալ ճակատագրական կառուցուածք կը նշմարենք այն տեղ, դուրս հանելով վերջին երրորդ մասը, որ իր գրչին ստացուածքը չէ:

Վասակ «Աւարայրի» մեծ պատերազմէն ողջանգամ կը պրծի «զանձն ի մէջ դազանացն թաքուցեալ»: կը վազէ անմիջապէս պարսիկ զօրավարին քով «եւ միւրիւս մատուցանէր մտացն լքելոց եւ ուսուցանէր նմահարս նենգութեան, թէ որպէս կարացէ մարտնչել ընդ ամուրսն խարէութեամբ» (94): Ան «դրդեաց զՄուշկանն Նիւսալաուրա եւ զամենայն աւազանին Արեաց (!) առեալ զզօրսն հասանէր ի վերայ ամրոցին (անանուն !), յոր անկեալ էին (!) գունդ մի ի գօրացն Հայոց» (95): Ամրոցի պարիսպէն դուրս կը կարկառի Բակ անուն զինուոր մը եւ «թշնամանս զնէր անօրինին (Վասակայ) եւ ցուցանէր առաջի Պարսից զօրագլխին գամենայն չարսն, զոր անցուցեալ էր նորա ընդ աշխարհն Հայոց: Յորոց (!) բազում վկայութեամբ լուեալ՝ արդարացուցանէին զամբաստանութիւնն, ոչ միայն միայն ի Հայոց կողմանէն (!) այլ եւս առաւել զօրքն Պարսից» (95): Յովսէփ եւ Ղեւոնդ եւ այլ քահանայք «զամենայն ամբաստանութիւնն արկանէին զանօրէն զՎասակալ» (95): «Այլ որպէս ցուցաք բազում անգամ զամբարշտին չարութիւն, յորդորէր եւ ստիպէր զզօրսն ի մօտաւոր կողմանց աշխարհին (!), զի հրամանաւ արքունի զօր եկեցէ յօգնութիւն նոցա» (98. խօսքը Վասակի մասին իմանալու է): Չօրքը կը հասնի. եւ կը խաղայ ի միջոց աշխարհին. առաջնորդն է Վասակ. որ «իրբեւ ետես, եթէ երթայ զօրավարն զհետ կամաց նորա (իմացիր՝ իւրոց), սկսաւ այնուհետեւ ի բազում տեղիս արձակել զսպատակաւորսն» (98): Հոնորը կ'ասպատակեն Ատրպատական. երբ կը լսէ զայն Մուշկան Նիւսալաուրա, որ կը գտնուէր Հայաստան, «սրտմտեալ զայրանայր եւ մեծաբարկութեամբ կուտէր զգլխսն ի վերայ անօրինին Վասակայ, իբրու թէ նա իցէ սկիզբն եւ առաջնորդ ամենայն չարեացն որ գործեցան... գրէր եւ ցուցանէր յարքունիս գամենայն իրս ստուգութեամբ. եւ զգլխսն զործոյն արկանէր զուրացելովն» (100. հմմտ.

նաեւ 103): Բայց այս կէտի մէջ ի՞նչ յանցանք ունէր ինքն Վասակը:

Ի վերջոյ, երբ կը նուաճուի Հայաստան թագաւորի իշխանութեան տակ, կը հարցնէ թագաւորը, թէ ի՞նչ էր պատճառն իրացն խոտովութեան: Միհրնեբսէզ կը յանձնարարէ սպասամբութեան պարագլուխները ի Դուռն կոչել. կը կանչուի նաեւ Վասակ: Կը կազմուի ատեան: Նախարարք, Ս. Քահանայք, կոտորածէ վերապրած մոգեր եւ փուշտիպաներ, նաեւ զինուորականներ, անոնց թուին մէջ Մուշկան Նիւսալաուրա, ինչպէս նաեւ Վասակ ներկայ են ատեանին: Տեղատարափ մը ամբաստանութեանց կը տեղայ Վասակի վրայ: Ան չունի պաշտպան: Դատավարութիւնը կը տեւէ օրեր: Ամբաստանութիւններու մեծ մասը հանուած է Փարպեցոյ Պատմութենէն. մաս մ'ալ «Եղիշէի» Պատմութենէն, ուր «բազում անգամ ցուցուած էր ամբարշտին չարութիւնը»: Վասակ կը դատապարտուի: Կը կողոպտուի իր պատիւներէն, կը նետուի բանա:

Ամրոցը թատերական բեմադրութիւն մըն է: Վասակ շատ կանուխ արդէն ընդունած էր իր դատապարտութեան վճիռը, արդէն «Աւարայրի» մեծ պատերազմէն յետոյ, եթէ հաւատք ընծայենք Խմբագրին տողերուն: Միհրնեբսէզ երբ վերադարձաւ Փայտակարանէն եւ տուաւ զեկոյց թագաւորին, սա «դառնացաւ յանձն իւր եւ ասէ անսուտ երգմամբ. եթէ ասորեացի անօրէնն այն (Վասակ) ի մեծ պատերազմէն, մեծաւ անարգանքով տամ ըմպել նմա գրամակ դառնութեամբ մահու» (75. հմմտ. նաեւ 105):

Ո՛րքան լուրջ է Վասակի Դատաստանին նկարագրութիւնը Ղ. Փարպեցոյ գրչէն, ա՛յնքան ընդհակառակն թեթեւամտութեամբ կարկատուած է Եղիշէի գրչին վերագրուած ա՛յս դատավարութիւնը:

Բացառութիւն կը կազմեն սակայն Յեղանակի վերջին 101, 105—109 էջերը, որոնք փոխառութիւն են Եղիշէի հարազատ մէկ գործէ՝ նուիրուած Ս. Քահանայից եւ կալանաւոր նախարարներու եւ անոնց ընտանեաց: Այս մասին պիտի խօսիմ յաջորդ գլխուն մէջ:

Չհեռացած այս Յեղանակէն, կ'ուզեմ նկատողութեան առնել ամբաստանութիւն մը, զոր Վասակի ազգականները յատեան կը հանեն: Հատուածն է.

«Եւ մինչ դեռ այս ամենայն ամբաստանութիւն զնմանէ էր զայնչափ բազում աւուրս՝ յառաջ մատեան եւ իւր ազգականքն, որ եւս յառաջագոյն դատախազ լեալ էին զնմանէ առաջի արքային, սկսան կարգաւ ցուցանել եւ յայտ առնել, որպէս զի բարեկամացեալ էր նա ընդ Հեռանայ Հոնի միաբանութեամբ Բաղասական արքային, ի ժամանակին, զի կոտորեաց Հեռանն այն զզօրսն Պարսից յԱղուանս, եւ սպաստակաւ եհաս յերկիրն Յունաց, եւ բազում գերի եւ աւար խաղացոյց ի Հոռոմոց եւ ի Հայոց եւ ի Վրաց եւ յԱղուանից. որպէս զի ի վերայ իսկ եհաս խորհրդոցն ինքն իսկ թագաւորն, եւ սպան զԲաղասական արքայ: Եւ Վասակ (= Վահան) մարդպան էր Հայոց (= Վրաց) ի ժամանակին եւ թշնամեացն արքունի խորհրդակից գտաւ: Յուցին եւ յայտ արարին ազգականքն նորա, որպէս զի հմուտ եւ տեղեակ իսկ էին չար խորհրդոցն նորա. զամենայն ցուցանէին եւ յայտ առնէին առաջի թագաւորին» (104):

Թէ ի՞նչ աղբիւրէ առնուած են տողերս եւ ո՛ր ժամանակը կ'ենթադրեն, չեմ կարող ստուգել: Այս տեղ Վասակ Սիւնի, Վահան Սիւնի եւ Փիլիպոս Սիւնի միանգամայն խօսքի նիւթ են: Հոնական տրչաւանք մը, որ հիւսիսէն իջած եւ Վրաստան, Հայաստան եւ Յունաստան ասպատակած է, ծանօթ չէ պատմութեան: Ազգաթիւս կը յիշէ Կո(ւ)տրի-գուր եւ Ուտտուր հոնական ցեղերը որոնք 558ին ասպատակեցին բիզանդական հողեր, սպաննացան Կ. Պոլսոյ եւ գործեցին յարձակում ի Քերսոնեսոս գալով յայնկոյս Դանուբեան երկիրներէն. ուստի ոչ ձորաց պահակէն եւ ոչ ընդ Վիրս եւ ընդ Հայս ճանապարհով:

Վերագոյն խօսք եղաւ նման հոնական արչաւանքի մը մասին, զոր կը յիշէր Տարարի Խոսրով Ա. օրով, որոնք մտած են Հայաստան եւ Ատրպատական (§ 26):

69. Ը. ՅԵՂԱՆԱԿԸ

Եղիշէի Պատմութեան կցուած է «Արտաքոյ է. Յեղանակի Ութերորդ. դարձեալ վասն նորին պատերազմի եւ չարչարանաց սուրբ քահանայիցն»:

Այս Ը. Յեղանակի մասին Եղիշէ իր Նախարանին մէջ որ եւ է կերպով յիշատակու-

թիւն չէր ըրած: Գրուածքիս ինչպէս խորագրի, նոյնպէս սկզբնաւորութեան մէջ յանունն է յիշուած թէ ո՞վ է «նորին» դերանունին տէրը: Կը սկսի այսպէս. «Արդ ի ժ.Ձ. ամի տէրութեան նորին թագաւորի. դարձեալ անդրէն խաղայր զնայր յաշխարհն Գուշանաց մեծաւ պատրաստութեամբ ի գործ պատերազմի...» (էջ 110—158):

Դժուարին չէ պատմութեան ընթացքէն իմանալ թէ խօսքը Յագիերո Բ. Պարսից թագաւորի մասին է, որ դահակալեց 439ին. ուստի արչաւանքը կ'իյնայ 455/56ին:

Այս յանկարծական սկզբնաւորութիւնը թոյլ կու տայ ենթադրելու, թէ գրուածքս իր սկզբնագրին մէջ պէտք է ունենար նախաշարժ մը, ուր խօսուած ըլլար թէ թագաւորի անձին եւ թէ Ս. Քահանայից չարչարանաց արժանիքին մասին: Այս ինքն Յագիերո Բ. ի հրովարտակին, Հայոց զիմադրութեան, Աւարայրի ճակատին, Վասակի դերին, Նախարարներու եւ Քահանաներու կարանաւորութեան, դատավարութեան եւ դատապարտութեան նկատմամբ:

Հեղինակը աչքի առաջ ունեցած է Ղ. Փարպեցոյ Պատմութեան Բ. եւ Գ. դրուագները. ինչպէս կ'երեւայ ուրիշ աղբիւրներ ալ: Իր նպատակն է Ներբողել Ս. Քահանայից նահատակութիւնն եւ Նախարարաց խոստովանութիւնն եւ անոնց ընտանեաց դիւցազնական կեցուածքը: Ինչպէս է. Յեղանակի վերջին 101, 105—109 էջերը ցոյց կու տան, այդ հեղինակը կանխած էր, Ղ. Փարպեցոյ հետեւելով, յիշել Ս. Քահանայից երթն ի Տիգրոն, ձաղել Վասակի գործն եւ հիւսել անոր դատապարտութեան պարսաւը: Եւ սնոր դատապարտութեան պարսաւը: Եւ սնոր պայծառացեալ ծաղկալից լինի...» (147), ենթադրել կու տայ, թէ նաեւ Աւարայրի ճակատամարտը ներբողած ըլլայ:

Հեղինակին գրելու ոճը, շղուտ եւ ճկուն, հեռուորական ասացուածքը, գրութեան չափարեւութեան միտութիւնը թէ է. Յեղանակին վերջերը եւ թէ Ը. Յեղանակին մէջ հաւասարապէս կը փայլին: Այդ հեղինակին անունն է Եղիշէ քահանայ, հեղինակը «Հայոց պատերազմի», այսինքն Երկրորդ Վարդանանց պատերազմի պատմութեան:

Եւ եթէ Ը. Յեղանակը իբրեւ «արտաքոյ Եօթներորդի» կցուած է Պատմութեան, անհաւանական չենք համարիր, թէ աւանդու-

թիւնը զայն իր կորսուած մասերով Եղիշէի Պատմութեան կից դասած էր: Եղիշէ Բ. Վարդանանց պատմիչը ուզած է նաև Ա. Վարդանանց միեւնոյն նպատակին համար նահատակութիւնը պանծանցնել, երկուքն ալ ի միութեամբ իրեն անոնց, որոնք իրրեւ խոտովանողներ կը պանդխտէին օտարութեան մէջ իրեն հետ:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

**ԲՐՐՉՐ ՀՈՅՔԻ ՎՆԵՔԵՐԸ**

(Շարունակութիւն եւ վերջ):

Ե.

**ՍՊՅԵՐԻ, ԲԱԲԵՐԴԻ ԵՒ ԹՈՐԹՈՒՄԻ ՎԱՆՔԵՐԸ**

Այս երեք վիճակներու կամ գաւառակներու<sup>1</sup> վանքերու մասին լաւագոյն համարեցայ միասին խօսիլ: Ասոնք կը գտնուին Կարնոյ հիւսիսային կողմը եւ յետագային անոր կուսակալութեան մաս կազմած, (նաև կրօնական կամ եկեղեցական վարչութեամբ), մինչդեռ յառաջ կը վերաբերէին Բարձր Հայքի, Տայքի եւ Սաղարի: Բարձր Հայքի գաւառներէն է նաև Շաղաղուք կամ Շաղաղոմ, որ Տայքի Ոքաղէ (Թորթում) գաւառին մերձ է:

Յ. Կարնեցիի տեղեկութիւններու համաձայն այս վայրերու մէջ բաւական թուով վանքեր հիմնուած ու բարձրացած են (Տեղագիր Վեր. Հայոց, էջ 15), սակայն դժբախտաբար անոնցմէ սակաւներու անունն ու պատմութիւնը մեզի հասած է:

1. ԱԳՐԿԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Աւետիք արեղան Շարակնոց մը կը գրէ՝ «Ի գաւառն Սախուա եւ Թորթոմայ (Թորթումայ) ի վանս, որ կոչի Ագրիկի<sup>2</sup> ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի ի թուին Հայոց Ձէ»: Ստացողն է Սաղատուր եպիսկոպոսը (Ակիւնեան, Հաւաք. յիշատ. էջմ. Գէորգ.

<sup>1</sup> Պայազիտ-Ապերի վանքերու մասին՝ այլուր:  
<sup>2</sup> «Գրեցաւ Աւետարանս ի թուին Հայոց Ձէ (1455) ի գաւառս Սախուայ եւ Թորթոմայ ի վանս որ կոչի (ճանօթութեան մէջ զբուսած է՝ եղծեալ, բայց թէսութեամբ Ագրիկ սո՛ւ աքմ. Ա. Վ. Թոփմանեան) ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի լուսազարդ տաճարին եւ... ձեռամբ անարհեստ գրչի Աւետիք արեղայի» (Նոտարք, էջ 179):

592): — Սախ անունը գիւղ մը կայ Եկեղեաց գաւառի մէջ եւ համանուն գիւղ մը ու վանք մը կայ յանուն Ս. Աստուածածնի Թորթումի գաւառին մէջ: Հմմտ. Սախու Ս. Աստուածածին ի Թորթում կամ Ոքաղէ:

2. ԱՆԼՈՅ ԿԱՄ ԱՅԼՈՅ ԿԱՄ ԱԼՆՈՅԻ ՎԱՆՔԸ

Սաղարի մէջ:

Այս վանքին իսկական անունը ըլլալու է Անլոց, իսկ Այլոց կամ Ալնոց անունները աղաւաղում ըլլալ կը թուին: Առաջինն է որ յիշատակարաններու մէջ գործածական է:

Հետեւեալ յիշատակագրութիւնները վանքին պատմութիւնը մեզի կը ներկայացնեն. «Աւարտեցաւ սուրբ մատենան, որ կոչիւր Մաշտոց ձեռամբ արամար եւ փճուն գրչի Կիրակոսի եպիսկոպոսի Տրապիզոնեաց ի գաւառս Սախուայ ի յանապատս Անլոց ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի եւ սուրբ Կարապետին, ի թուականիս Հայոց ՁԲԵ (1476), ի խնդրոյ... քահանայի Իգնատիոսի... եւ ամուսնոյ իւրոյ Մինային... աղաչեմք յիշել զճնաւդս Ընքնատիոս քահանային գճայրն իւր զպարոն Ներսէս եւ զմայրն իւր զՏաւնայն եւ զեղբարսն իւր զՄեղիտոնն... եւ զփեսայն զՃանիարն... զհաւերդայրն զՍաղաղեղն... այլ եւ հայցել յԱստուծոյ պահել զբարունապետս գաւառիս Բարեթո զտէր Սարգիս, նայեւ զտեսուչ սուրբ ուխտին Բերթականն զՂազար եպիսկոպոսն եւ զքահանայս զեղջին Աւճաղեղ զԹորոս երէցն» (Ակիւնեան, Հաւաք. Յիշատ. Ձեռ. Լազարեան 109 Մաշթոց):

Ասկէ յառաջ 1340ին կը խնդրուի. «Յիշեցէք զմիեղէն եղբայրութիւնն... զընակիչս սուրբ ուխտին Անլոց վանից» (անդ, էջմիածին, Թ. 1529):

Մովսէս արեղան 1486ին արտագրութիւն մը կ'ընէ «Ի յանապատս որ կոչի Անլոց ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ Յովհաննու Կարապետին... ի յառաջնորդութեան վանացս տէր Մեղիտուն արեղայի» (էջմիածին, ամսագիր, 1944, էջ 34—37):

Աւետարանի մը մէջ յիշատակագրուած է. «Արդ ես... Յովհաննէս սկսայ զսուրբ Աւետարանս եւ կատարեցի ի ՌձԲ (1653) թուականիս, ի կաթողիկոսութեան Տ. Անանիայի եւ յառաջնորդութեան Տ. Մխիթարայ երկրիս Սաղարեաց ի փոքր մենաստանիս Ալ-

նոցի վանք ի գուռն սուրբ Յովհաննէսի (Թորոս Աղբար, Բ., էջ 340—341, բայց ՌձԲ պէտք է սրբազրել ՌձԲ, Անանիա հակառակաթոս կաթողիկոս է, հմմտ. Սիոն, 1933, էջ 415):

Մկրտիչ արեղան կը պատմէ.

«Ես Մկրտիչ արեղաս, որ մականունն Տանձիկ ասի, եկի (ի Բարբերդ) ի գուռն Աստուածածնին եւ սուրբ Կարապետին, որ մականունն Այլոց ասի, Գ. տարի աստ կացի եւ յետոյ յիշատակ դրի զսուրբ Աւետարանս եւ ոսկած տեսր մի... ի հայրապետութեան տէր Յովհաննէս եպիսկոպոսին, որ մականունն Կէլէ ասի, ի թվականիս Հայոց ՁԾԷ» (Ակիւնեան, Հաւաք. Յիշատ. Ձեռ. Սաղարեանի Երուսաղէմի հայ. Ձեռ. Յուլիանէն, Թ. 298): Սոյն Աւետարանին մէջ (Թ. 250ա) կայ նաև. «Արդ վերջին ստացող սուրբ Աւետարանիս տէր Ներսէս արհի եւ պանծալի եպիսկոպոս ի գաւառէս Սախուայ, որ այժմ մականունամբ Բարբերդ յորջորջի... աստուածատէր եւ ցանկալի, գիտուն եւ ճարտար իմաստիւք լի տէր Ներսէս արհի եւ պանծալի եպիսկոպոսին, առաջնորդ Անլոց վանացս սուրբ Կարապետիս եւ սրբոհո Աստուածածնիս եւ այլ բազմահաւաք սրբութեանցս, որ աստ կան հաւաքեալ եւ զնեաց զսուրբ Աւետարանս յիշատակ հոգւոյ իւրոյ եւ եղ ի գուռն սուրբ Աստուածածնին եւ սուրբ Կարապետին...»:

Թորոս ՌձԲ թուին կը գրէ Ազամգիրք՝ «Ի գուռն սուրբ Աստուածածնին եւ սուրբ Կարապետին ի վանսն որ է Անլոց եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Պետրոս եպիսկոպոսին եւ միարանիցս...» (Ակիւնեան, Յուլ. հայ. Ձեռ. ի Բէյրութ, էջ 10, անտիպ):

Անլոց վանքը շատոնց ամայացած եւ շարաթացած է (Բիւզանդիոն, 1900, Թ. 1127 եւ 1901, Թ. 1500):

3. ԲԵՐԴԱԿԻ ՎԱՆՔԸ

Սաղարի մէջ. մինչ Պալեան զայս խընդրական կը գտնէ եւ կը փնտռէ Եղեւսիցի մէջ (Բիւզանդիոն, 1900, Թ. 1083), իսկ Դպիր զայն ձերբազնի եկեղեցւոյ հետ կը նոյնացնէ (ուրիշներու հետ, հմմտ. Փունջ, 1892, Թ. 2307):

Բաւական հին վանք է: Արդէն 1305ին Յովհաննէս արեղան ի գաւառիս Սախուայ

ի հռչակաւոր մենաստանս, որ կոչի Բերդակն, ընդ հովանեաւ հրաշագործ եւ գեղեցկաշէն տաճարիս, որ յանուն սրբուհոյ Աստուածածնին եւ սուրբ Լուսաւորչին Հաստանեայց» Աստուածաշունչ մը կ'արտադրէ (Գ. արքեպ. Յովսէփեան, Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ, պրակ Ա, էջ 70): Իսկ 1430ին կը գրուի՝ «Ի գաւառս Սաղարեաց, ի հրեշտակարանակ մենաստանս, որ կոչի Բերդակայ վանք, ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնիս եւ սուրբ Լուսաւորչիս, ի հայրապետութեան Տեառն Կոստ(անդեայ) եւ յեպիսկոպոսութեան գաւառիս Բարբերդայ եւ Դերջանայ տէր Աւետեաց... եւ Բերդական անաջնորդ Գրիգոր հարպետն իւր միարանոքն անասան պահէ...» (Արեւելք, 1904, Թ. 5579. հմմտ. վերը):

Տարիներ յետոյ 1489ին Մովսէս արեղան կը գրէ Յայտաւուրք մը՝ «Ի գաւառս Սախուայ որ այժմ ասի Բարբերթ, ի յանապատս որ կոչի Բերթակ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Լուսաւորչին յառաջնորդութեան վանացս տէր Լազար եպիսկոպոսին եւ Կիրակոս հարպետին» (Conybeare, Cat. Brit. Mus. էջ 165. Արեւելք, 1903, Թ. 4959):

Ղազար արդէն 1476ին առաջնորդ է (հմմտ. վերը Անլոցի վանքը): Անոր օրով Մովսէս արեղայն Համէլնցի Բերդակայ վանքի մէջ Աւետարան մը կը գծէ (Արեւելք, 1904, Թ. 5579), ինչպէս եւ նոյնին օրով է որ միեւնոյն տեղը կը գրուի Մաթուսանց կամ Մաթուսանց գիւղի Աւետարանը (Հ. Յ. Տաշեան, Տայք, անտիպ, էջ 144—145):

Բովանդակալից է սա յիշատակարանը. «Արդ ես Յակոբ քաղաքացի թոռն Կարապետին, որ Մեղիսեղին զսուրբ Աւետարանս զնեցի եւ ի Բերթական վանքս եղի ի գուռն սուրբ Աստուածածնի եւ սուրբ Լուսաւորչի յիշատակ հօրն իմոյ Մեղիսեղին եւ մօրն իմոյ Եղիսարէթին...: Արդ ես Յակոբս եւ մայրս իմ Եղիսարեղս զնեցաք զսուրբ Աւետարանս եւ զերկու շուրջառս եւ եղաք ի սուրբ յուխտս ի Բերթական վանս...: Ես սուտանուն Ներսէս արեղայս շորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ Աւետարանս ի գաւառս Սախուայ ի վանքս Բերթակ, ի գուռն սուրբ Լուսաւորչիս եւ սուրբ Աստուածածնիս եւ յառաջնորդութեան սոյն ուխտիս նոյն եղիկիս: Ի միա-